816
L II·5

ՆՈՐ-ԴԱՐ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՏԵՏՐԱԿ — 1897 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ: — № 1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1) *ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ:*—2) **Ա. Աղելեան** *ՃԱ՞Ր ՉԿԱՅ...* (*ուսուցչի յիշատակարանից*):—3) **Յովհաննէս Շահնազարեան** *ԱՆՄԵՂ ՋՈՀԵՐ* (*Գ. Զուբար՝ «Վէպիկներ և պատկերներ». «Հասօ»*). (*շարունակելի*):—4) **Ա. Լազարեանց** *ՁԵՌԱԳԻՐ* (*Ժակ Նորմանի վէպիկը*):—5) **Յովհաննէս Գնունի** *ԻՆՉ Է ԿՏԱԿԵԼ ԻՐ ԱԶԳԻՆ Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԸ:*—6) **Արտաշէս** *ՄԱՐԴ ԹԷ՞ ԱՆԱՍՈՒՆ* (*Մարսել Պրեվօ՝* («Lettres de femmes»-*ը*):—7) **Օր. Կատերինէ Ներսէսեան** *ԽՂՃԱՑԷՔ...* {*տիկին Դիւֆրէնի նամակը պ. Ժակ դէ-Լալօբին*}, (*Մարսէլ Պրեվօ՛ից*):—
—8) **Ս. Գրիգորեան** *ՄԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱՅԻ ՄԷՋ* (*Ի. Իվանովից*):—9) **Մելիք** *ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ* (*Իվան Տուրգենեվ՝ «Արձակ բանաստեղծութիւններ». Թարգմանեց Ալէքսանդր Ծատուրեան. Մոսկուա, 1895 Թ.: Գինն է 50 կ.*:—10) *ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:*

Խմբագրեց՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ.
Հրատարակեց՝ ԲԺԻՇԿ ՍԻՄԷՕՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ.

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1897

Дозволено цензурою. С.-Петербургъ, 7 Іюня 1897 г.

Типографія Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыхъ.

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ·

Երբ որ մի ազգի, մի հասարակութեան անդամները սկսում են իրանց ամեն մի քայլը, ամեն մի վարքը կշռել, քննութեան ենթարկել, այն ժամանակ, առհասարակ, ասում են, թէ նա դուրս է պրծել մանկութեան խանձարուրից, թէ նա առաջադիմում է, ապրում է. . .

Եւ այդ ազգը, այդ հասարակութիւնը շուտ կ'հասնի իր խընդրած բաղդին, որովհետև անփոփոխական չէ նրա կեանքը, պատահական չեն նրա աջողութիւնները. . .

Պատմութիւնն ունի գեղեցիկ օրինակներ. . .

Գրականութիւնը, «հասարակութեան հայելին» լինելով, արտացոլում է իր մէջ այն ամենն, ինչով կեանքն է ապրում ու սնվում,—դա արդէն ծամծըմած մի արդարութիւն է.—ուրեմն և նա էլ պէտք է ենթարկուի նոյն կանոններին, որոնցով կեանքն է կառավարվում: Չիք առաջադիմող գրականութիւն առանց քննադատական ճիւղի:—Չկայ կրիտիկա, բացակայում են կրիտիկոսներն, և գրականութիւնը կ'մնայ անտէր, ինչպէս նաւը ծովի տարածութեան մէջ առանց ղեկավարի: Գրականութեան աճելու, զարգանալու, առաջադիմելու առաջին և գլխաւոր պայմանը կրիտիկան է:

Մեր աղքատիկ գրականութեան ոչնչութիւնը նամանաւանդ զգացվում է կրիտիկական ճիւղի մէջ: Մեր վէպը, մեր բանաստեղծութիւնը, մեր դրաման, իրաւ է, աչքի ընկնողներից չեն, և հազիւ թէ երբ և իցէ կարող են համաշխարհային հռչակ վայելել,—բայց նրանք էլի ունեն և՛ անցեալ և՛ ներկայ... Իսկ մեր կրիտիկա՞ն...

Մենք ոչ ունեցել ենք երբ և իցէ կրիտիկոսներ, բառիս բուն նշանակութեամբ, ոչ էլ այժմ ունենք,—այսինքն՝ այնպիսի գրականներ, որոնք, ինչպէս Բէլինսկի, Դոբրոլիւբով, Պիսարեվ, Սկաբիչևսկի, իրանց լիովին նուիրած լինեն կրիտիկային: «Կրիտիկական յօդուածներ», «քննադատութիւններ» երբեմն առաջ եկել են մեզ մօտ, ճիշտ է, բայց դրանց մի մասը «յօդուածներ» չեն, այլ հասարակ գրախօսականին մօտեցող նկատողութիւններ. միւս մասն էլ՝ թէպէտ և յօդուածներ են, բայց զուրկ շկօլայից և գրած են առանց որ և է նախապատրաստութեան. . .

Մեր ժողովածուի առաջին և գլխաւոր—բայց ոչ միակ—նպատակն է հարստացնել մայրենի գրականութիւնը կրիտիկական գրուածքներով: Սակայն թող չերևակայի ընթերցողը, որ այդ գրուածքները լինելու են անպայման ընտիր և կատարելագործուած. դա անիրագործելի մի պահանջ է: Անպայման ընտիր և անպայման կատարելագործուած կրիտիկա իսկի ռուս ժամանակակից գրականութիւնը չի տալիս, մի գրականութիւն, որ՝ մերի հետ համեմատած՝ ահագին հսկայ է,—էլ ո՞ւր մնաց, որ մերը տայ: Մենք կ'դնենք մեր բոլոր ջանքերը հետաքրքիր անելու յօդուածներն, օրուայ «այրող» հարցերի մասին խօսելով, նոյնպէս և կաշխատենք, որ այդ յօդուածները լինին նախապատրաստուած:

Ոչ մի գործ, ոչ մի ձեռնարկութիւն, մեր կարծիքով, չի կարող և ոչ մի ամուր աջող հետևանք ունենալ առանց նախապատրաստութեան: Գրականը, եթէ չի ուզում, որ նրա գրուածքը կարդան և իսկոյն մոռանան, պիտի՝ նախ քան գրիչ ձեռքն առնելը՝ նախապատրաստուի. . .

Նուիրելով ընթերցողին կրիտիկական գրուածքներ՝ մենք մի և նոյն ժամանակ անտես չենք առնիլ գրականութեան և միւս ճիւղերը: Մեր ժողովածուի մէջ մենք տեղ կ'տանք և բելետրիստիկային և գիտնական աշխատութիւններին: Այդ ամենը, կարծում ենք, կ'նպաստեն հայ ընթերցողի զարգանալուն, նրա հոգեկան և մտաւոր ընդունակութիւնների աճել-մեծանալուն. . .

Ի՞նչպէս ենք մտադիր իրագործել մեր նպատակը:

Անհերքելի և աշկարայ փաստ պէտք է համարել, որ մեր կեանքի, նոյնպէս և գրականութեան ընթացքը սուր կուսակցական է:

Մի քանիսները կուսակցական այդ տիրապետող ոգու գոյութիւնը անհրաժեշտ են համարում ժողովրդի առաջադիմելուն. կուսակցութիւնները,—ասում են դրանք,—վկայում են, թէ հասարակութիւնը չի մեռած, ապրում է, նրա մէջ կեանք կայ և թէ եռում է այդ կեանքը: Միւսներն էլ, հերքելով կուսակցութիւնների անհրաժեշտութիւնը, նրանցից առաջ եկած վատ հետևանքներն են աշխատում մերկացնել: Թէ ով է դրանցից արդար, ով է մեղաւոր,—այդ հարցը առ այժմ մեզ չի զբաղեցնում,—դրա մասին մի ուրիշ անգամ և մի ուրիշ տեղ կ՚խօսենք.—միմիայն անտարակոյս է, որ երկու կողմերի ենթադրութիւնների մէջ էլ և՛ ճշմարտութիւններ կան և՛ մոլորութիւններ: Մենք այստեղ միմիայն մատնացոյց ենք անում մի փաստի վրայ, որ համարեա թէ ամեն մի կարդացող, մտածելու փոքր ինչ ընդունակ հայի համար ակներև է: Եւ մատնացոյց անելով այդ փաստի վրայ՝ մենք ուզում ենք առաջ բերել շատ անախորժ մի երևոյթ, որ, մեր կարծիքով, սխալ հիմունքների վրայ դրած մեր կուսակցութիւնների անմիջական հետևանքն է:

Երբեմն պատահում է, որ այս կամ այն քերթողի գրուածքը չի ընդունվում մեր թերթերից որ և է մէկի մէջ միմիայն այն պատճառով, որովհետև այդ քերթողը առաջ «ուրիշէն» էր աշխատակցում, ուրեմն և «ուրիշ կուսակցութիւնից» էր... Երբեմն էլ— այս կամ այն գրուածքի մասին մեր թերթերից որ և է մէկը չկամ կարծիք է յայտնում, կամ թէ ամենևին լռում է, միմիայն այն պատճառով, որովհետև այդ գրուածքը գրողի անձնաւորութիւնը նրան դուր չի եկել...

Ինչ ասել կուզի, որ մեր խմբագիրների այդ տեսակ վերաբերութիւնը դէպի մեր գրականներն և նրանց գրուածքները անասելի վնասակար հարուած է մեր գրականութեան զարգանալուն առհասարակ:—Մենք չունինք այնպիսի թերթեր և կամ ժողովածուներ, որոնք հեռու ամեն տեսակ լրագրական կուսակցութիւններից՝ զբաղուեն միմիայն և միմիայն գրականութեամբ: Այնպէս որ՝ մի քանի երիտասարդներ, նորաւարտ նախապատրաստուած երիտասարդներ, իրաւ է, գրիչ ունեն իրանց ձեռքին, բայց չեն աշխատակցում և ոչ մէկին մեր թերթերից և ժողովածուներից, որպէս զի, ինչպէս իրանք են ասում, «չընկնեն մեր կուսակցական փոթորկի մէջ»:

«Նոր-Փորձ» ը զետեղելու է իր էջերի վրայ միմիայն այնպիսի գրուածքներ, որոնք շօշափում են զուտ գրականական, հասարակական և պօպուլեար-գիտնական հարցեր։ Նրա խմբագրութեան դռները միշտ բաց կ՚լինին և «Նոր-Դար»-ին, և «Մշակ»-ին, և «Արձագանք»-ին, և «Մուրճ»-ին, և «Տարազ»-ին համակրողների, երկրպագողների առաջ, եթէ այդ վերջինները իրանց յօդուածներում չեն զբաղուիլ այն անվերջ հարցով, թէ որն է այդ թերթերից արդար և որը մեղաւոր, այլ աւելի որոշ և աւելի գրական նիւթ կընտրեն իրանց գրուածքների համար։

Մենք ուրախութեամբ կընդունենք նոյնպէս և թարգմանութիւններ։ Մենք ունինք մի շարք գեղեցիկ յօդուածներ և գրուածքներ, որոնց թարգմանելն աւելի քան ցանկալի է։ Թարգմանել ցանկացողները կարող են դիմել «Նոր-Փորձ»-ի խմբագրին, և նա ուրախութեամբ կ՚յայտնի այդ յօդուածների և գրուածքների ցուցակը։ Նամանաւանդ մենք դարձնում ենք մեր թարգմանիչների ուշադրութիւնը ռուս և եւրոպական կրիտիկոսների վրայ,—դրանց գրուածքներից մի երկուսը թէ որ թարգմանուած են,—լաւ է։ Մինչդեռ այդ գրուածքների ահագին օգուտը ո՜վ մեզնից չի ճանաչում. . .

Մենք չենք կարող ուրանալ, 'ի հարկէ, այն օգուտը, որ հայ ընթերցողն է ստանում արդէն գոյութիւն ունեցող մեր պարբերական թերթերից և ամսագիր-ժողովածուներից։ Բայց և մի և նոյն ժամանակ վստահանում ենք յուսալ, որ մեր ժողովածուն էլ—թող հէնց քիչ, բայց—օգուտ կ՚բերի միջակ հայ ընթերցողին.—իսկ մեր ժողովածուն գլխաւորապէս հէնց միջակ ընթերցողի համար է։ Մեր կարողացածին չափ՝ մենք կաշխատենք խօսել հասարակ, բայց կարևոր, ծանրակշիռ հարցերի, առարկաների մասին, և խօսել պարզ, հասարակ լեզուով։ Սխալ է, լաւ չէ մեր տուածը — ցոյց տուէք, թէ որն է սխալ կամ վատ, ինչումն է սխալը և, եթէ կարելի է, ինչպէս ուղղել։ Եւ երբ որ մեզ համոզէք՝ մենք շնորհակալութեամբ կուղղենք մեր սխալներն ու թերութիւնները. . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ.

1897 Թ. յուլիս.
Մոսկուա։

ՃԱ՛Ր ՉԿԱՅ...

(*Ռուսցի յիշատակարանից*).

I.

Այո՛, այնպիսի մի տարօրինակ պայման, որի մասին պիտ պատմեմ, կարող է ծնունդ առնել միայն այնտե՛ղ, մարդկային պահանջների լիութիւն տուող, հարուստ և ամէն տեսակ յարմարութիւնների ովկիանոսում ծփող քաղաքներից անջատուած գիւղերում— այնտե՛ղ, ուր աղքատութիւնը իւր սուր ճանկերը մարդկանց մսի մէջ խրած, յօշոտում, տանջում է նոցա. այնտե՛ղ, ուր վայրենի, բիրտ և աղքատ բնութիւնը մարդկանց իր անողորմ բռնութեան տակ հալ ու մաշ արած, թողել է նոցա ոսկորն ու կաշին և դարձրել է նրանց վերին աստիճանի խեղճ և թշուառ արարածներ. այնտե՛ղ, ուր շարունակ տիրում է տգիտութեան թանձր խաւարը...

Ի՞նչն է ստիպում այդ մարդկանց շարունակել իրանց ջախջախուած կեանքը մի այդպիսի երկրի ժլատ ծոցում. ի՞նչն է այն ոյժը, որ բևեռել է նոցա այդ տեղի վերայ: Ինչո՞ւ գլուխները կորցրածների պէս՝ առանց ետ նայելու՝ քարշ են տալիս նոքա իրանց ողորմելի գոյութիւնը և ոչ մի ճիգ չեն անում այդ դրութիւնից ազատուելու: Ինչո՞ւ այնքան զուրկ են նոքա եռանդից. . .

Պատասխանները շատ են. աղքատ ու բիրտ բնութեան ձեռքին ստրկացած մարդկանց վախն ու սարսափը տեղահան լինելու մտքից, նոցա պահանջների ծայրահեղ սահմանափակութիւնը, շնորհիւ

խաւարի իշխանութեան, նոցա շուրջը փռուած անբարեբեր տարածութիւնը և անյուսալի, սարսափելի հեռուն... Ո՞ւր գնայ աղքատ գիւղացին, ո՞րտեղ հող կայ, ո՞վ կ'տայ նրան, որտեղ հաստատէ նա իր տանից այն էլ խարխուլ խրճիթը:

Ուրիշ տեղում բերանովը միս չի ընկնիլ, եղած ոսկորիցն էլ կ'զրկուի: Վախ է տեղից շարժուիլը. . .

— Լաւն էն է, միշտ էստեղ մնանք,—ասում էին այդ դրութեան մատնուած գիւղացոց հասակաւորները,—մեր պապերը խելօք էն եղել, որ էստեղ են մնացել. չէ՞ որ նրանք էլ են եղել աղքատութիւն քաշելիս:

Եւ շարունակւում է աղքատութեան, տգիտութեան ու ողորմելիութեան մատնուած գիւղացին, ցնցոտիները ուսին, գլուխը քարշ, սիրտը նեղ, ունքերը կիտած տանել իր դառն ճակատագիրը: Երկինքը սևացել է նրա գլխին, ծիծաղը վաղուց վերացել երեսից և դէմքը պքօղուած է մշտական վիշտ ու թախիծով:

Այդպիսի մի ողորմելի աշխարհ էլ Հացաղուրկ գիւղն էր, ուրտեղ ես, իդէալիստս, կամենում էի ուսումնարան բաց անել տալ: Ես գտնվում էի իմ հայրենի գիւղում, որ Հացաղուրկից ընկած էր մօտ տասը վերստ հեռաւորութեան վրայ, և վարում էի այնտեղի դպրոցում ուսուցչի պաշտօն:

Հայրենի գիւղէցս դէպ արևմուտք ընկած են լեռնային երկու շղթաներ, որոնք իրանց մէջ կազմում են մի բաւական նեղ ու խոր ձոր: Լեռները զուրկ են բուսականութիւնից՝ սկսած իրանց հիմքից մինչև կատարները. ամենուրէք աչք են ծակում միայն լերկ կարմրագոյն ու մոխրագոյն ապառաժները, մէկը միւսին յենուած, մէկը միւսին խառնած ու կախ ընկած, և դոցա սարոտներում միայն տեղ-տեղ աչքի են ընկնում չոր ու ցամաք սևագոյն թփեր: Ի՞նչ բանի են պէտք այդքան սար ու քար, որոնք անց ու դարձ անելու տեղ չեն թողել և որոնց գոյութիւնը ստիպում է խեղճ գիւղացիներին անընդհատ չարչարուելու, քար ու քլունգ դառնալ՝ քարերից հաց պոկելու համար:

Լեռնային այդ շղթաների մէջ գտնուող ձորով վազում է մի սրընթաց գետակ, որ՝ բարձրութիւններից դէպ՝ անդունդ գլորուելով և իր քարոտ յատակը հարթելու ճիգով՝ շարունակ կատաղած

ու փրփրած է։ Պղտորել էր նրա ջուրը, հիւրընկալելով իւր մէջ անձրևից առաջացած վտակները, որոնք, կատաղաբար վազելով մերկ լեռների բարձրութիւններից, անխնայ կերպով քերում են նրանց լանջերում նորածին հողն ու աւազը։ Գետակի աւազուտ ափերին տեղ-տեղ աչքի են ընկնում փոքրիկ կանաչուտներ, որոնք՝ մեռելութեան մատնուած լեռների անշուք տեսարաններից՝ վրդովուած ու վշտացած ճանապարհորդի հայեացքին հովութիւն են պատճառում։ Սարերում վխտող կաքաւների համար կերակուրի շտեմարաններ են այդ կանաչուտները։

Այնտեղ, ուր լեռնային այդ երկու շղթաները, բոլորովին մօտենալով միմեանց, ընդգրկվում են և որտեղ Նոյա կտրում է հիւսիսից դէպ հարաւ ընկած մի կիսանտառապատ շղթայ, գտնվում է Հացաղուրկ գիւղը։ Անտառը տէրունական է, որից օգտուելը խիստ արգելուած է։ Անտառի փէշին, ուր մի քանի թմբերի լանջերը ծառայում են վարելահողերի համար, ընկած է Հացաղուրկը։ Երեսուն տնից է բաղկացած այդ գիւղը, բայց հողը շատ ու շա՜տ քիչ է։ Պատրաստի հողում ցորեն են ցանում, իսկ իրանց ձեռքով մշակած մի բռնաչափ հողի վրայ վարում են ամեն ինչ՝ գետնախնձոր, սոխ, լոբի և սիսեռ։ Այդտեղ են սնունդ առնում և պտղատու ծառերը, որոնք տնկուած են հողի շուրջը։ Այդտեղ են գտնվում և կանաչիների մարգերը։ Բուսական բազմաթի՜ւ կոկորդներ և մի՜ բուռն հող . . .

Սակայն որպիսի՜ մեծ աշխատանք են կլանել քարափների սարաններում ընկած այդ հողերը. մարդու ձեռները, երկար տարիներ անընդհատ հողի ու քարի մէջ չարչարուելով, կոշտացել և ճաքճրքոտուել են, նոքա կորցրել են իրանց ձեւն ու կերպարանքը և դարձել են կատարեալ մի քարացած գործիք, մինչև որ ջրին մօտ ընկած, բայց մերկ ու քարոտ տեղերը ծածկուել են բուսականութեամբ։ Այդքան հաղթահարում է գիւղացոց եռանդը Հացաղուրկի ժլատ ու բիրտ բնութիւնը։

Գիւղացիք շատ աղքատ կեանք են վարում։ Նոքա ապրում են ցածր, նեղ ու մութ տներում, որոնց ներքին զարդը հողի ցուրտ յատակի մի մասը ծածկող հնամաշ կապերտն է—երկու գօշակներով։ Տան եղած չեղածը մի ձեռք կեղտից սևացած անկողնաշորեր

են, երկու անհրաժեշտ պղնձեղէն և կաւէ մի քանի հասարակ ամաններ:

Տան անկիւններից մինում կ'տեսնէք մահակների մի մեծ կապոց, որոնք Հացազուրկցու կռացած մէջքի և թուլացած ոտների մշտական նեցուկն են կազմում:

«Հէյ օրհնածներ,—կարող է բացականչել առաջին անգամ տեսնողը,—քարով հարուստ երկիր է, ի՞նչ խնայելու բան կայ, շինեցէք բարձր, ընդարձակ և լուսաւոր բնակարաններ էլի...»: Սակայն զայրոյթ և զարմանք արտայայտող այդ բացականչութիւնը շուտով կ'մեղմանայ ու կանհետանայ, երբ տեսնողը մտնի Հացազուրկցու դրութեան մէջ. մեծ տունը՝ մեծ գերաններ, մեծ դռներ է պահանջում, որ տէրունական անտառից պիտի կտրեն բերեն. մեծ պատուհաններից ցուրտ շատ ներս կ'գայ, հետևապէս ձմեռը դժուար կ'լինի փակելը. մեծ տունը ձմեռը շատ վառելափայտ է պահանջում, որ նոյնպէս պիտի օտարի անտառից գնել, իսկ ճաշակն էլ խոմ բացակայում է: Գիւղացիք հագնվում են աղքատ, պատառոտած և կեղտոտ: Տղամարդիկ իրանց ոտներին ունենում են քըրքրուած տրեխներ. իսկ կանայք, աղջկերք և երեխաները կամ բոբիկ են և կամ հագնում են տակը պարկի կաշի կարած բրդէ գուլպաներ: Կազմուածքով մեծամասնութիւնը թոյլ է և վտիտ: Վիշտն ու թախիծը նոցա հոգու անբաժան մղմուղն է, որ անողորմ կերպով կրծում, աւերում է ամեն ինչ: Նոքա խղճացած, կուչ եկած, բարոյապէս անզօրացած արարածներ են, որոնք նայողի մէջ արթնացնում են չափազանց կարեկցութիւն:

Հացազուրկի գիւղացիք տարեկան հարկը վճարում էին պանդըխտութիւնից եկած փողից, իսկ իրանց գոյութիւնը պահպանում էին մի կերպ...: Տարուայ մի մասը գետնախնձորով էին կառավարում, միւս մասը լոբիով. ամառը պտուղներով, կանաչիով. միայն ձմեռն էին հացի երես տեսնում: Տարուայ այդ ժամանակին նոցա սովորական սնունդը ցամաք հացն ու սոխն է: Երբեմն միայն՝ փարթամութեան ետևից ընկած՝ նոքա չորացրած հունով կամ լոբիով սպաս են պատրաստում և անհամ, անանուխ ջրի մէջ հաց բրթում——ուտում: Կաթնատու կենդանիներ քիչ էին պահում արօտատեղիների սակաւութեան պատճառով և կթաններից եկած օրքան և

լցէ լուղն ու պանիրը տանում ծախում էին մօտակայ գիւղերում, փողը տալիս ցորենի: Եկամուտի մի այլ աղբիւր էլ ունէր Հացաղուրկցին, որ Աստծոյ ողորմութեան շնորհն էր. գիւղից կէս վերստաչափ հեռու գտնվում էր մի թումբ, որ ամբողջապէս սպիտակահողից էր կազմուած: Այդ հողը գիւղացիք լուծում էին ջրի մէջ և նորանով ծեփում տան յատակն ու պատերը իբրև սպիտակ ներկ: Շրջակայ գիւղերում այդ հողից պահանջ կար, և ահա հացաղուրկցին մի բեռ սպիտակահող իշին բարձած կ՚տանէր գիւղերը կ՚պտտացնէր և Աստուծոյ տուած բերքը փողով կամ ցորենով կ՚փոխէր և կ՚գար:

Հացաղուրկից աջ և ձախ մի վերստաչափ հեռաւորութեան վրայ ընկած են երկու այլ գիւղեր՝ նոյն մեծութեամբ և նոյն վիճակին մատնուած: Եւ ահա ես մտադիր էի այդտեղ մի ուսումնարան բաց անել տալ երեք գիւղերի միացած ոյժերով: Ուսումնարանը կենդրոնական դպրոց կ՚լինէր:

Երկու շաբաթ առաջ ես գնացել էի Հացաղուրկ, կանչել էի տուել այդտեղ հարևան գիւղացիներին, առաջարկել էի նոցա իմ մտքերը, բացատրելով ուսման նշանակութիւնն ընդհանրապէս և մի այդպիսի աղքատ գիւղի համար—մասնաւորապէս:

— Դա ի՛նչ,—կրկնում էր յաճախ գիւղացոց աղսախկալներից մէկը, դառնալով ժողովականներին,—մեր տղերանց ձեռքներին որ ղալէամի կտոր լինի, Բաքւում, Բալախանում տասը մանէթի տեղ՝ քսան, քսանըհինգ մանէթ կ՚տանեն ամսական: Տղերքը իրանք են ասում. հիմա էնպէսի ժամանակ է, ով որ կարդալ գրելը չի իմանում, նա չի կարող առաջ գնալ:

Ժողովում կային և այնպիսի անձինք, որոնք դէմ էին դպրոցի հարցին:

— Ծախք շատ է հարկաւոր, չենք կարող տալ,—ասում էին ոմանք:

— Շատ եղաւ, քիչ եղաւ, մի և նոյն է, աւելորդ ծախք է, ո՞րտեղից տանք, քեասիբ[1]) մարդիկ ենք:

— Ի հարկէ, խօմ սուտ չի ասում. էս շատ լաւ բան,—որ

---

1) Աղքատ:

միջոց չկա՜յ. տարին տասներկու ամիս չալըշմիշ ենք գալիս[1]) քար ու քէասէագի[2]) հետ, ամա կերածներս էլի ցամա՜ք հաց, ցամաք հաց. էն էլ սաղ տարին չի լինում։ Տէրունական հարկը վա՜յ էնպէս, որ տալիս ենք։ Մեր բանը չի ուսումնարանի գործը, ղուր տեղից ի՛նչ հարկաւոր է գլուխ ցաւացնելը. . .

Սոցա հակառակորդներն էլ պնդում էին, թէ կարող են, մեծ ծախս չի նստիլ. շինութեան համար շատ բան իրանք ձրի կանեն. եթէ երեք գիւղը միանան, մի ոյժ կազմեն, դժուար չէ ուսումնարանի գլուխ բերելն ու պահելը։ Եւ որովհետեւ հարցի պաշտպանների թիւը շատ էր այդ ժողովում, ուստի ուսումնարանի գործի իրականացումը հաւանական էր թւում ինձ։ Բողոքողները կամաց կամաց իջեցնում էին իրանց ձայները, յետոյ կամ սուս ու փուս միանում ընդհանուրի հետ, կամ բարկացած մի կողմ քաշվում։

Հարց դրի, թէ ո՞րտեղ շինուի դպրոցը։ Ես իմ կողմից առաջարկեցի Հացաղուրկը, իբրեւ կենտրոն մնացած երկու գիւղերի մէջ եւ օդի կողմից աւելի առողջարար։ Այստեղ, ահա, հայի հռչակաւոր եսասիրութեան եւ անհամերաշխութեան պատկերը փռուեց իմ առաջ։ Բղաւում, ճչում, հայհոյում էին։ Շատերը այդ հարցերից շեղուած՝ անցել էին անձնական հաշիւների, եւ միմեանց ամէն տեսակ հայհոյանքներ էին հասցնում։ Մի քանիսի մէջ կռիւ էր ծագելու, եթէ տանուտէրի ներկայութիւնը չզսպէր նրանց։ «Իմ» եւ «քո»-ի խնդիրը քաղցած գիւղացիներին, տեսա, գայլեր էր դարձրել։

Մեծ ջանքով կարողացայ լռեցնել կատաղած ու փրփրած ամբոխին, ասացի, որ նորից մտածեն եւ երկու շաբաթից յետոյ թող կրկին ժողովուեն այստեղ՝ դպրոցի ծախքերի աղբիւրները եւ շէնքի տեղը վերջնականապէս որոշելու համար։

Ամենքը կամաց կամաց սկսեցին ցրուել, իսկ ես վերադարձայ մեր գիւղը։

Եւ ահա երկու շաբաթ անցած, նոյն գործով ես Հացաղուրկ էի գնում։

---

1) Չարչարվում ենք։ 2) Հողային կոշտեր։

II.

Հոկտեմբերը մօտենում էր իւր վախճանին։ Աշնանային անախորժ և մելամաղձոտ եղանակների օրերը հասել էին։ Երկինքը ծածկուած էր մռայլ ու գորշ ամպերով և անձրևը անընդհատ մաղվում էր։ Օդի մէջ տիրում էր սաստիկ խոնաւութիւն, որը ճնշում էր անցորդի կուրծքը և ծանրացնում նրա շնչառութիւնը։

Ջորի նստած գնում էի Հայաղուրկ։

Դէպ այդ գիւղը տանող ձորի բերանումն էի գտնվում ես, որ անձրևը սկսեց սաստկանալ և օդի մէջ տիրեց ցուրտ սարսռեցնող հոսանք։ Մօտս անձրևակալ չկար, իսկ ջորին իր դանդաղ քայլերը իսկի չէր ուզում արագացնել։ Ի՞նչ փոյթ նրան, որ անձրև էր գալիս... Ճար չկար. ամենայն սառնութեամբ ես ինձ երկնքի և ջորու կամքին յանձնեցի։

Սակայն անձրևը դադար առնելու միտք չունէր, իսկ ջորին՝ վազելու։

Ճանապարհը մի կածան էր, որ ընկած էր ձորի հիւսիսային պատնէշի լանջով։ Դա մի ճանապարհ էր, ուր տեղ ջորու չորս ոտքը հազիւ էր տեղաւորվում, բայց համբերատար և փորձուած կենդանին, որ սովոր էր սար ու քարին, ամենայն զգուշութեամբ և վարպետութեամբ էր փոխում իւր իւրաքանչիւր քայլը։ Վտանգը այդտեղ ամեն մի ակնթարթում սպառնում է ճանապարհորդին. մի անզգոյշ քայլ ջորու կողմից, սմբակի սայթոց, և ճանապարհորդն ու կենդանին դէպ անդունդ պիտ գլորուեն։ Սակայն այս ամենը չի անցնում այն մարդկանց գլխով, որոնք վայրենի այծերի նման նոյնպէս եփուած են լեռներում։

Ձորի մէջ տիրում էր խորին լռութիւն։ Սիրուն կաքաւները, որ շատ են այդ սարերում, կտրել էին իրանց դուրեկան և գրաւիչ կղկղոցը. նոքա՝ լուռ ու մունջ, սիրտները տխուր և մաքամոլոր՝ իջնում էին լեռան բարձրութիւններից դէպի ձորը—տաք տեղերում պատսպարուելու համար։ Կաչաղակները, ծտերը և թփային մանր թռչնիկները—բոլորն էլ կտրել էին իրանց կչկչոցն ու ծլվլոցը։

Միայն տեղացող անձրեւի խուլ խշխշոցն էր, որ խանգարում էր տիրող լռութիւնը՝ յուսահատութիւն առաջացնելով անցորդի հոգու մէջ. և երբեմն երբեմն ագռաւի անախորժ կռռոցն էր, որ զգացնել էր տալիս ինձ իմ միայնակութիւնը:

Ես շարունակ բարձրանում էի սարն ի վեր և մօտենում ձորի սկզբին: Մառախուղը պատել էր սարերի բարձրութիւնները և ձորակներն: Անձրեւը վերեւներում կամաց կամաց սկսեց դադար առնել: Այժմ թանձր մառախուղից նստող փոշեանման կաթիլները և սարերի բարձրութեան հետ միասին աստիճանաբար ելնող ցուրտը յաճախ սարսռեցնում էր մարմինս: Վերարկուս ամբողջապէս ջուր էր կտրել, իսկ ոտներս սառել: Օ՜հ, ե՞րբ, վերջապէս, գիւղ պիտի հասնէի... Ջորին, փնչալով, հանդարտաքայլ և համբերութեամբ բարձրանում էր լեռան ծուռումուռ ելն ի վերը: Արդէն յոգնածութիւն էի նկատում խեղճ կենդանու քայլերի մէջ. բայց ինչ արած, ասուած է, պիտի համբերել...

Յանկարծ ականջիս հասան հովուական սուլոցի և բղաւոցի ձայներ: Ոչինչ չէի տեսնում. մառախուղը ինձանից պատել էր ամէն ինչ: Իսկ ձայները շարունակվում էին: Սիրտս լայնացաւ, երբ, ձորի խորութիւնից հասնելով սարի բարձրութիւններին, որտեղից իմ առաջ բացուեցան անհամար լեռների շար-շար կատարներ, լսեցի և մարդկային ձայն: Մի փոքր ժամանակից յետոյ, վերջապէս, մառախուղի սահմանում, ասես սպիտակ վարագոյրի տակից, դուրս եկան ոչխարները: Հովիւները բղավում, սուլում էին, զանազան ձայնի ճչյուններ էին արձակում, ոչխարներին դէպ մի որոշ ճանապարհ ուղղելու համար: Լսվում էին հայհոյանքներ, որ թափվում էին անմեղ կենդանիների գլխին: Ահա հօտը մօտեցաւ ինձ, և այժմ ջորին շրջապատուած է ոչխարներով: Այդ խեղճ և միամիտ կենդանիները՝ իրար կպած, գլուխները քարշ, ոչխարին յատուկ ապուշ հայեացքով՝ իջնում էին սարն ի վայր: Նոցանից ոմանք էլ՝ առանձնացած՝ կրծոտում էին ճանապարհի վրայ բուսած կամ թմբերի լանջերում կանաչած մացառները:

Իմ հարցին, թէ ո՞ւր են տանում ոչխարները, եափնջու մէջ փաթաթուած հովիւներից մէկը, որի լէքը երեսն այդ եղանակին և.ս կրակի պէս վառվում էր, հաստ և ցածր ձայնով պատասխանեց.

— Սարերումը ցուրտ է, էնենց եղանակ է որ, կարող է ձիւն գայ, ոչխարներին վնաս կ'հասնի. տանում ենք քաշերը[1]:

— Ո՞ւմ ոչխարներն են,—հարցրի ես հետաքրքրութեամբ.— Հայաղուրկը այսքան ոչխար ունի՞:

— Ըմմ, չէ՜ է՜, էլ ի՜նչ,—պատասխանեց Հովիւը ծաղրով,— Հայաղուրկում էսքան ոչխար ո՞րտեղից է. իսկի ուտելու հաց չունեն... Տունը մի կով հազիւ է կարողանում պահել... Չէ՛, սա Զուարթ գիւղի ոչխարն է:

Այդ գիւղը Հայաղուրկից կէս օրուայ ճանապարհի վրայ էր գտնվում և անտեսապէս, համեմատաբար, լաւ դրութեան մէջ էր:

III.

Վերջապէս ես և ջորին ազատուեցինք սարի յոգնեցուցիչ և ձանձրալի զառիվերից, և այժմ գնում էինք Հայաղուրկի այգիների մէջ ընկած նեղ ճանապարհով, որ դէպի գիւղն էր տանում: Ծառերը դեռ կանաչ էին և տերևները դեղնին էին տալիս:

Հասնելով գիւղամէջ՝ ջորին քշեցի դէպ սուդիա[2] Գրիգորի տունը, որ իմ լաւ ծանօթն էր: Մութն արդէն ընկնելու վրայ էր և երկու ջուխտ մի կենա տղամարդ ու կին վերադառնում էին եկեղեցուց: Նրանց թւումն էր և բարեկամս, որ՝ ինձ նկատելուն պէս՝ շտապեցրեց քայլերը, մօտեցաւ ինձ, ծիծաղը երեսին սեղմեց ձեռքս և, առաջ ընկնելով, ասաց՝

— Գնանք, գնանք տուն, վարժապետ... հէր օրհնած, էդ ի՞նչ օր ես ընկել. մրսած կ'լինիս... հրէս երկու օր է էսպէս անպիտան եղանակներ է անում:

Սուդիա Գրիգորը, որ տարիքով 40-ից անց էր, մի բարեխիղճ, անկաշառ և գիւղացոց ներքին գործերի համար հոգացող անձնաւորութիւն էր, որպիսիք հազիւ են պատահում գիւղերում: Նա վայելում էր բոլորի յարգանքը և երկրորդ անգամն էր, որ դատաւոր էր ընտրուած:

---

1) Ներքևները: 2) Դատաւոր.

Անցնելով ախպախտան ցեխով լի փողոցներով, վերջապէս մենք ներս մտանք սուղիայի տան բակը: Մի տասնհինգ տարեկան կայտառ պատանի մօտեցաւ ինձ, կարծես ուրախանալով վարժապետի գալուստի վրայ, բռնեց ջորու սանձից, վերցրեց վրայի խուրջինն ու դօշակը, իսկ ջորին տարաւ գոմը: Մինչ ես՝ ջորուց իջած՝ մօտենում էի հիւրասենեակի դրանը՝ սուղիա Գրիգորն արդէն կարգադրութիւններ էր անում.

— Ա՛ հարս, շուտ ղօնաղատան բուխարին վառիր, դէ-հա՛, շուտ. վարժապետը եկել է, ջուր է կտրել, մրսած կ՚լինի, շուտ... Թոնիրը վառ է. թէ վառ չէ — վառիր, պալտօն[1]) տաք ջուր է դառել, պիտի չորացնէք... Առաջ մի մաքր օթախը[2] կարգի բեր, կառավաթի[3]) վրայ դօշակ գցիր, որ վարժապետը նստի. . .

Սուղիայի առաջ կանգնած էր մի երիտասարդ կին, որի դէմքը կիսով չափ ծածկուած էր կարմիր քօղով: Դա սուղիայի նորեկ հարսն էր, որի ամուսինը Բաքու աշխատանքի էր գնացել: Հարսը լուռ ու մունջ՝ ինքնաշարժ մեքենայի պէս՝ մօտեցաւ ինձ, գլուխ տուեց և հեռացաւ սկեսրայրի պատուէրները կատարելու:

Մենք մտանք սենեակ: Ես նստեցի փայտէ մահճակալի վրայ, որ ծածկուած էր խալիչայով և երփներանգ չթի երես ունեցող դօշակով: Այդ դօշակը ծալքատեղից դուրս է գալիս միայն հիւրի համար, և նրա վրայ միայն հիւրն է բախտ ունենում բազմելու: Սուղիան ծալապատիկ նստեց յատակի վրայ, որի միայն կէսը ծածկուած էր կապերտով: Կապերտի երկարութեամբ մի գորգ էր փռուած: Պատերը ծեփած էին և սպիտակ: Սենեակը ուրիշ ոչ մի զարդարանք չունէր, բացի մի հատ լուսանկարից, որ կախուած էր պատից, մի կտոր կլոր և միջից կտրուած հայելուց, որ ամրացրած էր պատի ծեփի մէջ և ասիական հնամաշ հրացանից, որն իր բոլոր պարագաներով կախած էր պատից: Լուսանկարի վրայ պատկերացել էին սուղիայի մեծ որդին, իր համագիւղացի երեք տղերանց հետ, որոնք նոյնպէս Բաքու էին գնացել աշխատանքի: Նրանք ամենքն էլ կանգնած էին՝ հայեացքները մի կէտին ուղղած և զինուորների պէս ձեռները կախ գցած:

---

1) Վերարկու: 2) Սենեակ: 3) Մահճակալ:

Քիչ յետոյ արագութեամբ ներս մտաւ Հարսը, փայտի կապո-ցը խտտած. Նա մօտեցաւ վառարանին, կրակ արեց, յետոյ վերցրեց վերարկուս և դուրս տարաւ չորացնելու: Հարսից յետոյ սենեակ մտաւ սուղիայի կինը, որ տարիքով երեսունից անց կ'լինէր: Ես անկարող էի գաղափար կազմել թէ այդ կնոջ և թէ նրա հարսի գեղեցկութեան մասին, որովհետև երկուսի գլուխն ու երեսը ամբող-ջապէս թաղուած էին մի բուռն շոր ու փալասի տակ: Ես տես-նում էի հարսի քթի ծայրը միայն, իսկ սկեսուրի քթի վերին և աչքերի կէս մասը: Եւ ահա այդ իսկ պատճառով ես թողնում եմ այդ թշուառ արարածների արտաքին գեղեցկութեան նկարագիրը:

Քթկալով բերանն ու քթի ծայրը ծածկած՝ սուղիակինը մօ-տեցաւ ինձ ու անհամարձակ, ամօթահար ձայնով ասաց՝

— Բարով ես եկել, վարժապետ:

Սեղմեց ձեռքս, գլուխը խոնարհեցրեց, յետոյ, հեռանալով ին-ձանից, կանգնեց կապերտի ծայրին դէպ սենեակի դուռը: Քիչ ան-ցած—նա մօտեցաւ ամուսնուն, կռացաւ, ինչ որ կամացուկ ասաց նրան, յետոյ ուղղուեց և երեսս նայեց ծիծաղադէմ:

— Վարժապետ,—դարձաւ ինձ սուղիան,—թող ջուր տաքա-ցնեն, մի քիչ ոտներդ լուանան. Ճանապարհ եկած մարդ ես, յոգ-նած կ'լինիս ու մրսած, կ'զինջանաս:

Ես շնորհակալութիւն յայտնեցի և ասացի որ աւելորդ է. վա-ռարանի կրակը շուտով կ'թեժանար և ես ոտներս կ'տաքացնէի:

— Թող լուանան էլի՛, մեծ բան չէ խօմ,—ասաց սուղիակինը փոքր ինչ համարձակութիւն առնելով,—Հարսը ջահէլ, կոնիրումը ըղվաթ[1]), թող լուանայ, ոտներդ կ'հովանան:

Ես կրկին շնորհակալութիւն յայտնեցի, որից յետոյ տանտի-կինը վշտացած սրտով թողեց մեզ:

— Ա՛ կնիկ,—ասաց սուղիան նրա ետևից,—չայդանը[2]) բերէք դրէք բուխարումը, չայ եփէք. վարժապետը մրսել է, չայի սովոր մարդ է:

Ես դրան չհակառակեցի և զգացի մի ներքին բաւականութիւն: Լաւ բալասան է թէյը մրսած մարդու սառած անդամների համար:

---

1) Ոյժ: 2) Պղնձէ Թէյաման:

— Է՛, սուղիա,—ասացի ես,—դէ պատմիր տեսնենք ի՞նչ կայ, ինչ չկայ. ի՞նչ են մտածել ուսումնարանի համար. էքուց ախր կիւրակի է, ժողովուելու են գիւղացիք, թէ չէ՞։

Սուղիան, որ ուշադրութեամբ լսում էր ինձ, հայեացքը ուղիղ երեսիս յառած, իսկոյն չպատասխանեց։ Նա աչքերը գետին գցեց, գլուխը օրօրեց և ցաւակցական եղանակով պատասխանեց՝

— Է՜հ, ճրտեղից են հաւաքուելու. տանուտէրը ոչ ոքի դրա մասին չէ յայտնել մինչ օրս. նրա մտքումն էլ չկայ ուսումնարան բաց անելը։ Բացի դրան՝ էն օրը, որ էն մարդը քո երեսին կանգնած ասում էր՝ հա՛, վարժապետ, ուսումնարան բաց անենք, լաւ կ՚լինի մեզ համար. օգուտ է,—նրանք բոլորն էլ սուտ էին ասում, քո առաջ կեղծաւորութիւն էին անում, երկերեսանի մարդիկ են դրանք։ Դու հեռացար թէ չէ, ամեն ինչ փօզմիշ եղաւ[1]). երկու մարդ էլի ձայն բարձրացրին, թէ ի՞նչ հարկաւոր է ուսումնարանը, մեր տարեկան հացը հազիւ ենք կարողանում աշխատել, հլա ուսումնարան էլ պահե՞նք. ո՞վ կարող է էդքան ծախք քաշել. ով ուզում է իր որդուն ուսում տայ, թող ուղարկի վարժապետենց գիւղի ուսումնարանը։ Դէ՛, հերիք էր, որ մի քանի հոգի էս խօսքերը կրկնեցին, էլ պրծա՛ւ. ամէն ինչ ջնջուեց, ամենքն էլ ասացին՝ հարկաւոր չէ, չենք կարող, պարտքի տակ կընկնենք, ծանրութիւն է, և ցրուեցին։ Շատերը քեզանից ամաչում էին և ասում՝ հա, լաւ բան է ուսումնարանը, համաձայն ենք,—բայց նրանք ներքուստ ախր իրանց հունարը գիտէին. ետևիցդ ասում էին. բա՞ն չունե՞ք, ասենք վարժապետի խաթրը չկոտրելու համար ասացինք՝ հա՛,—բայց դէ ախր մեր բանը չի։ Տանուտէրի մտքումն էլ չկար, մանաւանդ որ գիւղացիք չէին համաձայնվում ուսումնարանի համար տեղ ընտրելու մէջ. իրանք համ ասում են հարկաւոր չի, համ էլ սկսել են կռիւ, ղալմաղալ անել տեղի համար. ծիծաղելի է, մերոնք ասում են մեզ մօտ լինի, նրանք էլ ասում են իրանց մօտ լինի։ Ի՞նչ հարայ-հրոյ, ի՞նչ սրտնեղութիւն... Շատ յիմար խալխ[2]) են... Տանուտէրն էլ, էդ կռոցը տեսնելով, գլուխը փաթաթեց ու գնաց իր գործին։

---

1) Ջնջուեց: 2) Ժողովուրդ:

Լսելով սուդիայի պատմածը՝ ես մնացի շուարած և չգիտէի ի՞նչ պատասխանել։ Ասէք — գլխիս մի կուժ սառը ջուր ածեցին։ Դժուարացայ հաւատալ, այնքան անակնկալ էր այդ լուրը։ Սակայն ես չվհատուեցի և ասացի՝

— Վնաս չունի, սուդիա Գրիգոր, վաղը առաւօտեան շատ կանուխ մարդիկ ուղարկեցէք գիւղերը յայտնելու, որ հացից յետոյ հաւաքուեն այստեղ։

— Լաւ, տեսնենք. բայց վարժապե՛տ, խելքս բան չի կտրում դրանից. դժուար թէ պան և հաղէ թէ գլուխ գայ։ Հիմա ես կարծում եմ, որ ամենքն էլ համարձակութիւն կունենան քո երեսին կանգնել և ասել՝ չենք ուզում, ծախքը չենք կարող տալ, աղքատ ենք։ Ասում եմ—քեզանից յետոյ շատ ղալմաղալ եղաւ է՜, ամենքն ասում էին՝ ուսումնարան պահելը հեշտ չէ, տուներս կ՚քանդուի։ Վարժապե՛տ, մեղադրելի էլ չէ, շատ են աղքատ. վայ էն հալին, որ կարողանում են մի կերպ կառավարուիլ. էս բոպէիս էնպէս տուն կայ, որ ցորեն չունի տանը և չոր մրգերով է կառավարվում։ Ոմանք կորեկ են ուտում, շոր չունեն հագներին, պարտքն էլ խօմ անպակաս է։ Հրաման էր եկել, որ երկու շաբթում հարկ ժողովեն. հրէս երեք շաբաթ լրացել է, հլա ոչինչ չի հաւաքուել։ Ամենքն էլ աչքները տնկել են դէպի Բաքու, թէ էնտեղից փող գայ—հարկ տան։ Շատերի ջիբում մի կոպէկ չես գտնիլ, որ եկեղեցում խաչահամբոյր գցեն, իսկ տուներն էլ խօմ դատարկ են։ Ի՞նչ անեն խեղճերը. մեղադրելի չեն, ապրուստը դժուար է, ճա՜ր չկայ։

— Այ սուդիա, այդ ես հասկանում եմ, բայց եթէ երեք գիւղ միանան, կարող են մի ուսումնարան պահել։

— Թէ որ միանան է՜։ Ախր չեն միանալ, քանի որ ամենքն էլ ուսումնարանի շուքից դողում են, ախր ի՞նչպէս միանան...

Ես լռեցի։ Սիրտս կոտրուեց, և ես քիչ յետոյ — ինքս ինձ մխիթարելու ցանկութեամբ—ասացի՝

— Վնաս չունի, դու, խնդրեմ, առաւօտը մի մարդ ուղարկես գիւղացոց կանչէ, որ նորից խօսենք։ Չգիտեմ տանուտէրը ինչու այդպէս թոյլ է վերաբերուել գործին. .

— Շատ բարի, վարժապետ,—ասաց սուդ. Գրիգորը,—հէնց հիմա կարելի է մի տղայի ասել, որ նա առաւօտեան գնայ շուտով իմաց անի։

Այս ասելով՝ սուդիան վեր կացաւ տեղից, կանչեց իր որդուն, որը դիմաւորեց ինձ բակում և որը մեր սենեակին կից բնակարանումն էր գտնվում։ Ներս եկաւ որդին, որի դէմքը փայլում էր լի հետաքրքրութեամբ և որի վառվռուն աչքերի արագ շարժումները, կարծես, ասում լինէին, պատրաստ եմ ամեն մի պատուէր մի ակնթարթում կատարելու։

— Քեզ մատաղ, Սարգիս,—ասաց հայրը,—գնա Թաթոսենց Մկրտչին ասա՝ հէրս կանչում է, մի սհաթ էստեղ գայ։

Պատանին իսկոյն դուրս թռաւ, իսկ սուդիան նորից վերադարձաւ իր տեղը։ Մենք լուռ էինք։ Իմ միտքը զբաղուած էր գործի անյաջող ելքով։ Սկզբում ես չէի խորհում դորա բուն պատճառների մասին, այլ միայն ներքուստ չարանում էի գիւղացոց վրայ, վրդովւում նոցա տգիտութեան, անհամերաշխութեան, վախկոտութեան և եռանդից զուրկ լինելու վրայ։ Վրդովւում էի և վշտացնում իմ սիրտը։ Բայց յետոյ, աւելի խորը ընկղմուելով իմ մտածմունքների մէջ, տեսայ, որ նոքա այնքան մեղադրելի չեն։ Կատարուած դէպքի ազդեցութեան տակ իմ միտքը պտոյտ էր գործում այն մեծ հարցի շուրջը, որի մասին շարունակ վիճել են և վիճում են տնտեսագէտները.—անհատականութիւնն է մարդկութիւնը դէպ յառաջադիմութիւն մղում, թէ տնտեսական պայմանների զարգացումն է հանդիսանում իբրև յառաջադիմութեան գլխաւոր ոյժ։ Երկուսի փոխադարձ և անզուգական կապը ես տեսնում էի ներկայ դէպքում։

Բայց ի՞նչ պիտի անէի ես. մի՞թէ կոտրած և յուսահատ սրտով պիտի հեռանամ այստեղից, մտածում էի ես։ Բաւականին տխրացնում էր ինձ այդ անյաջողութիւնը. իգիտլիսալու արձակած առաջին նետն էր դա, որ, լեռ քարին կպչելով, ետ էր մղվում և անշուշտ խրուելու էր իմ կրծքի մէջ։ Անիծեալ կեանք, որ այդքան անողորմ ես, որ այդպէս անգթաբար խորտակում ես իդէալիստի փայլուն յոյսերը, նրա գուրգուրած ծրագիրները... .

Սակայն այդ տխուր մտածմունքներից ինձ ազատեց ինքնաշարժական արարածը, հարսը, որ ներս բերաւ թէյի բաժակները։ Պղնձէ թէյամանը, որ դրուած էր բուխարու մէջ, արդէն տաքացել էր, և միջի ջուրը եռ էր գալիս։ Հարսը նրա մէջ թէյ գցեց, բաժակները դրեց սկեսրայրի առաջ, իսկ ինքը կրկին անյայտացաւ։

Սուղիան չոքեչոք մօտեցաւ բուխարուն, չայդանը կրակից մի փոքր հեռացրեց, որ թէյը շատ չեփուի, յետոյ բաժակները մօտեցրեց իրան և սկսեց թէյ ածել։ Ես իջայ մահճակալից, ծալապատիկ նստեցի բուխարու կողքին և սաստիկ ծարաւով ու ախորժակով սկսեցի բաժակ բաժակի ետևից դատարկել։

Նոր էինք թէյ խումը սկսել, ինչպէս ներս մտաւ Թաթոսենց Մկրտիչը, մի կարճահասակ բարակ-բարակ և թուխ-թուխ երիտասարդ, որի մռայլ դէմքի վրայ կարելի էր կարդալ մշտական անբաւականութիւն։

— Բարի իրիկուն,—ասաց նա տխուր ձայնով։

—Աստծոյ բարին,—պատասխանեցինք մենք, իսկ սուղիան շարունակեց՝—համեցէք, Մկրտիչ, տրեխներդ հանիր, եկ մի ստաքան չայ խմիր, փորդ տաքացրու։

— Չէ, շնորհակալ եմ, ի՞նչ ունես, սուղիա, ասա։

— Սրի նստիր, տնաշէն, ցուրտ ժամանակ է, ամէն անգամ չայ չի լինիլ. տրեխներդ հանիր։

— Չէ, սաղ լինես, իշտահ չկայ, խօսքդ ասա։

— Որ էդպէս, մեղքը քո վիզը, Մկրտիչ-էն էի ասում, առաւօտեան մի երկու տղի հետ գնացէք մեր հարևան գիւղացոց յայտնեցէք, որ հացից յետոյ էստեղ գան ուսումնարանի մասին խօսենք։ Ասացէք վարժապետը եկել, կանչում է բոլորին։

— Շատ լաւ, կ'գանք,—պատասխանեց Մկրտիչը և, բարի գիշեր մաղթելով, դուրս եկաւ։

— Ինչո՞ւ այդպէս տխուր ու խեղճ է երևում այդ տղան,— հարցրի ես Մկրտչի հեռանալուց յետոյ։

— Աղքատ մարդ է. հօր հետ չէին սազվում, բաժանուել է. հիմա ապրուստը բոլորովին դժուարացել է. ընտանիքն էլ մեծ է. չի իմանում, ինչպէս քարշ տայ տան լուծը։ Կնոջն էլ Աստուած խղճմտանք տայ. հէնց տարեկան մի երեխայ բհէամ[1]) անում՝ գցում լոյս աշխարհ։

Սուղիան վերջին խօսքերը ծիծաղելով և ամաչելով արտասանեց, իսկ մի դառն ժպիտ էլ խաղաց իմ երեսին։

---

1) Ցղանում է։

IV.

Մկրտիչը նոր էր հեռացել և մենք երրորդ բաժակն էինք դատարկում, ինչպէս ներս մտան երեք հոգի, առանց դուռը ծեծելու կամ նախօրօք իմաց տալու։

— Բարի իրիկուն։

— Աստծոյ բարին, համեցէք, նստեցէք։

Մտնողները, տեսնելով ինձ, կարծես, փոքր ինչ շփոթուեցան, իրար մէջ ինչ որ փսփսացին, կարծես, վերադառնալու մտքով, բայց յետոյ, ինչպէս երևաց, վճռեցին մնալ։ Նստելով բաց յատակի վրայ՝ նրանք սկսեցին հանել իրանց տրեխները։

Երեքն էլ համարեա մի տարիքի տղամարդիկ էին—քսանհինգին մօտեցած։ Զանազանվում էին միմեանցից նրանով, որ մէկը բաւականին վտիտ էր մարմնով, դէմքը դալկացած և երեսին մազ չկար։ Միայն ընչացքների վրայ հազիւ աչքի էին ընկնում նրա նոսր ու բարակ բեխերը։ Երիտասարդական թարմութիւնն ու առողջութիւնը վաղուց էր թողել այդ մարդուն։ Դա նրանցից էր, որոնց մասին առհասարակ ասում են՝ դեռ չապրած արդէն ծերացել է։

Միւսը յաղթանդամ էր, երեսը լէքը, սև մազերով ծածկուած և բեխեր սուր ոլորած։ Դէմքի գծագրութիւնը բաւականին գեղեցիկ էր, որոնց մէջ խոշոր սև-սև աչքերը, թուխ վարդագոյն երեսը և դէմքի վրայ խաղացող մշտական բարի ծիծաղը դուրեկան տպաւորութիւն էին թողնում նայողի վրայ։ Պարզ և անաչկոտ երիտասարդ էր, ինչպէս երևաց յետոյ։

Վերջինը մարմնով հաստ էր, թափալ, վիզը կարճ, ասես ներս խրուած, գլուխը կլոր էր, ճակատը նեղ, դէմքը թուխ և թաւամազ։ Ձայնը հաստ էր և խօսում էր կոշտ ու կոպիտ եղանակով։ Ասէք միշտ բարկացած լինէր։

Առաջինի անունը Սահակ էր, միւսինը՝ Մեսրովբ, իսկ վերջինինը՝ Վարդազար։

Տրեխները հանելուց յետոյ՝ նոքա մօտեցան կապերտին և նստեցին։

— Վարդազար, քեզ մատաղ, հլա մի՛ նստիր,—ասաց սուդիան,—Սարգսին մի ձայն տուր ստաքանները բերի։

— Մեզ համար է՜,—բացականչեցին հիւրերը միաձայն,—հարկաւոր չի, շնորհակալ ենք, ի՞նչ նեղութիւն է։

— Ինչո՞ւ, մի մի թաս խմեցէք, ցուրտ է։

— Չէ, աւելորդ է. գործի ենք եկել. վերջացնենք գնանք,

— Դէ լաւ, Վարդազար, նստիր։

Սոքա, ինչպէս և Մկրտիչը, թէյից հրաժարուեցան, նախ՝ չկամենալով իրանց ախորժակը գրգռել և երկրորդ՝ անշուշտ չկամենալով սուղիային ծախքի տակ գցել։

Իսկ ես անխղճմտանքի պէս արդէն երկրորդ բաժակն էի դատարկում։

— Դա ի՞նչ գործ ունէք էս ժամանակին, Մեսրովբ,—դարձաւ սուղիան գեղեցկադէմ երիտասարդին, որ նստել էր նրա կողքին։

— Խի՞, մեր գործը քեզ յայտնի չէ՞։

— Գուցէ ինձանից ծածուկ բան է,—ասացի ես, կամենալով վեր կենալ տեղից,—ես կարող եմ հեռանալ միւս սենեակը։

— Չէ, չէ,—ասացին հիւրերը միաբերան, կարծես իրանց ամօթապարտ զգալով,—ի՞նչ ծածուկ բան։

Իսկ հաստ, կարճավիզ և թաւամազ երիտասարդը իր բռի և բարկացոտ ձայնով շարունակեց՝

— Ի՞նչ ծածուկ բան, վարժապետ, ամօթ բան խօ չէ, շատ լաւ է դառել, որ դու էլ էստեղ ես։

— Դու էլ մեր մարդն ես էլի, վարժապետ,—աւելացրեց Մեսրովբը,—մեզ համար կամ դու, կամ մեր տէրտէրը. շատ ուրախ ենք, որ դու էլ դատաւոր կ՚լինիս։

— Վարժապետը տէրտէրից էլ լաւ է,—մէջ մտաւ Սահակը իր նիհար, թորշոմած դէմքին մի մարած, անկեանք ծիծաղ տալով,—վարժապետը ուսում առած, հասկացող մարդ է. էսպէս գործեր լաւ կ՚հասկանայ, որովհետև ուսեալ է։ Տէրտէրը ի՞նչ է իմանում բացի իր «տէրողորմեա»-ից։

Նրա սրախօսութեան վրայ ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց, բայց ինքը Սահակը բաւականութեան ծիծաղը դէմքին բոլորի երեսին էր նայում, և երբ տեսաւ, որ ամէնքն էլ անտարբերութեամբ վերաբերուեցին իւր նկատողութեանը, թողեց ծիծաղը և լուռ ու մտախոհ կերպով սկսեց յատակին նայել։

— Դէ ասացէք, ասացէք տեսնենք ցաւներդ ի՞նչ է,—խօսեց՝ քիչ լռութիւնից յետոյ՝ սուդիան։

— Սահակ, ասա,—առաջարկեց Մեսրովը։

— Թող Վարդազարը ասի,—պատասխանեց Սահակը։

— Խի՞, դու լեզու չունե՞ս, թէ խելքդ է պակաս,—արագ կերպով և բարկացած գոչեց բռի Վարդազարը, իւր կլակոտ աչքերը վտիտ Սահակի երեսին յառելով։ Նա այնպէս էր իւր դէմքը խոժոռել Սահակի վրայ, որ կարծես պատրաստ էր պատառ-պատառ անելու նրան։

— Այ տնաշէնի տղայ, էլ ո՞ւր ես հարայ տալիս,—ասաց Սահակը ծիծաղելով և աչքերը աչքերիս ձգելով,—էստեղ ախր մենակ դու չե՛ս, մարդ կայ, սա էլ ձեր տունը չի կամ փողոցը։ Ի՞նչ է եկել քեզ. կռուից հլա չե՞ս կշտացել։

— Լաւ, ե՛ս կասեմ, ղալմաղալ մի սարքէք,—մէջ մտաւ Մեսրովը։—Վարժապետ, մի էնպէս գործ է, որ ամաչում էլ եմ պատմելու. փիս բան է դառել, հիմա մենք էլ չենք իմանում, թէ ի՞նչպէս անենք։ Մի շատ դժուար ու ծանր գործ է։ Միմեանց բերան, հրէս իրեք շաբաթ է, կրծում ենք, ամա մինչև օրս ոչ մի համաձայնութեան չենք եկել։ Հիմա եկել ենք սուդիա Գրիգորի մօտ, որ մի դատաստան անի, նրա խօսքը ընդունենք։ Լաւ է, պարոն վարժապետ, որ դու էլ էստեղ ես։ Շատ լաւ է դառել, շա՜տ։ Դէ, Վարդազա՛ր, Սահակ, էս դուք, էս էլ մարդիքը. ինչ որ սրանք ասեն, մենք ընդունենք. էլ կռիւը, Թակ մահակը, ուշունցը պէտք Թողնենք։ Ինչ վճիռ որ դրեցին՝ դրեցին. համաձայն էք։

— Հա՛, համաձայն ենք, դու պատմութիւնդ ասա։

— Սուդիա Գրիգոր, դէ քեզ յայտնի է էս գործը, բայց պարոն վարժապետը չի իմանում։ Վարժապետ, անցեալ տարի էս իրեք հոգիս և մի ընկեր էլ ունէինք, ողորմած հոգի Ղուլէնց Ռոստամը, էս ամառը մեռաւ, միասին հունձ էինք անում։ Վճռեցինք, ամօթ չլինի ասելը, պսակուենք։ Մեր էս ողորմած հոգի Ռոստամը վեր կենայ ասի թէ՝ տղե՛րք, պսակուելը պսակուելու ենք, ամա էնպէս անենք, որ էստեղ էլ մեզ համար մի օգուտ լինի, միմեանց ձեռք հասցնենք, աղքատ մարդիկ ենք։ Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք, թէ եկէք էսպէս անենք. ես, ասում է, Վարդազարի քրոջը տանեմ, Վար-

դադարը Սահակի քրոջը տանի, Սահակը Մեսրոպի, իսկ Մեսրոպն էլ իմ քրոջը տանի: Էստեղ, ասում է, չհասութիւն չկայ, և լաւ գործ է: Աղքատ մարդիկ ենք, քոյրներս հասած: Քոյրեր ունենք, ասում է, տանը, առանց էն էլ չենք կարողանում լաւ ապրել, կնիկ էլ որ տանենք, էլ ի՞նչպէս կ'կառավարուենք: Համ էլ էդ հասած աղջիկը ի՞նչպէս տանը պահես և ինքդ գնաս պսակուես. էդ ամօթ բան է, և աղջկայ սիրտը կ'կոտրուի, բայց էսէնց, ասում է, համ քոյրներս մարդու տուած կ'լինինք, նրանց համար բարութիւն արած, մեզ համար թեթևութիւն, համ էլ ինքներս կարող ենք կնիկ տանել: Ռոստամը, պարոն վարժապետ, մի շատ լաւ, շատ խելօք տղայ էր: Էս բանը որ ասաց, ամենքս էլ տեսանք, որ օգուտ է. նրա խօսքը ընդունեցինք և, իսկոյն մեր մէջ պայման կապելով, նշանուեցինք: Մի տարուայ նշանուածներ ենք: Ամա դէ ի՞նչ անենք, Աստուած քէասաբի բախտը որ քոռացնում է, էլ ամեն կողմից է քոռացնում: Էս ամառ Ռոստամը վեր ընկաւ, մեռաւ: Աշունքուայ սկզբին երբ որ պատրաստութիւն էինք ուզում տեսնել հարսանիքի համար, Վարդազարը մի օր վեր կենայ ասի թէ՝ ես Սահակի քրոջը չեմ տանելու, որովհետև Ռոստամը, ասում է, մեռել է, և իմ քոյրը գետնին է մնում. քոյրս տանը—մի բեռ, կնիկ էլ որ տանեմ—կ'դառնայ երկու բեռ. ջիմար խոմ չեմ: Քրոջս համար փեսայ գտէք, ասում է, էն ժամանակ ես էլ Սահակի քրոջը կ'տանեմ: Սահակը որ տեսաւ բանը էդպէս է, վեր կացաւ թէ՝ ես էլ Մեսրոպի քրոջը չեմ տանի: ես էլ վեր կենամ թէ Ռոստամի քրոջը չեմ տանի: Ամեն ինչ տակն ու վրայ եղաւ: Տուեցինք մի օր իրար հետ կռիւ արեցինք: Սաղ գիւղը գլուխներիս հաւաքուեց: Էլ ի՞նչ թակ-մահակ, էլ ինչ եախա[1]) պատռել, հայհոյանք, էլ ինչ իրար գլուխ ձղել... Սաղ գիւղում խայտառակ եղանք,—և մինչև օրս էլ հլա սաղ չենք եկել[2]): Վարդազարը թարսուել է, չի ուզում իր խօսքին վրայ կանգնի. չարութիւն է անում: Թէ որ նա Սահակի քրոջը տանի, էն ժամանակ ամեն ինչ գլուխ կ'գայ: Վարդազարի քոյրը, իսկ է, տափին է մնում, ամա դէ նա էլ, պարոն վարժապետ, հասած, սիրուն աղջիկ է. անպատճառ տանող կ'լինի:

---

1) Օձիք: 2) Չենք հաշտուել:

— Հա՛, պա ի՞նչ,— կտրեց նրա խօսքը Վարդազարը տաքացած,— քո արևը վկայ, տանելու են, ինչպէս էլ հեշտ հեշտ ու խօսում է, ջիններս [1]) հաւաքւում են... Ի՞նչ կայ որ քրոջդ Սահակին կ'տաս կազատուես, իսկ իմ վզին երկու բեռ կ'դնէք: Էնքան ախմախ չեմ, փառք Աստուծոյ, խօտ չեմ արածում. երբ մեր պայմանի մի բաժինը քանդուել է, էլ ի՞նչպէս սաղ գործը գլուխ գայ:

Մեսրոպեի և Սահակի համար պայմանի իրագործումը ձեռնտու էր և նրանք աշխատում էին համոզել Վարդազարին, մեր առաջ ամաչեցնել նրան և մեր համակրանքն ու ուշադրութիւնը դէպ' իրանց կողմը գրաւել:

— Պարոն վարժապետը,— խօսեց այս անգամ Սահակը,— ախր էս Վարդազարը ասում է— սաղ պայմանը պէտի քանդենք, ախր բա՜ւ է. վիզը հաստ, կարճ, գլուխը կլոր, խելքը դաքանումը [2]), ինքը տաքարիւն. որ մի քիչ խօսցնում ես, տեսնում ես— բռունցքը քաշեց, ընկաւ ջանիդ... անիծածն էլ խիստ ուժով է, խփեց կամ աչքդ քոռացրից, կամ ատամներդ փշրից... Հա՛, էն էի ասում, թէ ախր, այ մարդ, էս պայմանը ինչպէս քանդենք. քանդելը հեշտ է՞. տէրտէր ենք բերել նշան օրհնել տուել. էն աղջկերանց մի սաղ տարի է անուն ենք արել, պա հիմա թողնենք գեանի՞ն. պա սա խղճմտանք է՞. ախր սա անաստուածութիւն կ'լինի... Պա խեղճ չեն մեր քոյրերը՞:

— Խղճմտանքի վրա՞յ ես խօսում,— գոչեց Վարդազարը բարկացած և արհամարհանքով,— հը՛մ... մեղա՛ քեզ Տէր... Ի՞նչ էր եկել բերանս հա՛...: Լաւ, պա իմ քրոջը որ պահում էք տափին, էն ոչինչ. ո՞վ է նրա հոգսը քաշելու. դո՛ւ, քոսոտ Սահակ... այ ես քեզ մարդ ասողին... Անարդարութիւնը նա է, որ դուք ուզում էք մէջ տեղ օգտուէք, իսկ իմ քրոջը պահէք տանը և վզիս մի բեռն էլ կապէք: Չէ, ես յիմար չեմ. իմ ասածը ասած է. թէ ծուռ եմ խօսում, թող, էս սուդիան, էն էլ վարժապետը, ասեն, Վարդազա՛ր, դու ծուռ ես, և թող վերկենան մի երկու սիլլա [3]) հասցնեն երեսիս: Ի՞նչ կասես, արդարութիւնը սա՞ է թէ չէ:

— Թարս մարդու հետ ի՞նչպէս եօլա գնաս,— ասացին Սահակն

---

[1]) Դևերս: [2]) Կրունկ: [3]) Ապտակ:

ու Մեսրոպը միաբերան.—Թէկուզ դագանակով էլ խփես նրա կողին, էլի չես կարող կտրել:

Եւ լռեցին: Ես էլ լուռ էի: Սպասում էի, թէ սուղխան ի՞նչ կասի: Բայց, կարծես, նա չէր վստահանում, որ առաջինը ինքը բերան բաց անի, այլ սպասում էր, որ ե՛ս խօսեմ: Իմ երկար լռութիւնը տեսնելով՝ նա այլ ևս չհամբերեց և ասաց՝

— Տղերք, դէ ես էդ գործին լաւ տեղեակ եմ, ուլկիշների մօտ դրա մասին խօսք բացուելիս ասել եմ, հիմա էլ կասեմ ձեր երեսին. ձեր էդ պայմանը քանդուել պրծել է և էլ գլուխ գալու բան չի: Դուք շատ սխալուել էք, որ մի էդպիսի պայման էք կապել. դուք պիտի էն ժամանակ միտք անէիք, թէ բան է, մի անբախտութիւն պատահեց, մինը վեր ընկաւ մեռաւ, ի՞նչ կլինի. երկար չէք մտածել, հիմա եղելութիւնը ինքն է քանդում ամէն ինչ: Էդ պայմանի օգուտը ամէնքիդ համար է, և եթէ հիմա ձեզանից մէկը օգուտ ստանալու տեղ երկու տակ վնասվում է, էլ պայմանը գլուխ չի գայ: Ախր դուք էլ Վարդազարի տեղ լինէիք չէիք տանիլ աղջկան: Վնաս չունի որ աղջկերանց անուն էք արել. նրանց կէսը դրանով չգնաց. աղջկայ համար որ դուռ է բացվում, բախտը էլ դէս ու դէն չի նայում: Գնացէք հանգիստ նստեցէք տեղներդ:

— Սուղխա Գրիգոր, խի՞, դու խա՞մ[1]) ես մեր գիւղի սովորութեանը. ինչեր, ասես, չեն խօսելու...

— Վնաս չունի. կասեն էլ, կ'յոգնեն էլ. մարդիկ կ'լռեն, կ'մոռանան և ամէն ինչ էլի իր կարգով կերթայ...: Աշխարհքս էդպէս է: Քի՞չ աղջիկ է պատահել երկու տարով նշանուած, բայց յետոյ խնամութիւնը քանդուել է և աղջիկը էլի մարդու է գնացել... Բախտիցն է... Միտքներիցդ էդ պայմանը հանեցէք և գնացէք տաններդ զինջ նստեցէք: Ի՞նչ կասես սրան, վարժապետ:

Բայց Վարդազարը, չսպասելով իմ խօսքին, տաքացած վեր թռաւ տեղից և բարկութեամբ սկսեց գոչել ընկերների վրայ՝

— Տեսա՞ք, լսեցի՞ք, իշագլուխը ե՞ս եմ թէ դո՛ւք. որ չի լինիլ, ու զահլէս չտանէք, կռիւ չսարքէք հետս: Իսկի քէալլէաներդ[2]) մի բան մտաւ... դէ, էլ իմ երեսը դուրս չգաք. էլ ինձ հետ գործ չու-

---

[1]) Անտեղեակ: [2]) Գանգերդ:

նէք, որ մինն էլ խօսացրիք, Աստուած վկայ, քէալլէաներդ կ'ճեղքեմ. հերիք է... ես ձեր երեխան չեմ. իմացէ՛ք, որ ձեր ձեռքին խեղճ մնացող չեմ. լսե՛ցիք խօսս, դէ ականջներումդ պինդ պահեցէ՛ք, որ խելքներդ մի քիչ գայ իր տեղը. էս էլ սուդիա Գրիգորը. խէր ստացա՞ք:

— Ի՞նչ ես էստեղ էլի հարայ հուրայ գցում,—գոչեց նրա վրայ Մեսրոպը,—քո նոքարդ եմ ի՞նչ է, թէ՞ քէզանից եմ վախենում. արի՜ն կանեմ. ասես թէ ես սրա ձեռքին հաւի ճուտ լինիմ: Գլուխդ էնքան կ'թակեմ, որ բամբակով ջուր կ'խմացնեմ: Պա ի՜նչ. հէնց արդար ես, արդա՜ր... էս մարդիկ տեսնում են, որ դժուար է քեզ հետ գործ բռնիլը, էսպիսի խորհուրդ են տալիս. ախր կողդ էս տան գերանից հաստ է: Ախր հիմիկուանից ասում ես, թէ արի՜ն կանեմ, պա էս մարդը ինչպէս մեր կողմը խօսա...:

— Շատ լաւ եմ անում, իմ քէֆս էնպէս է ուզում, սրանից յետոյ ինչ ուզում էք—արեցէ՛ք, ում ուզում էք—գանգատուեցէ՛ք: Իմ հաշիւը ձեզ հետ վերջացրի. դէ մնաք բարով...:

Վարդազարը արագութեամբ վեր թռաւ տեղից, մօտեցաւ սենեակի դռանը, շտապով հագաւ տրեխները, դուրս եկաւ սենեակից և դուռը ետևից ամուր փակեց:

Սուդիայի խօսքերին—

— Այ տղայ, ո՞ւր ես գնում, համբերիր հլա... էնպէս էլ տաքարիւն տղայ կ'լինի,—Վարդազարը ականջ չդրեց: Նա կատաղած դուրս թռաւ փողոց, անշուշտ, մտքումը Մեսրոպին ու Սահակին հայհոյելով:

V.

Վարդազարի ընկերները մնացել էին լուռ, ամօթահար և յուզուած: Նոցա դէմքերը, մանաւանդ Մեսրոպինը, շառագունել էին: Շարունակ իմ երեսին նայելով՝ նոքա, կարծես, ցանկանում էին դէմքիս արտայայտութեան մէջ այս հարցի պատասխանը կարդալ. «Արդեօք ե՞ս էլ վրդովուած եմ կատարեալ Վարդազարի կոպիտ վարմունքից, և իրանց հետ արդեօք համամիտ եմ իրանց նեղութեան մէջ»:

— Մեսրոպը,—ընդհատեցի ես այդ խորհրդաւոր լռութիւնը,—շատ ուրախ եմ, որ այդպիսի վերջաբան է ունեցել ձեր տարօրինակ պայմանը. տնաշէնի տղերք, ապա դա լսուա՞ծ բան է. այդ աղջկերքը տաւար են թէ՞ ոչխար, որ այդպիսի առուտուր էք անում: Շատ լաւ, տեսնենք—աղջկերքը իրանց փեսացուներին սիրում են, նրանց կամքը իսկի հարցնող է եղե՞լ: Ախր այդ տեսակ ամուսնութիւնը վայրենութիւն, անարդարութիւն է:

Մի րոպէ Սահակն ու Մեսրոպը շփոթուեցան իմ հարցից, այնքան անակընկալ էր այդ նրանց համար: Ոչինչ չկարողացան սկզբում պատասխանել և շշկլուածի նման ինձ էին նայում շարունակ, սպասելով թէ էլի ի՞նչ կասեմ:

— Դէ արել ենք էլի,—պատասխանեց Մեսրոպը մեքենայաբար:—Պարոն վարժապետ,—շարունակեց նա փոքր ինչ մտածելուց և սիրտ առնելուց յետոյ,—խի, մենք չե՞նք իմանում, որ էդ վատ բան է. ի հարկէ, մարդ ու կնիկ սիրով պիտի լինին, սաղ գան իրար, կամ թէ աղջկայ ու տղի կամքը պէտք է հարցնեն, այսինքն՝ թէ աղջիկը, տեսնենք, իւր յօժար կամքո՞վն է գնում. բայց դէ չի լինում. Ճա՜ր չկայ. քեասիբութի՜ւն է. ու էսպէս չանենք, ախր պա ինչպէս եօլա գնանք: աղջիկ խիզան է. մսացու տաւար կամ ղօչ[1]) չէ, որ պահես տանդ չաղացնես: Մսացուն կամ ղօչն էլ խոմ երկար ժամանակ չի կարելի պահել. միսը խարաբ կ'դառնայ: Չի լինում, աղջիկ խիզան է, հասաւ, պիտի մարդու տանք. պահենք, մեզ համար ծանրութիւն է, և աղջկայ բախտն էլ քոռանում է, որովհետև հասակն առնելուց յետոյ նրան էլ տանող չի լինիլ: Մին էլ—էստեղ քեասիբ մարդկանց օգուտ կայ. դժուար է մեզ նման մարդկանց համար կնիկ տանելը, մանաւանդ եթէ տանը քոյրեր ունենք. չտանելն էլ չի լինում... Ի՞նչ անենք. խի՞, չե՞նք հասկանում, որ քո ասածը լաւ բան է, բայց դէ չի լինում, Ճա՜ր չկայ, աղքատութի՜ւն է:

— Լաւ, ես ընդունում եմ, որ աղքատութիւնը և այլ հաշիւներ դրդել են ձեզ այդ պայմանը կապելու, բայց ախր պիտի հասկանաք, որ դա վատ բան է, և քանի որ վատ է, աշխատեցէք չանել: Դիմացէք մի կերպ կամ ամուսնացէք: Թող քոյրներդ տանը

[1]) Խոյ:

տեան, մինչև որ փեսայուները իրենք իրենց կ'գտնուեն։ Ի՞նչ ծանրութիւն են նրանք ձեզ համար. չէ՞ որ այն խեղճերը նոյնպէս տան համար աշխատում են, դա ոչի՞նչ։

— Է՜հ, վարժապետ, տեան տա՛նը. հեշտ է ասելը. այդ կարելի՞ բան է. դժուար է. աղջիկը խեղճ է. մենք էլ նամուս ունենք. մինն էլ որ ի հարկէ ծանրութիւն է դառնում, քանի որ մենք էլ կնիկ ենք բերելու. իսկ առանց մեր քոյրերի մենք կ'կառավարուենք՞

— Շատ բարի, բայց որ վերջ ի վերջոյ այնքան ցաւալի դէպքեր են պատահում. քի՞չ էք լսել. մէկ մարդ ու կնիկ սաղ չեն գալիս իրար հետ. մարդը միշտ թակում է կնկանը. կինը փախչում, գնում է հերանց և էլի ընկնում է իր ծնողաց կամ եղբայրների վզին։ Դա սրան ի՞նչ կասես։ Մի ուրիշ կնիկ, իր մարդուն չսիրելով, ատելով, գնում է ուրիշի հետ... պա դա ոչի՞նչ ձեզ համար։ Մի աղջիկ, երբ նրան զոռով տալիս են չսիրած տղին, իրան կամ քարափից անդունդն է գլորում, կամ դետն է ընկնում խեղդվում։ Անցած տարի խոմ մի այդպիսի դէպք հէնց ձեր գիւղումն էր պատահել։ Ախր մինչև ե՞րբ. պա դա ձեզ համար խրատ չպիտի՞ դառնայ։ Ձեր քոյրերն են, մարդ արարածներ են, ախր նրանք էլ հոգի, սիրտ, ցանկութիւններ ունեն. պա դուք հէնց տաւարի պէս անում էք առաջներդ, տանում բաղարում ծախում, ախր դա չի կարելի։

— Պարոն վարժապետ,—ընդհատեց ինձ Միսրօվբը,—դրանք բոլորն էլ ճիշտ ես ասում, շատ լաւ խօսքեր են, մեր գլուխն էլ մտնում է. ի հարկէ անցեալ տարուայ էն աղջկայ իրան խեղդելը մեզ խրատ պիտի լինի, և մենք շատ ափսոսացինք, զարհուրեցինք, աղջկայ ծնողներին անիծեցինք, որ իրանց զաւակին իրանց ձեռքերով տարել կրակի մէջ են գցել. բայց դէ ի՞նչ արած, սովոր ենք, էնքան սովոր ենք էսպէս աղջիկ մարդու տալուն, որ էդպիսի դէպքերի լուրը մի ականջներովս մտնում, միւսով դուրս է գալիս։ Ամեն մէկս չարանում է, մարդիկ ենք, սրտներս ցաւում է, բայց որ գործը մերն է ընկնում, մոռանում ենք ամեն բան։ Ի՞նչ արած. ուրիշ ճ՞ար չկայ։ Որ քեասիբ չլինէինք, էդպիսի պայման չէինք կապիլ, կամ թէ աղջկայ կամքը կ'հարցնէինք. բայց դէ ուրիշ ճար չունինք, մանաւանդ որ աղջիկ խիզանին տանը պահելը հեշտ բան չի. մի կերպ պիտի տեղ անենք։ Քեզանից ի՞նչ ծածկեմ, վարժապետ, երեք

քոյր ունիմ, երկքն էլ հասած. ի՞նչ անեմ, պահեմ տանը, յետոյ ինձ ուշունց կ'տան, կասեն գէօռբագէօռ[1]) լինիս, այ եղբայր, մեզ համար հոգացողութիւն չարեցիր, մենք էլ մնացինք էսպէս անբախտ, վիզներս ծուռ: Ասածներդ, վարժապետ, լաւ բան է, այսինքն՝ որ աղջիկը իր կամքով գնայ մարդու, բայց դէ չի լինում, ճա՜ր չկայ...:

— Լաւ, գոնէ դուք հարցրե՞լ էք ձեր քոյրերից, թէ նրանք, արդեօք ցանկանո՞ւմ են գնալ այս ինչ տղային. ախր առանց դրան ամուսնութիւն կլինի՞, — գոչեցի ես ներքին յուզմունքից վրդովուած:

— Չէ, չենք հարցրել. այ, դէ ի՞նչ հարցնենք, ի՞նչ պիտի ասեն. ասելու են չենք գնալու. դէ իրանց էլ յայտնի է մեր դրութիւնը. իրանք էլ գիտեն մեր տան ցաւն ու դարդը, դուռ է բացուել, պիտի գնա է՛լի. էլ ի՞նչ երկար ու բարակ մտածել է հարկաւոր: Էնպէս աղջկերք էլ, որ վերջը իրանց սպանում են, հազարից մէկը հազիւ կ'պատահի: Օրինակ—Սահակի նշանածը սկզբում մի քիչ տրտնջացել էր, թէ ես նրան չեմ գնալ, թէ նրա երեսին մազ չկայ, ռանգը սպրդնած է, ուրիշները նրան մասխարա են անում, էսպէս, էնպէս, ամա յետոյ կամաց կամաց խելքի եկաւ, երբ որ հասկացաւ իրանց տան դրութիւնը, երբ որ տեսաւ, որ եթէ չգնայ, եղբայրն էլ իր պատճառով կնիկ չպիտի տանի, էլ ոչինչ չխօսեց: Ուրիշներն էլ դրա նման: Ի՞նչ արած. մեր կեանքը, մեր սովորութիւնն էլ էսպէս է. ուրիշ ճա՜ր չկայ:

— Շատ բարի, Մեսրոպը, բայց դէ հիմա դու ի՞նչ կասես սուդիայի խօսքերին: Նա շատ արդարացի կերպով վճռեց ձեր հարցը: Ես իմ կողմից կաւելացնեմ, որ այդպիսի ամուսնութիւնը չէ հիմնուած սիրոյ, յօժար կամքի վրայ, և ուրեմն անարդարութիւն, անխղճմտանքութիւն է:

— Էհ, վարժապետ, շատ ապրես դու, — մէջ մտաւ Սահակը, — Աստուած վկայ, հաւատացնում եմ քեզ, որ մեր աղջկերանցից մինն էլ չի կանգնիլ, ասիլ, թէ ես էս տղին չեմ սիրում կամ չեմ ուզում նրան գնալ: Էդպէս բան չի եղել մեր մէջ, որ լինէր հա՜...:

— Ինչպէս չկայ, Մեսրոպը խօմ հէնց հիմիկս ասաց դրա մասին, եթէ չկայ էլ, երևի նրա համար, որ ձեր քոյրերը վախենում

---

[1]) Գերեզմանդ անիծուի:

են ծպտուն հանել դրա մասին և ամեն ինչ մեռցնում, թաղում են իրանց սրտներում. դա անխղճութիւն, բռնութիւն, անբարոյականութիւն է։ Ո՞վ է մեղաւոր, որ դուք ձեր աղջկերանց այդպէս էք սովորեցրել։

— Մեզ համար էլ հէնց էդ է ձեռնտու, վարժապետ,— ասաց Մեսրովբը ծիծաղելով։

— Ի՞նչ անենք, վարժապետ,— դարձաւ ինձ Սահակը,— էսպէս ենք մեծացել, էսպէս ենք սովորել։

— Այդպիսի մի պայման,— շարունակեցի ես,— ինքն ըստ ինքեան շատ զզուելի է և ցանկալի չէ, որ գլուխ գայ։ Բացի դրան, այդ պայմանից ամենքը պիտի օգտուեն. այժմ եթէ մէկը երկու տակ տուժում է, պայմանն էլ պիտի լուծուի։

— Ի՞նչ արած,— խօսեց Մեսրովբը խղճացած և վիրաւորուած ձայնով,— դուք էլ որ էդպէս էք խօսում, ի՞նչ ասենք. դէ, երևի, աշխարհքումս բախտը զոռով մարդկանց կողմն է միշտ թեքուած. ի՞նչ ասենք. պիտի հնազանդուենք։ Թող մենք էս վնասը քաշենք, մի և նոյն է, ի զուր կռիւ է լինում։

— Ի՞նչ վնաս, այ մարդիկ,— ասաց սուղիան զարմանքով և վրդովուած,— ոչ ոք մէջ տեղ վնաս չի քաշում։

— Է՜հ, ասում ես էլի,— պատասխանեց Սահակը նեղացած և երեսը մի կողմ դարձնելով։

Կրկին տիրեց լռութիւն։ Քիչ յետոյ հիւրերը վեր կացան տեղներից, մօտեցան դռանը, հագան տրեխները և քիթն ու ունքերը կախ, սուս ու փուս դուրս եկան սենեակից։

Սուղիան ոչինչ չխօսեց հիւրերի հեռանալուց յետոյ։ Նա ևս հեռացաւ սենեակից և քիչ յետոյ վերադարձաւ հարսի հետ միասին։ Հարսը կռնատակին ունէր պղնձի մի սինի, որ սփռոցով ծածկուած էր։ Ընթրիքն էր։ Հարսը սփռոցը տարածեց յատակի վրայ, հացի ծալած լաւաշները շարեց շուրջը, դրեց կաւէ աղամանը, սոխով լի սկուտեղը և երկու կտոր պանիրով սկաւառակը, որից յետոյ հեռացաւ սենեակից։ Սուղիան ասաց «Հայր մեր»-ը, մի մի թաս թթու արաղ խմեցինք, որի համը ջրից քիչ էր զանազանւում, իսկ այնուհետև սկսեցինք ընթրել։ Հասարակ պարզ և աղքատիկ սեղան էր։ Բաւականին ախորժակով էինք ուտում հացն ու պանիրը, մա-

նաւանդ ես, որ յոգնած էի։ Լաւաշի կտորը գցում էինք թեժացած կրակի վրայ. հացը տաքանում էր թաժայ հացի համ ստանում։ Իսկ թաժայ հացն ու պանիրը այնքան համեղ է, որ կշտանալ չի լինում։ Այնքան կերանք, որ ծնօտներս յոգնեցան։ Այնուհետեւ մի մի բաժակ օղի էլ խմեցինք եւ ետ կացանք սեղանից։ Ես շնորհակալութիւն յայտնեցի տանտիրոջ, սեղմելով նրա ձեռքը։

— Աւել պակաս կ'բաշխես, վարժապետ, դէ գիւղ տեղ է, ամէն ինչ դժուար է գտնվում։

Հարսը նորից ներս եկաւ, ժողովեց սեղանը սինիի մէջ, մի կողմ դրեց, յետոյ մեզ համար անկողին պատրաստեց եւ սեղանն կանատակը առնելով դուրս եկաւ։ Ես պառկեցի մահճակալի վրայ պատրաստած անկողնում, իսկ սուդիան յատակի վրայ պատրաստած։ Ճրագը մարեց եւ ես տիրող խաւարի մէջ աշխատում էի ի մի ժողովել իմ ստացած տպաւորութիւնները այդ տարօրինակ պայմանի մասին մի եզրակացութիւն անելու, սակայն միտքս կամքիս չէր հնազանդվում, այնքան քաղցր էր քունը. . .։

Իմ գլխով անցաւ գիւղացոց տգիտութիւնը, որի իշխանութեան ստրուկներ են դարձել նոքա, տիրող թշուառութեան շնորհիւ, յիշեցի Մեսրոպի խօսքերը աղջկերանց ուզենալու կամ չուզենալու վերաբերեալ... Այո, աղջկայ մտքով իսկի չի էլ անցնում սիրելու կամ չսիրելու հարցը, այլ նա՝ առանց դէս ու դէնի՝ անլեզու կենդանու նման հպատակվում է իր տիրոջ կամքին, որովհետեւ նա գիտէ, որ տանը մնալ չի կարելի, ծանրութիւն է լինելու թէ տանեցոց եւ թէ եղբայրների համար, որովհետեւ նա միայն մի բանի մասին հասկացողութիւն ունի, այն է՝ մարդու պիտի գնալ... Ի՞նչ ելք ցոյց տայի նրանց, բարդ խնդիր էր ինձ համար... Իսկ յոգնած, ջարդուած մարմինս, քնելու սաստիկ ցանկութիւնս թոյլ չէին տալիս գոնէ պարզելու հասարակական կեանքի այն ընթացքը, որ այդպիսի դրութիւն է ստեղծել կամ այն հոսանքը, որ կ'տանէր դէպ բարելաւութիւն։

Կամաց-կամաց աչքերիս կոպերը ծանրանում էին, գիտակցութիւնս թուլանում էր, երբեմն միայն զգաստանալով դրսում մռընչող քամուց, որ պատռել էր պատուհանի փեղկի թուղթը եւ անդադար խշխշացնում էր։

— Անտէ՛ր քամի,—մրմռաց սուլթան, ինքն իրան շարժուելով իր տեղում,—լաւ նշան չի. ձիւն է գալու:

Իմ գիտակցութիւնը կրկին սկսեց մարել, զգայարաններս նորից սկսեցին թմրել. միայն մի անգամ զգացի, այն էլ մութ, շաղուած գիտակցութեամբ, որ բերանս բաց արած հանգիստ փսփսացնում եմ. իսկ այնուհետեւ. . . . .

VI.

...Տեսայ, որ արդէն լուսացել է և սուլթան, միսած ձեռքերը տրորելով, ողորմի Աստուած է ասում ինձ: Առաւօտեան ժամից էր վերադառնում:

— Վարժապետ, վեր կենալու չի. վերմակիդ տակը տաք արա. էնքան ձիւն է եկել, որ էլ ի՞նչ ասեմ. ծառերի ճղները քիչ է մնում կոտրատուեն: Դէ տերևները վրան ի՞նչ ծանրութիւն կ'լենի: Շատ ծառ է փչանալու:

— Այդ էլ իմ բախտիցն է. երեկ անձրև կերայ, այսօր էլ ցուրտ ու ձիւն պիտի կուլ տամ: Դու այն ասա, Մկրտիչը գնացե՞լ է գիւղացոց իմաց անելու:

— Չէ՜, հէր օրհնած, ո՞վ էս ցրտով տեղից զլրար կ'գայ: Չի գնացել, զուր էր, որովհետև ոչ ոք էլ չէր գալ. էս օրուայ եղանակը նրանց համար լաւ պատճառ է:

Ես չարութիւնից չգիտէի ինչ պատասխանել: Սկսել էի ինքս ինձ նախատել և արհամարհել կարճամտութեանս համար:

— Է՜հ, գնա՛նք,—ասացի ինքս ինձ սաստիկ յուզուած,—այստեղ, ուր ամեն ինչ հիմնայատակ փլուած է, ոչինչ չի կարելի շինել:

Դա յուսահատութեան և անկարողութեան մի ճիչ էր, որ, աղաղակ արձակելով իմ հոգու մէջ, ստիպեց ինձ վեր թռչել անկողնուց, շտապով հագնուել և ճանապարհուել դէպ մեր գիւղը:

Կէս ժամից յետոյ ես արդէն վերադառնում էի լեռնային այն կածանով, որը եկած ձիւնի պատճառով աւելի ևս վտանգաւոր էր դարձել:

Այժմ նա անկենդան ձորի մերկ ապառաժների հետ միասին նոյնքան յուզիչ և կուրծք ճնշող էր, որքան և հացաղուրկը իր մռայլ ու աղքատ կեանքով...:

Ա. ԱԴԵԼԵԱՆ.

ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐ

(Գ. Զուբար՝ «Վէպիկներ և պատկերներ». «Հասօ».)

«Я думаю, что женщина—человѣкъ и что ничто человѣческое ей не чуждо».

Ник. Михайловскій: ,,Письма о разныхъ разностяхъ'', XII.

I.

«Կեանքը խաղ չի, ոչ էլ զուարճութիւն... Կեանքը ծանր աշխատանք է»,—ասել է Եւրոպայի բոլոր անկիւններում անուն հաշակող տաղանդաւոր ռոմանիստը: Այո, բազմադարեան փորձն էլ հէնց նոյնն է պնդել՝—կեանքը ծանր աշխատանք է: Տարիներ են անցնում, տարիներ գալիս. կեանքը ծածկվում է հազար ու մի տեսակ պէսպէս զարդերի, զիմակների տակ,—բայց էլի նա մնում է—ծանր աշխատանք:

Սակայն ինչո՞ւ է, ո՞ւմ համար է, յանուն ո՞ր կուռքի մարդկութիւնը չի դադարում այդ անընդհատ աշխատելուց:

Ամեն մի անհատ, ծնուելով, արդէն իրաւաբանական կարողութիւն է ստանում ապրելու: Եւ մենք պէտք է տեղ տանք նրան մեր ընկերութեան, մեր «milieu»-ի մէջ: Նա ունի իրաւունքներ, ունի պարտաւորութիւններ.—մենք պէտք է բացենք նրա առաջ այդ իրաւունքների, պարտաւորութիւնների ճշմարիտ իսկութիւնը, և աղաւաղել ու աղճատել այդ իսկութիւնը մենք պէտք է չհամարձակենք երբէք: Անգամ ղենուորը, հասարակութիւնից, շփուող կեանքից բաժանուած այդ մեքենայ-էակը, նախ քան իր ծառայութիւնը

սկսելն, իր ծառայական զգեստը հագնելն՝ իր իրաւունքների և պարտաւորութիւնների հետ է ծանօթանում։ Իրաւունքներից նա պէտք է օգտուի, որ մի գուցէ իզուր նեղեն, հալածեն նրան, իսկ պարտաւորութիւնները պէտք է կատարի։

Մարդկութիւնը քրտինք-արիւն է թափում, անթիւ մեքենաներ հնարում, փիլիսոփայական տասնեակ սիստեմներ է ստեղծում, նոր և նոր Շէքսպիրներ ծնում, մարդկութիւնը... ծա՛նր աշխատում է, որ ապահովացնի իր անդամների կեանքը, որ այդ անդամներից ամեն մէկը գոհ, բաւական մնայ իր գոյութիւնից։ Արդիօք — որքան է իրագործուել մարդկութեան այդ իդէալը, գաղափարը։ Թո՛ղ կեանքն ինքը պատասխանէ այդ հարցին։

Նայենք չորս կողմ։ Նոյն լացը, նոյն ողբը, որ դարեր առաջ թնդում էին, լսում ենք և այժմ. առաջուայ պէս հալածվում է տկարը, առաջուայ պէս ատելի աղքատ է։ Ամեն մէկը մեզանից ձգտում է որքան կարելի է շատ հարստութիւն, շատ իրաւունքներ ձեռք բերել, կամենում է լինել «մինը նրանցից», որոնք ազգեր են հրամայում, բայց ոչ ոք չի էլ մտածում, որ այդ սնափառութիւնից, այդ ապօրէն ձգտումներից քանի քանիսներն տանջվում են անմեղ... «Լսի՛ր, Հասօ, — ասում է ծերացած մայրը իր որդուն պ. Զուբարի գրուածքներից մէկի մէջ, — մարդիկ անխիղճ են — ես լաւ եմ ճանաչում նրանց. եթէ նոքա տեսնեն քեզ ընկած ճանապարհին՝ հիւանդ, քաղցած, ծարաւ, օգնութեան փոխարէն կանցնեն վրայովդ. այդպէ՛ս են մարդիկ»[1])...

Ընթացիկ կեանքը, կարծես, ինքն ըստ ինքեան արդէն, երկու մասն է բաժանվում. ուժեղը հրամայում է, տկարը — հնազանդում։ Երբ որ տէրը իր ծառայի կամ ծառայողի վրայ գոռում է, սպառնալիքներ թափում նրա գլխին, նա, 'ի հարկէ, իր սրտի մէջ համոզուած է, որ ծառան կ'լռի, չի պատասխանիլ մէկին երկու. չէ՞ որ, հակառակ դէպքում, նա կարող է վռնդել նրան իր տնից, զրկել կտոր հացից։ Երբ որ դաստիարակը իզուր նկատողութիւն է անում, պատժում է աշակերտին, նա հաւատացած է, որ աշակերտը կամ ներողութիւն կ'խնդրի, կամ թէ կ'լռի. չէ՞ որ, հակառակ դէպքում,

---

[1]) Գ. Զուբար. «Հասօ» (պատկեր)։

նա կարող է պատիժը սատակայնել: Երբ որ Հայրը անպատվում է իր չչափահաս որդուն, նա համոզուած է, որ պատասխանը չի լսիլ, ուրովհետև այդ որդու գրեթէ ամբողջ ապագան առ այժմ հօրից է կախուած... Եւ այդպէ՛ս ամենուրեք... Ուժեղի ձայնը տիրապետում է ամէն տեղ. մենք թափառում ենք խաւարի մէջ. մարդկութեան իդէալը նսեմացել է:

> Зло вокругъ черезчуръ ужъ гнететъ,
> Ночь вокругъ черезчуръ ужъ темна!..

Ես ասացի, ուժեղի ձայնը տիրապետում է ամէն տեղ: Այդ անկասկած փաստը պարզօրէն մերկանում է նոյնպէս, երբ որ մենք համեմատում ենք կնոջ և տղամարդի սօցիալական դրութիւնը մեր առօրեայ կեանքում: Դեռ հին մարդկանց մօտ կինը համարվում էր տկար արարած: Իր այդ տկարութեան համար նա շատ հալածանքների է ենթարկուել. դարեր շարունակ նա ապրել է ստրկութեան մէջ. միշտ զուրկ է եղել ազդեցիկ դերից կեանքի այս և այն երևոյթի վրայ, եթէ աչքի առաջ չունենալ, 'ի հարկէ, մի քանի մ—ոց անձնաւորութիւններ... Հէնց այժմ էլ, XX-դ դարու նախընթաց օրը, կինը չի ապրում այնպէս ինքնակամ, ինչպէս տղամարդը: Հէնց այժմ էլ, անգամ կրթուած, լուսաւոր ազգութիւնների մօտ, վայրենիներին մի կողմ եմ թողնում, կինը անմիջական կախում ունի իր տղամարդից, թէպէտև այդ կախումը համեմատել 'ի հարկէ, չէ կարելի առաջուայ դրութեան հետ...

Մեզանում էլ կնոջ դրութիւնը ծանր է և ստոր, աւելի ստոր քան Եւրոպայի ազգերի մօտ: Ինչպէս առհասարակ բոլոր սօցիալական հարցերում,—այդ հարցումն էլ մենք շատ առաջ չենք գնացել: Հայը դեռ հեռու է այն մտքից, որ կնոջը իրան ընկեր ճանաչի, իր նման մարդ՝ հաւասար իրաւունքներով, հաւասար պարտաւորութիւններով: Հայուհու դրութիւնը ողորմելի է—այդ փաստ է, մի փաստ, որ լսում ենք ամէն կողմից, որ կարդում էք ամէն տեղ: Բայց նա, այդ փաստը մեզ դեռ իրաւունք չի տալիս յուսահատիլ: Դրա հետ միասին փաստ է և այն, որ հայուհու ողորմելի դրութիւնը—թէպէտև կամաց-կամաց, բայց—բարւոքվում է:

Կեանքը, ինչպէս և բնութիւնը, չի սիրում կայթիւններ. ամեն ինչ նրա մէջ ստեղծվում է հետզհետէ, պատմական հոսանքով: Ազատութիւնը մի անգամից չի հասնում մարդուն, այլ նա կազմվում, գոյանում է տասնեակ տարիների, երբեմն էլ դարի ընթացքում: Նայեցէք մեզ հարևան ազգին—ռուսին. վաղո՞ւց է նրա մօտ կինը որ և է պատուի, կշռի արժանացել. չէ՞ որ դեռ այնքան հեռու չեն և կարծես էլ թարմ, կենդանի են այն ժամանակներն, երբ այնտեղ էլ տիրում էր самодурство[1]), կատարեալ բարբարոսութիւն: Կարդացէք տիկ. Իւ. Ժադովսկաեայի բանաստեղծութիւնները. դրանք բոլորն էլ խօսում են խեղճ կնոջ անտանելի դրութեան մասին դեռ 50-ական թուականներին, երբ գլխաւորապէս գործում էր պօէտեսան: Կնոջ ստրկութեան տանջանքառատ հառաչանքներ, միայնակցութեան, անօգնական կեանքի, դառն անպատւութեան զգացմունք, ամօթանք իր անզօրութիւնից, տկար լինելուց, ունայն, զուր ձգտումներ մխիթարուել, թմրել՝ երբեմն կրօնական յափշտակումների, երբեմն էլ բնութեան գեղեցկութիւնները զննելու մէջ—այդ եղանակներն են առաջ բերում տիկ. Ժադովսկաեայի գրուածքները...—Կամ աւելի պարզ՝—թերթէք Օստրովսկու այն պիէսաներն, որոնց մասին Դոբրոլիւբովը ասել է *темное царство*, մութ աշխարհ: Այդ ամենն ապացուցանում են, որ ռուս կինն էլ մի ժամանակ իր մարդու աղախինը, ստրուկն է եղել:

Բայց ես դեռ դառնալու եմ այդ հարցին, երբեմն-երբեմն համեմատելով ռուս կնոջ անցեալը հայուհու ներկայի հետ:

Մեր ամսագիր-ժողովածուներից մէկի մէջ ես մի անգամ արդէն խօսել եմ հայ կնոջ դրութեան մասին, և եթէ այժմ կրկին վերադառնում եմ դէպի այդ հարցը—դա այն պատճառով է, որովհետև մտադիր եմ, քննելով մեր երիտասարդ քերթողներից մէկի վէպիկներն, առաջ բերել նոր փաստեր և ապա յայտնել իմ խորհրդածութիւններն այդ փաստերի առթիւ:

Մեր աղքատ գրականութիւնից ես ընտրել եմ պ. Գ. Զուբարին (այն էլ—նրա չորս վէպիկները միայն՝ «Բարեգործներ», «Մահ-

---

1) Տես. Դոբրոլիւբովի «Темное царство» յօդուածը. Сочинен. т. III. (СПБ. 1885 г.)

տեսի Սարգիս», «Նա սպասում է դեռ», «Հասօ») և նրա հերոսների մասին եմ մտադիր զրուցելու [1]։

Ասացի՝ ընտրել եմ, և ընթերցողս պէտք է թէութեամբ (условно) հասկանայ այդ։ Ես կանգ եմ առել պ. Զուբարի վրայ ոչ թէ այն պատճառով, որ ուրիշ աւելի յարմար քերթող չեմ գտել մեր գրականութեան մէջ,—ամենևին. պ. Զուբարի գրուածքներով հետաքրքրուելն ունի իր հետևեալ պատճառները։ Դեռ աշնանն էր, երբ ես լսեցի, որ պ. Զուբարը մի նոր վէպ է գրել հայ ինտելիգենտների կեանքից և թէ այդ վէպը տպուելու է նոր լոյս տեսնող «Խօսք» կիսամեայ հանդիսի մէջ։ Այստեղ իմ մէջ միտք յղացաւ՝ վէպը լոյս տեսնելուն պէս մի յօդուած նուիրել նրան։ Այդ պատճառով ես ձեռք բերեցի պ. Զուբարի «Վէպեր և պատկերներ» գրքոյկը, որ ծանօթանամ նրա այն գաղափարների հետ, որոնք արտայայտուել են արդէն լոյս տեսած գրուածքներում։ Գրքոյկը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց ինձ վրայ։ Ես տեսայ, որ այնտեղ կեանք կայ, իրականութիւն կայ. կան հետաքրքիր հարցեր, որոնցով կրիտիկան պէտք է հետաքրքրուի անպատճառ։ Եւ ես վճռեցի առաջ խօսել պ. Զուբարի արդէն լոյս տեսած գրուածքների առթիւ և յետոյ արդէն զբաղուել նորա նոր վէպով։ Ուրեմն—ընթերցողս տեսնում է, որ պ. Զուբարի վրայ կանգ առնելն ոչ այլ ինչ է, եթէ բարի պատահականութիւն։

Պ. Զուբարը այն գրողներից է, որոնք երիտասարդ ծնվում են, երիտասարդ ապրում, երիտասարդ էլ մեռնում... և երիտասարդ ոչ հոգւով ու մարմնով, այլ իրանց գրչի զօրութեամբ։ Նա այն քերթողներից է, որոնք, ստանալով մայր-բնութիւնից 'ի պարգև գրելու շնորհք, տաղանդի սաղմեր, չեն զարգացնում այդ շնորհքը, ոչ էլ ամրացնում են սաղմերի հիմքը։ Նրանց բնաւորութեան մէջ չկայ այնպիսի մի երակ, որ ձգտի անխոնջ աշխատելու։ Իրանց կեանքի հօսանքը չպղտորելու համար՝ նրանք աւելի բարւոք են համարում խեղդել բնութիւնից ստացած շնորհքը—միայն թէ «ղալմաղալից հեռու»։ Եւ ձայն են հանում նրանք միայն այն ժամանակ, երբ արտաքին տպաւորութիւնների ճնշող ոյժը հասնում է իր գագաթնակէտին։

---

[1] Պ. Զուբարի հերոսների մասին խօսելու եմ մի ուրիշ անգամ։

Բանը նրանումն է, որ վիպասանը ապրում է արտաքինից ստացած տպաւորութիւններով. այդ տպաւորութիւնների ստանալու, ըմբռնելու ընդունակութեան մէջ էլ հէնց պահուած է նրա տ–ա–ղ–ա–ն–դ–ը: Կրթուած զարգացած է քերթողն, ունի կենդանի սիրտ իր կրծքում, գործունեայ պատանու խաղացող արիւն իր ջղերում և գրելու շնորհք,—նա չի կարող անտարբեր նայել իր շուրջը սփռած հասարակական կեանքին, որովհետև այն տպաւորութիւնները, որոնք կազդեն նրա վրայ արտաքինից, չեն տալ նրան հանգստութիւն,—այլ, այդպէս թէ այնպէս մասնակցելով ընդհանուր շարժումին, նա ինքն-ևս կ՚նպաստէ այդ շարժումի առաջադիմութեանը:

Ապրելով որ և է շրջանում՝ ես իրաւունք եմ ստանում օգտուել այդ շրջանի հարստութիւններից: Բայց մի՞թէ բարոյական կ՚լինի իմ վարմունքը, եթէ օգտուելիս—օգտուեմ, իսկ տալիս եմ քաշուեմ: Հասարակական կեանքը մի արկղ է, ուր ամէն ոք քցում է իր լուման. այդպիսով ստացվում է մի գումար, որն և պէտք է խղճմտանքով բաժանուի բոլոր անդամների վրայ: Ահա գաղափարական կեանք, գաղափարական կազմակերպութիւն, որին պէտք է ձգտի հասարակութիւնը: Մի մարդ, որ չի տալիս իրան պահող, պահպանող «milieu»-ին այնտեղ, որտեղ կարող է, նա իրաւունք չունի ասելու, թէ ապրում է ճշմարիտ կեանքով, այսինքն՝ այնպէս, ինչպէս անաչառ խղճմտանքն է պահանջում: Դրանի՞ց էլ պարզ, հասարակ դլութիւն: Մինչդեռ, տեսէք, դրա դէմ էլ գլուխ են բարձրացրել:

Պիսարևը, ռէալիզմի քաջ զինուորն, 'ի պաշտպանութիւն «անձնական ազատութեան» սկզբունքի տեսէք թէ ի՛նչ է ասում՝ «չափել մարդու արժանաւորութիւնները միմիայն այն օգուտով, որ նա բերում է իդէային կամ շրջապատող հասարակութեանը, արդար չէր լինիլ: Եթէ մարդ չի վնասում ուրիշին, եթէ նա ապրում է խորասուզուած իր բաւականութեան, իր բերկրանքի մէջ, չճնշելով ուրիշի ազատութիւնը, այն ժամանակ բարոյական ամենախիստ jury-ն անգամ պէտք է նրան անմեղ ճանաչի: Ինչպէս գործող ույժ—նա զէրօ է, բայց ստիպել ամենքին դէպի գործելն և արհամարհանքներ թափել նրա գլխին, ով չի կարող և, կամ աւելի

ճիշտ, չի ուզում գործիչների շարքը ընկնել, այդ նշանակում է յանդգնել անձնաւորութեան ազատութեան դէմ և, հերքելով մարդու անկախ մարմին լինելը, նայել նրա վրայ իբրև հասարակութեան ընդհանուր կազմուածքի անթիւ պտուտակներից կամ օղակներից մէկի վրայ» [1]):

Ես հոգւով ու սրտով յարգում եմ Պիսարեվին, նրա տաղանդը, նրա ուղղութիւնը, եթէ աչքի առաջ չունենալ, 'ի հարկէ, մի քանի ծայրահեղութիւններ, որոնք այստեղ ու այնտեղ ցրուած են նրա գրուածքներում, նրա յօդուածների կրթողական ազդեցութիւնը անուրանալի է ինձ համար, բայց այն ծայրահեղութիւնը, որին նա հասնում է «անձնական ազատութիւնը» պաշտպանելու ժամանակ, կամ աւելի ճիշտ՝ այն մոլորութիւնը, որի մէջ նա ընկնում է այդտեղ, ակամայ գրգռում է իմ շուարած հարցականութիւնը:

Պիսարեվը անձնաւորութեան ազատութիւն է քարոզում. Նա, ինչպէս տեսանք, պնդում է, թէ մարդ ոչ թէ հասարակութեան ընդհանուր կազմուածքի անթիւ պտուտակներից կամ օղակներից մէկն է, այլ թէ մի անկախ մարմին: Յարգելի կրիտիկոսը չարաչար սխալվում է: Անձնաւորութիւնը աբսոլիւտ կերպով ազատ լինել չի կարող, որովհետև մարդկային «կեանքն էլ ազատ չի առհասարակ» [2]): Անձնաւորութիւնը չի կարող ապրել այնպէս, ինչպէս ցանկանում է, այլ պէտք է ապրի այնպէս, ինչպէս պահանջվում է նրանցից: Իսկ պահանջողն է հասարակութիւնը, որտեղ նա ծնուել է, ազգը, մարդկութիւնը: Այստեղից էլ պարզ է, որ մարդ իրաւունք չունի խեղդել իր մէջ բնութիւնից ստացած ձիրքերը, շնորհքներն, այլ այդ բոլորը պէտք է զոհի նա ընդհանուրի օգտին: Պարտական կ'մնայ իր ազգին այն մարդը, լինի նա գրականական, հասարական, քաղաքական մարդ—մի և նոյն է, որ չի տալ այդ ազգին այն, ինչ կարող է:

Անտանելի ծանր տպաւորութիւն ես դուրս բերում, երբ որ՝ շնչուած այդ գաղափարներով՝ զննում ես մեր առօրեայ կեանքը, մի կեանք, ուրտեղ ոչ հաւատ կայ, ոչ յոյս, ոչ էլ սէր, մի կեանք, որ

---

1) *Н. Писаревъ:* Сочиен., т. I., стр. 478 (СПБ. 1894 г.).

2) *Л. Н. Толстой:* Сочинен., ч. 13, стр. 835 (изд. 4-ое).

անցնում է փոքրիկ կրքերով, ինչպէս հանճարեղութեամբ ասել է բանաստեղծի դեր, մի կեանք, ուտեղ ոչ կենդանի գիտակցութիւն կայ, ոչ պարտաճանաչութիւն, ոչ էլ անեսական ձգտում։ Բարձրագոյն գործիչներից սկսած մինչև ետին մշակը—ամէն ոք աշխատում է իր գոյութիւնը, իր գոյութեան խաղաղութիւնը ապահովացնելու,—ուրիշ ոչինչ։

Հարուստ է վաճառականը, միլիոններ ունի. իր գումարի տոկոսներից 10—20 հազարը նա կ'դնի իր գոյութեան խաղաղութիւնը ապահովացնելու վրայ, իսկ մնացածը կ'պահի բանկում։ Գումարը տարիս ըստ տարի կ'պարարտանայ, կ'լցուի, վաճառականի սիրտն էլ մի օր այդ քաղցր ուրախութիւնից «կ'պատռուի». նա կ'մեկնի իր տներն ու կաւանդի հոգին։ Իսկ ոսկին, իսկ միլիոններն, անցնելով—մեծ մասամբ շռայլ—ժառանգի ձեռքը, կարճ միջոցում կ'փչուեն, կ'ցրուեն. մինչդեռ

Скольких человѣческих заботъ,
Обмановъ, слезъ, моленій и проклятій
Оно (այսինքն՝ ոսկին) тяжеловѣсный представитель!..

Այդ տեսակ վաճառականներ մեր հայրենիքում շատ կան. . .

Ուսում առած է երիտասարդը, alma mater-ն է անցել. մի ժամանակ պէսպէս իղձալներով էր սնվում, ապրում, այժմ, տեսէք, «կարիերա»-ի ետևից է ընկել, տաք տեղ է որոնում, որ հեռու մնայ կեանքի ալեկոծութիւններից, որ կեանքի վիշտն ու տառապանքը առժամանակ չծերացնեն նրան, չկնճռոտի նրա դէմքը, չալեզարդեն նրա մազերը։ Այդ տեսակ ուսում առած մարդիկ էլ մեր հայրենիքում շատ կան. . .

Տաղանդաւոր է գրականը, ունի ստեղծական ույժ, գրելու շնորհք, և գրում էլ է հէնց. բայց անցնում են ամիսներ, տարիներ, նա տեսնում է, որ այդ գրութիւնը շատ նեղութիւններ է պատճառում նրան,—մէկը գովում է,—տասը—հայհոյում,—և նա վճռում է ձեռք վերցնել այդ ունայնութիւններից և ապրել խաղաղ կեանքով։ Այդ տեսակ գրականներ էլ կան մեր հայրենիքում. . .

Արդարացնել այդ վաճառականին, alma mater-ն անցած այդ մարդուն, այդ գրականին, ասել թէ՝ «եթէ մարդ չի մնասում ու-

րիշին, եթէ նա ապրում է խորասուզուած իր բուսականութեան, իր բերկրանքի մէջ, չճնշելով ուրիշի ազատութիւնը, այն ժամանակ ամենախիստ jury-ն անգամ պէտք է նրան անմեղ ճանաչէ»[1],—դա պլանդակութիւն է, կատարեալ պլանդակութիւն։

Մենակ պ. Զուբարը չի մեր գրականութեան մէջ, որ Պիսարեւի այդ ծայրահեղութեան հաւատարիմ հետեւողն է։ Նա դեռ երիտասարդ գրական է. բայց մենք ունենք արդէն հասակ առած, պատիւ ու անուն հռչակած գրականներ եւս, որոնք ունեն եւ՛ տաղանդ, եւ՛ ոյժ, եւ՛ գրելու միջոց, սակայն չունեն գրելու ցանկութիւն։ Նրանք հեռացել են հասարակական կեանքից, ապրում են «մենակ և առանձնացած», ապրում են, «որպէս մարդերից փախած». «աչք չունեն նայել աշխարհիս կեանքին»... ուստի և վարում են անօգուտ կեանք, ի զուր սպանում իրանց օրերը։ Նրանք՝ մեր բանաստեղծի պէս՝ անդադար գանգատվում են՝

Ահա և այս թերթս, սեղանիս վերայ,
Առաջ, որ գրիչս թաթախում էի,—
Դառնում էր իսկոյն կենդանի վըկայ
Սրտիս զեղմունքին, և մարգարէի
Խօսում էր լեզուով, որ այժմ չըկայ։

Բայց թէ ինչու «չըկայ»,—այդ հարցի վրայ պարոնները նեղութիւն չեն քաշում մտածելու։ Նրանք չեն էլ հասկանում, որ այդ «չըկայ»-ի մեղաւորն իրանք են հէնց և ուրիշ ոչ ոք։ Ապրում են նրանք «մենակ, առանձնացած», մասնակից չեն հասարակութեան լացին ու ծիծաղին և ազատ են, ուրեմն, այն արտաքին տպաւորութիւններից, որոնց ազդեցութեամբ յօրինվում է, ինչպէս ասել եմ, այս կամ այն գրուածք։ Թող փորձեն այդ պարոնները մտնել հասարակութեան մէջ, շփուել նրա հետ, այն ժամանակ նրանք իրանց «չըկայ»ն կ'փոխեն «կայ»-ի։

Պ. Զուբարի վրայ մի ժամանակ յոյսեր էր դրել մեր ընթերցող հասարակութեան մի մասն, ասում էր, թէ նա զգալի օգուտ կ'բերի իր հարազատ գրականութեանը. իսկ այժմ, տեսնելով նրա

---

[1]) *Д. Писаревъ:* Сочинен., т. I, стр. 478.

անտարբերութիւնը, սառնութիւնը, տարաբախտաբար, մնում է միայն ցաւել: Մարդ իրան վիրաւորուած է զգում, երբ տեսնում է, որ «ոյժը՝ աճել-մեծանալու փոխարէն՝ օրէցօր ընկնում է: Մենք 'ի սրտէ ցանկանում ենք, որ պ. Զուբարը կրկին գրականական ասպարէզ մտնի: Մենք յուսով ենք, որ նա, այդպէս թէ այնպէս, բայց օգուտ բերել դեռ կարող է: Նա տաղանդաւոր է. նրան մնում է միայն շփուել հասարակական կեանքի հետ՝ այդ կեանքը աւելի մօտ ուսումնասիրելու նպատակով:

II.

«Կարելի չէ կործանել մի մարդու պաշտած կեանքը, աստուածը և չտալ նրան մի ուրիշը»:

Գ. Զուբար՝ «Մահտեսի Սարգիս»:

Պ. Գ. Զուբարի գրուածքներից երևում է, որ նա կնոջ սօցիալական և ընտանեկան դրութեամբ շատ է հետաքրքրւում: Այդ հարցի վրայ նա երկար և խղճմտանքով է կանգ առել: Եթէ նա բացի իր հերոսուհիներից ուրիշ ոչինչ չստեղծէր, ես, մի և նոյն է, մեծ պատիւ կ'տայի պ. Զուբարին, որովհետև, ստեղծելով իր հերոսուհիներին, նա առաջ է բերել շատ կարևոր փաստեր, որոնք մերկացնում են մեր հասարակութեան կազմակերպութեան անկատար լինելն և խակութիւնը:

Նրա հերոսուհիներից մեր ուշադրութիւնը—նախ և առաջ—գրաւում է Սառան («Բարեգործներ»), Նոր-Նախիջևանի Աստուածածնի փողոցում ապրող Կարապետ կօշկակարի աղջիկը: Լինելով Կակայեան հայ օրիորդաց ուսումնարանի աշակերտուհի՝ նա ապրում է փոքր ի շատէ գիւղական կեանքով—համեմատաբար պ. Զուբարի միւս հերոսուհիների հետ, որոնց մասին խօսքս լինելու է:

Սովորական է և կարճ նրա կեանքի պատմութիւնը: Ինքը կօշկակարի աղջիկ՝ նա ընդունվում է գիշերօթիկ և ձրիապէս Կակայեան հայ օրիորդաց ուսումնարան, մնում այնտեղ վեց-եօթ տարի և աւարտում իր ուսումը: Բայց ուսում առած, կրթուած օ-

լիորդի կեանքի հանգամանքներն այնպիսի դրութիւն են ստանում, որ նա ստիպուած է լինում թողնել այն Նոր աշխարհն, որտեղ մտել էր, այն ինտելիգենցիան, որի հետ ձուլուել էր, թողնել այդ ամենն և վերադառնալ Աստուածածնի փողոց՝ առաջարկելու իր ձեռքը նոյն Աստուածածնի փողոցի ծնունդ Միքայէլին, «որ կատարում էր մի Նախիջևանցի աղայի մօտ գործակատարի պաշտօն և ստանում էր 450 ռուբլի տարեկան»: Իսկ յետոյ սկսւում են դառն, կծկտուր օրեր այդ երկու՝ սրտի ու խելքի զարգացմամբ անհաւասար՝ ամուսինների մէջ...

Այդ է վէպի ֆաբուլան ընդհանրապէս: Այժմ խօսենք մասնաւորութիւնների մասին:

Քննելով Սառայի անձնաւորութիւնը և ուշադրութեամբ հետևելով «Բարեգործներ» վէպի գործողութիւններին՝ մեզ պարզւում է, որ հեղինակի խօսքն այդ վէպի մէջ մեր միջակ դասակարգի կանանց կրթութեան մասին է:

Նոր-Նախիջևանի հարուստ աղաներից մէկը, Մկրտիչ Գալայեան, մեռնելով, կտակում է 100,000 ռուբլի «Նոր-Նախիջևան քաղաքին այն պայմանով միայն, որ նա հիմնէ մի միջնակարգ դպրոց հայ չքաւոր օրիորդների համար»: Հանգուցեալ բարեգործի այդ կտակը մեծ զարմանք և անբաւականութիւն է քցում Նոր-Նախիջևանի հասարակութեան ծերերի և պառաւների մէջ:

«— Աղբար... սա ի՞նչ ժամանակների հասանք, — ասում է շուկայում մի ծերունի վաճառական իր հարևանին.. ախըր, եբ Մկրտիչ աղան ալ ատպէս բանիր կանէ նը, մենք խօ մեռնենք, դա:

«— Խորթ է ասածդ... ես ալ շատ կըզարմանամ, վո՞վ այդ միտքը տուեց աղային... ախըր սուրբ ժամերին 1000 ռուբլի, իսկ մէկ կոյպայ վարժատունի, ան ալ աղջիկ վարժատունի — 100000-նե՞ր... չէ՛... չէ՛, Մկրտիչ աղան ինքը չէ ատ բանը անողը... նա խեւ չէր... չէ, — նկատեց վճռողաբար վաճառականը և սկսեց շփել իր գլուխը»:

Այդ տեսակ հայեացք ուսման վրայ կարելի է լսել հէնց այժմ էլ դեռ շատ տեղերում:

Մեր ժողովուրդը, գլխաւորապէս նրա հին ծոչչէկ, աղատխկալները, դեռ չի կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ դպրոցը առաջադիմական զարգացման գլխաւոր ֆակտորներից մէկն է: Նա

դեռ կարծում է, թէ դպրոցը մի անպէտք աւելորդութիւն է, որ հնարել են փորձով կուշտ մարդիկ՝ իրանց պարապ ժամանակը սպանելու։ Եւ այդ մոլորութեան պատճառը ոչ թէ ինքը ժողովուրդն է, ստորին և միջակ դասակարգի ժողովուրդը, կամ նրա տգիտութիւնը, այլ հասարակութեան այն ինտելիգենտ խմբերն, որոնց խընամքին կեանքը յանձնել է ժողովրդի ուսման գործը։ Երբ որ երեխան իր դասերից փախչում է պարտէզ, փողոց՝ խաղալու, թռչկոտելու, բնական է, որ պէտք է մեղադրել վարժապետին և ոչ փոքրիկ խաղասէրին։ Վարժապետի պարտաւորութիւնն էր հետաքրքրել, գրաւել երեխայի ուշադրութիւնը, սիրտը կենդանի դասերով։ Չոր ու ցամաք էին դասերը, մեռելութիւն էր փչում նրանցից, չկար մանկական փաղաքուշ, թարմութիւն նրանց մէջ,—և երեխան չսիրեց նրանց... Ժողովուրդը ոչինչ գործնական օգուտ չի տեսնում այն դպրոցներից, որոնք հիմնվում են նրա գիւղերում, գիւղաքաղաքներում, այսինքն՝ այնպիսի օգուտ, որ նա կարողանար տեսնել իր երկու աչքով և շօշափել իր երկու ձեռքերով,—ուստի և աշխատում է իրան հեռու պահել «լուսաւորութեան տաճարից»։ Նա հարցնում է՝ «ի՞նչ էք դաս տալու ձեր վարժատնում»։ Նրան պատասխանում են՝ «առարկաներ, լեզուներ՝ հայերէն, ռուսերէն, թուաբանութիւն, և այլն»։ Եւ նա ունայնութիւն է համարում այդ բոլորն՝ իր պարզական խելքով չհասկանալով այդ «առարկաների, լեզուների» ուսումնասիրութիւնից դուրս բխած օգուտը և միամտաբար առարկում՝ «գիր-ղալամ անելն, իր անունը գրելն կիմանայ տղաս—հերիք է. ինչի՞ համար է իզուր ժամանակ կորցնելն»։ Նրան ասող չկայ, թէ այդ վարժատնում կարելի է երկրագործութիւն էլ, այգեգործութիւն էլ և ուրիշ դրա նման տնտեսական բաներ էլ սովորել, այդ ասող չկայ, որովհետև մեր ժողովրդական դպրոցի ծրագրումն էլ բացակայում են դրանք։

Կիկերոնը իր De officiis շարադրութեան մէջ, 'ի միջի այլ փիլիսոփայական գրութիւնների, ասել է՝ «suum cuique», այսինքն՝ «ամեն բանին իւրը»։ Եւ այդ դրութեան արդարութիւնը ժամանակակից ուսման գործի վերաբերմամբ անհերքե է։

Դառնանք, ընթերցող, դէպի «Բարեգործներ»-ը, շարունակենք նրա բովանդակութեան թելը և մեզ կրկին կ'պարզուի այդ դրու-

թեան արդարութիւնը։ Ես կարծում եմ, որ «Բարեգործներ»-ի գլխաւոր հիմքը այդ դրութեան վրայ է դրած։

Ուրեմն՝ Մկրտիչ աղան, ինչպէս ասացի, կտակել է 100000 ռուբլի օրիորդաց դպրոց հիմնելու համար։ Նոր-Նախիջեւանի վարչութիւնը նիստ է հաւաքում՝ «քննելու պ. Կակայեանի կտակը և ուղարկելու Բարձրագոյն հաստատութեան»։ Նիստին, սովորականից դուրս, ներկայ էին վարչութեան բոլոր անդամները։ Նիստը բացուեց կտակի պատճէնի ընթերցանութեամբ. «անդամները խորին լըջութեամբ լսում էին Մկրտիչ աղայի վերջին խօսքը. ընթերցանումը վերջացաւ, և քաղաքագլուխ պ. Մալթիսեանցը բարձրացաւ իր տեղից և սկսեց իր ճառը»։ Իր երկու խօսքում քաղաքագլուխը մեծ գովասանքով վերաբերուեց դէպի Մկրտիչ աղայի «վերջին կամքը» և ասաց, թէ հանգուցեալն «իւր գեղեցիկ օրինակով դարագլուխ է կազմում մեր քաղաքի պատմութեան մէջ»։ «Վերջապէս, պարոններ,—աւելացրեց նա իր ճառի վերջը,—կըհասնենք այն օրին, երբ իմ հարազատ զաւակիս մօտ ես կըտեսնեմ նստած, իբրև նրա ընկերուհին, կառապան Մաթոսի և կամ բանւոր Սարգսի աղջիկը»։ Քաղաքագլուխը վերջացրեց։ «Անդամների մէջ բարձրացաւ մի խուլ, անհասկանալի փսփսոց. երևի դրանով նրանք յայտնում էին իրենց հաւանութիւնը»։ Համարեա բոլոր «հարցերն արդէն վճռուած էին և քարտուղարը սկսել էր իր արձանագրութիւնները, երբ վերկացաւ իր տեղից բժշկապետ Մուրադեանցը, խօսք խնդրեց ու սկսեց՝

«—Յարգելի քաղաքագլուխը փայլուն ներկերով նկարագրեց ձեզ, պարոններ, Կակայեանի ուսումնարանի ապագան։ Նա ասաց, որ ամենաերջանիկ օրը իւր կեանքի մէջ այն օրը կ'լինի, երբ նա կ'տեսնէ իւր հարազատ զաւակի մօտ նստած կառապան Մաթոսի աղջիկը։ Պարոններ, ես համաձայն եմ, այդ շատ լաւ է, շատ ուրախալի երևոյթ է, բայց… բայց ես կարծում եմ, որ յարգելի պ. Մալթիսեանը՝ յափշտակուած իւր մտքով՝ ծայրահեղութեան հասաւ և… սխալուեց։ Կակայեան ուսումնարանը, իմ կարծիքով, ապագայում վնասներից ջոկ ոչինչ չէ բերելու մեզ… այսինքն ոչ թէ մեզ, այլ այն չքաւոր ընտանիքներին, որոնց համար նա հիմնուելու է հանգուցեալի կամքով։ Երևակայեցէք, պարոններ, այսպիսի մի դրութիւն ապագայում, այն էլ մօտ ապագայում. Մաթոս կառապանի

աղջիկը 6 կամ 7 տարիներ՝ ընտանիքից կտրուած, բաժանուած՝ անց է կացնում փակ ուսումնարանի պատերում իմ կամ պ. Մալթիսեանի շաւղի հետ: Անկիրթ, կոպիտ և մի քիչ վայրենի 8 կամ 9 տարեկան աղջիկը դառնում է 16 կամ 17 տարեկան կրթուած, բաւականին զարգացած օրիորդ: Այդ միջոցին նա մոռանում է իւր մանկութիւնը շրջապատող կեանքը, նա ընտելանում է ներկայ կեանքին, նրա պահանջներին, նա այժմ ուրիշ հայեացք ունի ի հարկէ կեանքի, բաղդաւորութեան, ամուսնութեան և բարոյականութեան վերայ. նրա երևակայութիւնից թռչում, անհետանում է այն փոքրիկ, կոպիտ, միշտ մրոտ, միշտ լղկած աղջկայ տիպարը, որին 9 տարի սրանից առաջ բերեցին և ձգեցին վարժարան. այդ տիպարը նրան արդէն խորթ, օտար է թւում.. Ընդհակառակը, այս կամ այն հարուստ տղայի աղջիկը, ամբողջ 7 տարուայ միջոցում նրա ընկերուհին, նրան աւելի մօտ է թւում, աւելի հասկանալի... Մաթոս կառապանի աղջիկը շատ անգամ եղել է իւր ընկերուհու տանը, նա տեսել է բարձր, վերին հասարակութիւնը, նրա զոնէ արտաքին կեանքը և ինքն էս իւր մտքի խորքում երդուել է մի օր հասնել այդ կեանքին, այդ ապահովուած, վայելչ փայլուն կեանքին. նա սիրում է արդէն այդ կեանքը, Բայց տանը նրա աչքէ ընկնող պակասութիւնները, տանը զանցառութիւնները[1]): Բայց դժբախտաբար կառապան Մաթոսի աղջկայ երևակայական-ցնորք համոզմունքները մի գեղեցիկ օր յանկարծ փշրուեցին... իրական անխիղճ կեանքը առաջարկեց իր խօսք, անողորմ պահանջմունքները և խեղճ Մաթոսի թշուառ աղջիկը չկարողացաւ տանել այն իրեն օտարոտի, անծանօթ, մոռացած կեանքին, չկարողացաւ դիմանալ նրա առօրեայ պահանջմունքներին և դեռ չծաղկած ծաղկի նման թառամեցաւ: Ուսումնարանը կրթում է, լուսաւորում է իր սանէրի միտքը, աշխարհը և չէ սովորեցնում նրան գործնական կեանքում հաց ապահովացնող մի արհեստ: Ուսումնարանը տալիս է նրան գիտութիւն, տալիս է նրա ձեռքը Սմայլսը և չէ տալիս ասեղ»..

Բժիշկը լռեց: Ներկայ եղող անդամներն անբաւական էին նրա «տխուր մարգարէութիւններից». նրանք փաստեր էին պահանջում

---

[1]) Կուրսիվը մերն է:

Քաղաքագլուխը «կծու և հեգնական ոճով» խնդրեց, որ պ. Հակառակորդը «աւելի պարզ, աւելի շօշափելի կերպով յայտնի իւր միտքը»։

«— Պարոննե՛ր, ես կարծում էի, որ իմ միտս և խօսքերս այնքան պարզ են,— սկսեց Մուրադեանցը,— որ կարօտութիւն չունին այլ և այլ բացատրութիւնների. երևի սխալուեցայ։ Եթէ ես ասացի, որ Նախիջեւանի ուսումնարանը ապագայում պիտի լինի վնասակար, այդ նրա համար էր, որ ես աչքի առաջ ունէի ստորին դասակարգի արական սեռի մտաւոր և բարոյական կարօտութիւնը։ Դուք կամենում էք զարգացնել մտաւորապէս և բարոյապէս մեր ստորին դասակարգի միայն իգական սեռը. դուք կամենում էք ազնուացնել, քաղաքակրթել 1000-ից միայն 500-ը։ Լաւ. երևակայեցէք, որ դուք հասաք ձեր նպատակին. կառապան Մաթոսի կամ բանւոր Սարգսի աղջիկը գիտէ լեզուներ, թուաբանութիւն, աշխարհագրութիւն և այլն և այլն. բայց դուք մոռանում էք, որ նոյն կառապանի որդին մնացած է անզարգացած, որ նոյն Մաթոսի դասակարգի երիտասարդները աշխատում են իրենց օրական հացը բանւորութիւններով, սայլապանութիւնով և կամ մուրացկանութիւնով։ Դուք մոռանում էք, որ Մաթոսի զարգացած աղջիկը փակ ուսումնարանից անմիջապէս պիտի ընկնի այդ մարդոց շրջանը, պիտի ապրի նրանց կեանքով, պիտի պաշտպանէ նրանց դասակարգի շահերը, պիտի կապուի, ընտելանայ նրանց առօրեայ պահանջմունքներին, պիտի սիրէ նրանցից մէկին և պիտի դառնայ նրանցից մէկի կինը։ Հարցնում եմ ձեզ, պարոններ, այդ զարգացած աղջկայ ապագայ կօշկակար կամ բանւոր ամուսինը կըհասկանա՞յ իւր երեխաների մօր ներքին հոգեկան ձգտումները. կըկարողանա՞յ յարգել նրա համոզմունքները, կըսիրէ՞ նրան իբրև մարդ, իբրև անձնաւորութիւն... Ո՛չ... ո՛չ, պարոններ։ Միւս կողմից՝ կըկարողանա՞յ այդ 6 կամ 7 տարի ծաղկի նման մեծացած օրիորդը տանել այն լի ֆիզիքական աշխատանքով կեանքին, տգէտ և կոպիտ ամուսնու վարմունքին. կըկարողանա՞յ դիմանալ զրկանքների, քաղցի, ծարաւի. կունենա՞յ այնքան ոյժ... Դարձեալ ո՛չ, դրանք կարող չեն միմեանց հասկանալ։ Ես վերջացրի, դատեցէք ուրեմն»։

Ես գլխամամբ առաջ բերեցի բժ. Մուրադեանցի ճառը լիովին։ Այն մտքերն ու հարցերն, որոնց արծարծում է բժիշկը իւր ճառի

մէջ տեսականօրէն, պ. Զուբարը պարզում է Սառայի կեանքով, որն, անշուշտ, հիմնուած է կենդանի փաստերի վրայ։

Սառան Կակայեան ուսումնարանի աշակերտուհիներից մէկն է։ Կօշկակար Կարապետը, Սառայի հայրը, տեղաւորելով նրան այնտեղ, հասկացնում է իր ամուսնուն, Շուշանին, որ այդպիսով նըրանք ազատվում են աւելորդ բեռից։

«—Ախր, Շուշան, միտք արա, մեզի ալ խօմ խօլայ կըլար... ուտելիք, հալաւ, ոտի բան... այայը վարժատունէն է, նկատեց Կարապետը։

«—Հէպէթ... մեզի խօլայ կըլար. ինքն ալ չարութիւն չէր անիլ, կըսովօրէր, մարդ կըլլար»։

Դպրոցական փակ կեանքը, նրա մթնոլորտը դիւր չեկան Սառային։ Նա հէնց առաջին օրից նկատեց, որ այդ դպրոցի սանիկները շատ սուր կերպով բաժանվում են երկու բանակի. «աղայի» աղջիկը յայտնապէս քաշվում է «բանւորի» աղջկանից։ Իր փոքրիկ խելքով նա կարողացաւ նկատել նոյնպէս, որ այդ քաշուելու մէջ կայ և արհամարհանք։ Եւ նա սկսեց ատել «աղայի» աղջիկը, ատել իր մանկական սրտի բոլոր յուզմունքներով։ Նա ամբողջապէս խորասուզուեց իր դասերի մէջ և բացի իր պարապմունքներից ու օրիորդ Հեղինէ Զաքիկեանից, որ նրա վերակացուն էր և որին Սառան սիրում էր «իւր փոքրիկ զգայուն սրտի բոլոր զգացմունքներով», նա ոչ ոքի չէր ուզում ճանաչել։

Անցնում են ամիսներ. Սառան կամաց կամաց սկսում է ընտելանալ ուսումնարանի փակ կեանքին, և մի-երկու տարուց յետոյ ընկերութիւններ էլ է կապում ուսումնարանի սանիկներից մի քանիների հետ, ուշադրութիւն չդարձնելով, արդեօք, «աղայի» աղջիկ է ընկերուհին թէ՞ «բանւորի»։

Սովորական երևոյթ է այս փաստը, և պէտք չէ զարմանալ Սառայի վարմունքին։ Երեխայ իր զարգացմամբ, իր փորձառութիւններով՝ նա դեռ չէր կարող ղանազանել լաւը վատից, սեր սպիտակից և ենթարկվում էր այն հոսանքին, որն աւելի կախարդիչ էր երեւում, որի արտաքին, ճրայէց-ճայըն լոյսը շլացնում էր անփորձ աչքերը։

Տարիներ են անցնում. Սառան 6-դ դասատանն էր, «Կակայեան ուսումնարանի այդ վերջնական քաւարանում»։ Կօշկակարի լաւ

կան, միայնութիւն սիրող աղջիկը, անտաշ վարմունքով, անտաշ ձևերով, դառնում է 17 տարեկան փայլուն գեղեցիկ կազմուածքով օրիորդ, որ կարող է նամակի վերջին գրել adieu և կամ փողոցներում կարդալ կարանոցների սովորական «Modes et robes»-ը, որ գիտէ յափշտակուել «Խելք Թռցնող վալսի հնչիւններով» և ձանձրանալ «Մայր Արաքսի ափերով» երգի տխուր, սիրտ կտրատող եղանակից: Սառան արդէն կարողացել էր կազմել իր համար մի նոր շրջան. այնտեղից նա ստանում էր նոր տպաւորութիւններ, նոր մտքեր, հայեացքներ և ճաշակ ու ապրում էր իր այդ նոր կեանքով, նոր մտքերով: Նա տօները անց էր կացնում իր հարուստ ընկերուհիների մօտ, նրանց ծնողների տանը: Այնտեղ նա «հանդիպում էր Նոր-Նախիջևանի ջենտլմէններին, հանդիպում էր և սկզբից, ի հարկէ, ամէն ինչ նրան խորթ էր թւում, մանաւանդ ուսումնարանի բոլորովին առանձնացած կեանքից յետոյ:

«Սկզբից այդ արտաքուստ փայլուն, այդ անհոգ, ուրախ կեանքը շլացնում է նրան. նա կորցնում է ինքն իրեն. բայց յետոյ ակամայ սկսում է ընտելանալ այդ կեանքին, նա սիրում է այդ հասարակութիւնը, այդ անվերջ, բայց միակերպ պարահանդէսները, գրական երեկոյթները, խնճոյքները. նա ինքն ևս սկսում է մասնակցել այդ բոլոր զուարճութիւններին, և վերջ 'ի վերջոյ այդ կեանքը բոլորովին յափշտակում, ներս է քաշում Սառային, և նա, Աստուածածնի փողոցի՝ այդ սորին դասի՝ ծնունդը, ընդունում է այդ նոր կեանքի պահանջմունքները և պայմանները առանց ներքին կռուի—ընդդիմութեան. ընդունում է այնպէս, ինչպէս երևան էր հանում նրանց ինքը կեանքը»:

Սառայի մտերիմ ընկերուհին Նինո Փաթալեանցն էր—Մարկոս աղայի աղջիկը:—Ծննդեան տօները մօտենում էին. Կաւկասեան ուսումնարանը աւարտել էր իր պարապմունքները: Սառան այդ տօներին հիւր էր Փաթալեանցների մօտ. Պ. Փաթալեանցի Գրիգոր որդին, որ զինուորական էր և ծառայում Պետերբուրգում, նոր էր վերադարձել, և Մարկոս աղան «տօնախմբութիւն» պիտի սարքէր այդ պատճառով: Երեկոյթը սարքուեց յունվարի 1-ին: Հրաւիրուած էին բազմաթիւ հիւրեր: Լայնարձակ, շքեղ զարդարած դահլիճում լըսվում էր վալսի յափշտակող բախումները. զոյգ-զոյգ պարողները

լցուել էին դահլիճի մէջտեղը. իսկ չպարողների մի մասը, Նախիջեւանի կրեսոսները, կաբինետներում կանաչ սեղանների շուրջը նստած թուղթ էր խաղում, միւսն էլ հետեւում էր զոյգերի պարելուն։ Պարողներից մի զոյգ իր նազանի «pas»-ներով գրաւեց դրանց ուշադրութիւնը։ Դա տանտիրոջ որդի Գրիգորն էր և Սառան...

Շատ է հաւանել Գրիգորը Սառային։ Provinciale օրիորդի թարմութիւնը, բնական գեղեցկութիւնը շլացրել էր նրան. Նա վճռել է անպատճառ տիրել խեղճ աղջկայ սիրտը, տիրել անգթաբար. նա վճռել է այս գիշեր խաղալ այն սովորական դերերից մէկը, որոնցով սպանում էր նա իր պարապ օրերը մայրաքաղաքում։ Եւ շռայլութիւնների մէջ փորձուած զինուորականը հեշտութեամբ է հասնում իր նպատակին։

Վալսից յետոյ նա Սառային տանում է Մարկոս աղայի ընդունարանը հանգստանալու։ Սենեակում մարդ չկար։ Մի քանի կախարդիչ շողոքորթութիւններ թափելով անփորձ օրիորդի առաջ՝ նա «մի լիրբ կրքոտ հայեացք է ձգում նրա վերայ» և թոթովիչ ձայնով ասում թէ՝ «ես ձեզ սիրում եմ... ես անկարող եմ ապրել առանց ձեզ... իմ հրեշտակս...», և այլն, և այլն։ Վերջապէս, նա համբուրում էլ է Սառայի «կարմրած երեսը»։

«—Թողէք... թողէք ինձ... ասաց նա ետ քաշուելով Գրիգորից։

«—Սառա՛... անգութ... դուք խլում էք ինձանից իմ երջանկութիւնը... մի համբոյր միայն... Լսեցէք ինձ... ես խնդրում եմ ձեր ձեռը... յաւիտեան ամենի առաջ դու կըլինիս իմ կինս... Սառա... Սառա... լսիր... կեանքը առանց քեզ կորցնում է ինձ համար իւր նշանակութիւնը... մի մերժիր ինձ... լսո՞ւմ ես... Սառա... դու համաձա՞յն ես... այո... մրթմրթում էր Գրիգորը հազիւ լսելի, խռպոտ ձայնով. Նրա երեսը կարմրել էր... աչքերը սկսել էին ցոլալ. սառը քրտինքը ծածկել էր նրա ճակատը»։

Եւ Սառան հաւատում է Գրիգորին, հաւատում նրա զգացմունքների, սիրոյ անկեղծ լինելուն։ Նրա «երեսը փայլում է մի երջանիկ ժպտով»։ Գրիգորը նրա համար դառնում է «անգին, սիրելի»։

Մինչդեռ բոլորովին ուրիշ մտքեր էին պտտում անբարոյական երիտասարդի գլխի մէջ։ Այն երդումները, խոստումները, որ նա թափել էր Սառայի առաջ, լոկ խօսքեր էին. իրականութիւնը այսպէս

գրաւիչ չէր. նա սեւ էր, նա խայտառակ: «Ա՛խ... ո՛րքան գեղեցիկ է այդ փոքրիկ Սառան,—մտածում էր երիտասարդ Փաթալեանը,—ի՛նչ արբեցող տեսք... ա՜յ թէ կարողանայի փախցնել նրան Պետերբուրգ... ո՛րքան կըզարմանային և կընախանձէին ընկերներս... Այնտեղ կըտեղաւորէի նրան մի լաւ հիւրանոցում, կըվարձէի ձիեր, կառք, օպերայի օթեակ... մանաւանդ, որ իմ ժանէտս արդէն ձանձրացնում է ինձ... այո... լաւ կըլինէր... Բայց խեղճ աղջիկը, կարծեմ, համոզուած է, որ պիտի պսակուեմ իւր վերայ. այդ էր պակաս... մի կոպիտ provinciale... և Գրիգորը հեգնօրէն ժպտաց»:

Այդպիսի երիտասարդ էր Սառայի առաջին «էջը» տարիկան: Եւ մեղքը Սառայինը չէր: Ուսումնարանի աշակերտուհուց մի ուրիշ բան սպասել չէր էլ կարելի: Նրա զգացմունքը դէպի Գրիգորը, նրա այդ վարմունքը չի կարելի անուանել թեթեւամիտ անդայման: Նա պատասխանում է հարիւրհազարների տէր Մարկոս աղա Փաթալեանցի որդու սէրին. նա անչափ բաւական է, որ վեց տարուայ աշխատանքը այդքան լաւ վարձատրուեց: Իսկ թէ ո՞վ է այդ երիտասարդ Փաթալեանցը, ո՞ր շուայլ շրջմոլիկներից, մինչև վիզը ցեխի, ապականութեան մէջ թաղուած շրջմոլիկներից—Սառան չի կարող գիտենալ: Նա գիտէ, միայն, որ այդ երիտասարդ Փաթալեանցը իր ընկերուհու եղբայրն է:

Սակայն երկար չի տեւում Սառայի կարծեցեալ երջանկութիւնը: Այն ծածկոյթը, որ ամեն ինչ քօղարկում էր նրա աչքերից, պատռվում է, և խեղճ օրիորդը բացի անողորմ, սառը խաբէութիւնից ուրիշ ոչինչ չի կարողանում տեսնել: Նա խորտակում է իր ունայն ցնորքները, բարձրութիւնից գետին է գլորում իր աստուածը, որին մտադիր էր երկրպագել, և խորասուզվում ինքն իր մէջ: Կեանքը նրա համար այլ եւս, կարծես, գոյութիւն չունէր, այն ժպտող, պարահանդէսներով, երեկոյթներով հարուստ կեանքը, որի ալիքներին նա յանձնուել էր մի ժամանակ: Տօներն արդէն անցել էին, քննութիւններն էին մօտենում. բայց Սառան անտարբեր էր այդ ամենին. կարծես այդ քննութիւնները նրան չէին վերաբերում: «Նա ժամերով, գլուխը կրծքին թողած, չափում էր ուսումնարանի նեղ ու երկար սրահը. նա ոչ ոքի հետ չէր խօսում. Նրա երեսը ահա մի ամիս էր, որ չէր ժպտում, չէր ծիծաղում, ընդհակառակը,

այդ ուրախ, միշտ անհոգ երեսը կարծես այժմ ստացած լինէր մի անսովոր, լուրջ գծագրութիւն. կարծես Սառան ճնշվում լինէր մի ծանր հոգեկան հոգսով»: Խաբեց նրան Գրիգոր Ֆաթալեանը, խաբեց անիրաւաբար. ասաց թէ՝ «ես խնդրում եմ ձեր ձեռը»... իսկ յետոյ առաջարկեց նրան «Պետերբուրգ փախչել ու ապրել այնտեղ միասին... առանց պսակի»: Այդ հոգեկան ցնցումը սաստիկ խանգարեց Սառայի նեարդային համակարգութիւնը, անգամ անկողին տարաւ նրան:

Ամբողջ մի ամիս Սառան պառկած էր: Օրիորդ Հեղինէն և բժիշկ Մուրադեանցն էին նրա հոգսը տանում: Վերջապէս, շաբաթներ անցնելով, բժիշկը նրան թոյլ է տալիս թողնել անկողինը և Հեղինէի օգնութեամբ ման գալ հիւանդանոցի փոքրիկ սենեակում: Բայց, Աստուած իմ, որքան փոխել էր Սառային երկարատև հիւանդութիւնը: Արտաքին փոփոխութիւններից ջոկ՝ հիւանդութիւնը գործել էր Սառայի մէջ և ներքին փոփոխութիւններ: «Առաջուայ միշտ զուարթ, միշտ անհոգ, ուրախ Սառան դարձել էր ծանրախոհ, մի տխուր դէմքով օրիորդ, նրա միշտ ժպտաղ երեսը կրում էր այժմ խոր մտքի կնիքը. այդ փոքրիկ, սպիտակ, կարծես մարմարինեայ ճակատը ծածկել էր փոքրիկ, հազիւ նկատելի խորշոմներով»...

Սառան այժմ աշխատում էր իրան հեռու պահել հարուստ ընկերուհիներից, կամենում էր կտրել նրանց հետ իր կապը: Նա կրկին սկսում է խուսափել «ազնւի» աղջկանից: Էլ հերի՛ք է. փորձը նրան շատ բան է պարզել:

«Ես մոռացայ իմ հասարակական դրութիւնս,—մտածում էր նա,—և մտնեցայ, դժբաղդաբար, ինձանից բարձրին... ես՝ կօշկակար Կարապետի աղջիկը—ո՛վ, և այդ Ֆաթալեանը—ո՛վ... (Սառան դառն և հեգնօրէն ժպտում էր)... Ես կարծեցի, որ ուսումը, մտաւոր զարգացումները հաւասարեցնում են անհաւասարներին... ունայն չէ՞ որ... Ես պէտք է հասկանայի, որ Սառան, կօշկակարի աղջիկը, կրթուած միշտ Սառա կօշկակարի աղջիկ, իսկ Նինօ և Գրիգոր Ֆաթալեանները—միշտ Նինօ և Գրիգոր Ֆաթալեանները»...

Փոքր ինչ կանգ առնենք, ընթերցող, և մտածենք Կախայեան ուսումնարանի աշակերտուհու խօսքերի արդարութեան վրայ: Ի՞նչ

գտան է այդ արդարութիւնը... Կարծես հասակ առած, փորձառութիւնների մէջ պնդացած մարդու բերանից է լսւում նա:

Այդպէս է դրած մեր անկատար կեանքը հէնց սկզբից. նա ինքնակամ կերպով մարդկութիւնը բաժանել է երեք մասն՝ ստորին, միջակ և վերին դասակարգ, և եթէ այդ մասերը փորձ են անում միանալու, կապուելու ի մի, ստացվում է կատարեալ դիսօնանս: Միջակը խորշում է աղքատից, հարուստը—միջակից: Ատելութիւնը, ոխը սաստիկ է զարգացել նրանց մէջ, զարգացել փոխադարձաբար: Ոչինչ չի կարողանում հաշտեցնել նրանց... Ե՞րբ էք տեսել, որ մեծատնի աղջիկը իր ձեռքն առաջարկի քսակով աղքատ, թէպէտև հարուստ բարձր ուսումով, կրթութեամբ երիտասարդին: Կամ թէ, ե՞րբ էք տեսել, որ մեծատնի որդին խնդրէ համալսարանական կըրթութիւն ստացած, սակայն աղքատ օրիորդի ձեռքը: Եւ եթէ լինում են բացառութիւններ, ի՞նչ նշանակութիւն ունի մի կաթիլ ջուրը անսահման ծովի համար:—«Սարգիս ջան, ախր մի մտածիր. լսուա՞ծ բան է, որ հարուստի փեսան քեասիբ լինի,—ասում է պ. Զուբարի տէր Պօղոսը գիւղի տանուտէրին,—էդ ո՞ր գրքումն է գրած. հարիւրներով պսակ եմ արել ու էդ թաւուր բան չեմ տեսել»[1]:

—Անկատար է այս անցողական կեանքը, շատ անկատար. բայց կանգ առնել այդ աչք ծակող փաստի վրայ և ասել, թէ այդպէս էր առաջ, այդպէս լինելու է, ուրեմն, և ապագայում, ազնւութիւն չէ: Ոչնչացնել դեռ պապերից մնացած սև նախապաշարմունքները, յետոյ հաշտեցնելու հարուստն աղքատի հետ, ընկերացնելու, եղբայրացնելու նրանց, դա է այն իդէալը, որի իրագործման վրայ պէտք է դնի մարդկութիւնն իր ոյժերը... Շատ հրաշագործութիւններ, աքանչելի բաներ է ստեղծում, յօրինում մարդկութիւնը իր երջանկութիւնը ապահովացնելու համար, բայց այդ ամենից միմիայն ընտրեալներն են օգտվում. մարդկութեան առաւելագոյն մասը—ստորին և միջակ դասակարգը — կրկին մնում է իր թշուառութեան, իր չքաւորութեան մէջ: Եթէ այն էներգիան, այն ոյժերն, որոնք գործ են դրվում միայն ընտրեալների օգտի վրայ, միանային ու գործէին աւելի լայն ու, մի և նոյն ժամանակ, մարդասիրական համոզմունք-

---

[1]) Գ. Զուբար. «Մահտեսի Սարգիս»:

ներով առաջնորդուած, անաչառ, անեսական զգացմունքներից զըր-կած, եթէ աշխարհի հանճարները, թովիչները գործելիս աչքի առաջ ունենային «Գլխա—որալէ» աղքատին ու հալածուողին և նրանց դրութիւնը բարւոքելու համար գործէին, այն ժամանակ մենք չէինք ունենալ օրիորդ Սառաներ, որոնք չեն կարող Ֆաթալեանցների կինը լինել միայն այն պատճառով, որ հարսը կօշկակարի աղջիկ է, իսկ փեսան—աղայի որդի:

Այդ է «Բարեգործներ» վէպի առաջին մասը: Երկրորդ մասն, որ անքակտելի կապ ունի առաջինի հետ և որի սկզբնապատճառը առաջինն է հէնց, աւելի տրագիկական բնորոշ է կրում իր վրայ:

Բայց առաջին և երկրորդ մասերի մէջտեղը կայ մի transition: Այդտեղ հեղինակը պատմում է, թէ ինչպէս Սառան՝ հիւանդութիւնից առողջանալուց մի քանի շաբաթ յետոյ՝ բժիշկ Մուրադեանցի խորհրդով Հեղինէի հետ Ղրիմ է գնում կազդուրուելու, հանգստանալու: Նա պատմում է նոյնպէս, թէ ինչպէս երկու օրիորդ—Սառան և Հեղինէն—սիրահարվում են բժշկի վրայ, և երբ մի օր (Թէոդոսիայում էր) Հեղինէն իր ընկերուհուն «նորութիւն» է յայտնում, թէ «շուտով նրա հարսանիքն է» բժիշկ Մուրադեանցի հետ, Սառան, երկրորդ անգամ սիրային անաջողութեան հանդիպելով, վճռում է ընդ միշտ թողնել այդ Ճոռչը հասարակութիւնը, թողնել ամէն ինչ և Աստուածածնի փողոց վերադառնալ՝ կօշկակար Կարապետի խրճիթը, ուտեղ ծնուել մեծացել էր մի ժամանակ: 'Ի յիշատակ իրանց ընկերութեան նա մի նամակ է թողնում Հեղինէին:

«Հեղինէ,—գրած էր նամակի մէջ,—մենք այս օրից յետոյ թըշնամի ենք. կեանքը խաղաց մի շատ վատ խաղ մեզ երկուսիս հետ. նա ձգեց ինձ Մուրադեանցի հասարակութեան մէջ և ես... ես սիրեցի նրան: Դու նոյնպէս սիրում ես նրան, դու նրա հարսնացուն ես, ուրեմն աշխարհիս և մարդկային օրէնքները և իրաւունքները քո ձեռին են, իսկ ես... ես անզօր եմ... Ես ունիմ միայն իմ սրտիս օրէնքները, որոնք նշանակութիւն չունեն հասարակութեան համար... մեր կռիւը անհաւասար է... Ես թողնում եմ պատերազմի դաշտը, թողնում եմ քեզ Մուրադեանցին և հեռանում... Բայց ո՞ւր... դեռ ինքս էլ չգիտեմ և խնդրում եմ դու էլ չաշխատես իմանալու...

Մեր մէջ ամէն ինչ վերջացած է... երբ կըկարդաս նամակս, ես կը-
լինեմ հեռու Թէոդոսիայից.....: Հասկանո՞ւմ ես, որ ես չեմ կա-
րող քեզ բախտաւորութիւն ցանկալ... այդ իմ ուժերիցս վեր է...
Բայց Մուրադեանցը, տայ Աստուած, որ բաղդաւոր, երջանիկ լինի...
Սիրի՛ր նրան:

«ՍԱՌԱ»:

Ղրիմից Սառան տեղափոխվում է Նախիջեւան, Աստուածածնի փողոցը, և նրա կեանքի մէջ սկսվում է մի նոր շրջան: Դա արդէն Երկրորդ մասն է վէպի:

Քանի տարիներ քրտինք է թափել Սառան, ուսում է առել, կրթուել է, և դրա հետևանքը՝—կրկին Աստուածածնի փողոց տեղափոխուելն է և շարունակելն ապրելու կօշկակար Կարապետների, «կինմարդ» Շուշանների հետ: Դա շատ սովորական երևոյթ է ուսում առած կանանց կեանքում: Բացի ուսուցչութիւնից կինը մեծ դժուարութեամբ է կարողանում ձեռք բերել հասարակական որ և է ուրիշ գործ. այդ դեռ ընդունուած չի մեր մէջ, դեռ խորթ է մեզ: XX դարը քթներիս է նստել, բայց մենք դեռ չենք հաւատում, թէ կինը մեզ նման մարդ է և թէ նա ունի մեզ հետ հաւասար իրաւունքներ, իրաւունք հասարակական և ընտանեկան: Աւարտեց ուսումնարանը թէ չէ—օրիորդը արդէն հարսնացու է: Այդ օրից նա պէտք է ապրի այն շրջանի մէջ, որի սնունդն է: Հակառակ դէպքում նա կենթարկուի նոյն անաջողութիւններին, որոնց մարսեց Սառան:

Когда не хочешь быть смѣшонъ.
Держися званія, въ которомъ ты ражденъ.
Простолюдинъ со знатью не роднися;
И если карлой сотворенъ—
То въ великаны не тянися,
А помни свой ты чаще ростъ.

Ժամանակակից կեանքի համար դա դառն արդարութիւն է: Ես չեմ կամենում ասել, 'ի հարկէ, թէ դա գովելի և կամ իդէալական երևոյթ է. ամենևին: Սակայն ինչքան էլ չհաւանենք մենք այդ երևոյթը, ինչքան էլ ատենք, բայց և չպէտք է մոռանանք, որ դա շատ պերճախօս փաստ է մեր կեանքում, մի փաստ, որի հետ

անհրաժեշտ է հաշուել: Արհամարհել այդ երևոյթը կարելի է միայն այն ժամանակ, երբ նա կ'դառնայ պատմական աւանդութիւն:

Աչքի առաջ ունենալով այդ ամենը՝ ես պէտք է խոստովանեմ, որ կանանց ուսումնարանի պրօգրամմն (միջակ դասակարգի ուսումնարանների մասին է խօսքս) չէ համապատասխանում առօրեայ կեանքի պահանջմունքներին: Այդ ծրագրի մէջ չկայ գոնէ մի յօդուած, որից կարելի լինէր սովորել որ և է գործնական բան, այսինքն այնպիսի բան, որ հարկաւոր է լինելու ծխօրդին ապագայ կեանքում: Ակամայ յիշում ես բժիշկ Մուրադեանցի խօսքերն՝ «Ռ—աա—մարանը դալժօ է նրան (օրիօրդին) գէտօ—նէ—ն, դալժօ է նրա յէտ—ը Սմայլը ն չէ դալժօ տօէղ»:

Նայեցէք, ընթերցող, այդ ծրագրի վրայ կրթուած սանիկներից մէկին՝ Սառային:

Ես արդէն ասացի, թէ վեց տարի ամընդհատ ուսում ստանալուց յետոյ՝ նա կրկին տուն է դարձել: Այդտեղ նրա «կեանքը անցնում էր բաւական միակերպ. վեր էր կենում նա ժամը 9-ին կամ 10-ին և արդէն ամեն ինչ գտնում էր պատրաստ իր համար. մօր հոգացողութիւնը հասնում էր մինչև անգամ Սառայի կեանքի ամենաչնչին իրերին և երևոյթներին» . . .

Բայց այդ նոր կեանքը շատ շուտ է ձանձրացնում Սառային: Շուշան խանումն էլ անբաւական էր իր աղջկայ անգործութիւնից և քանի անգամ յայտնել էր այդ միտքը իր ամուսնուն: Ծերունին միշտ աշխատում էր պաշտպանել իր զաւակը:

«—Այս ի՞նչ է,—սովորաբար ասում էր Շուշանը, երբ դեռ Սառան քնած էր լինում,—նա հէչ բան չի անելու ինձի եարդըմ (օֆնօ—նէ—ն) չուզէ անելու... ի՞նչ սայ բան է:

«—Ի՞նչ,—բարձրացնում էր գլուխը ծերունի Կարապետը:

«—Սառան տաս սաղ օրը կըկարթայ... բան չանիլ... հէչօլմասա (գօնէ) ինձի եարդըմ անէր:

«—Չգիտես ինչ, ինչպէս աղջիկ մեծացել է նա,—պատասխանում էր կօշկակարը և աւելի ցած խոնարհեցնում իւր ալեզարդ գլուխը:

«—Աղջիկ մեծացել է... ան անցաւ, ջանս... շէնօտխ ոչէտէ ախտտէ, որ հաց գտնէնէ ո—տէլը—...»:

Ինքը Սաւան էլ կամաց կամաց սկսում է հասկանալ, թէ «շուտ պիտի աշխատէ, որ հաց գտնենք ուտելու»: Սակայն ի՞նչպէս աշխատել, ի՞նչ գործի ձեռք զարկել,—այդ հարցը տանջում էր նրան: Ի՞նչ էր տուել նրան Կակայեան ուսումնարանը.—գիտութի՞ւն, լեզունե՞ր: Կարո՞ղ էր նա, արդեօք, Աստուածածնի փողոցում փող վաստակել, հաց աշխատել իր «լեզուներով», իր «գիտութիւնով»: Դժուար թէ, շատ դժուար: Երկար մտածից Սաւան և վճռեց թարգմանութիւններով պարապել. «Ահա և պարապմունք,—
—ասաց նա ինքն իրեն.—այդ լաւ կըլինի... Գոնէ աւելի լաւ, քան ոչինչ չանելը... Կարելի է ժամանակով կարողանամ և ինքնուրոյն աշխատել մատենագրութեան ասպարիզում... Գրել պատկերներ... վէպիկներ»... Բայց դրանք լոկ ցնորքներ էին. գրականական աշխատանքով մեզ մօտ գլուխ պահել չէ կարելի. պէտք է մի ուրիշ տեղից էլ եկամուտ ունենալ: Ինչ և իցէ—թարգմանութիւնը արդէն պատրաստ է: Սաւան գնում է ծրարի մէջ, կնքում և գրում հասցէն: Մի շաբաթից հայ թերթերից մէկում լոյս է տեսնում Սաւայի աշխատութիւնը: Ոչ և է վարձատրութիւն այդ աշխատութեան համար նա չստացաւ, որովհետև լրագրի խմբագիրը գրում էր՝ «Օրիորդ, մեր հայ պարբերական մամուլի նիւթական միջոցները այնքան սուղ են, որ մենք թարգմանութիւնների վարձ տալ և այդպիսով գնել, հաւատացէ՛ք, անկարող ենք. եթէ համաձայն էք աշխատել ձրի, աշխատեցէ՛ք, մենք կըլինենք շատ շնորհակալ: Փորձեցէ՛ք ուղարկել մեզ ինքնուրոյն գրուածքներ. այդպիսիները վարձատրվում են, նայելով, 'ի հարկէ, իրենց արժանաւորութեան»: Օրիորդը այդ էլ է փորձում. նա գրում է մի ինքնուրոյն վէպ: Վէպը ընդունվում է, և, ո՜ չար ծիծաղ, Սաւան՝ իբրև վարձատրութիւն՝ խմբագրից ստանում է հինգ րուբլի: «Իմ երկու շաբաթուայ աշխատութիւնս մի՞թէ արժէր միայն 5 րուբլի,—շշնջաց նա, կծոտելով իր ներքին շրթունքը.—ես կարող էի այդ միջոցին 10 րուբլու կար անել... Կարե՞լ... գրիչը փոխել ասեղի՞... Այո, այո», անդադար կրկնում էր նրա խիղճը: Եւ նա վճռում է թողնել արուեստը, պօէզիան ու կեանքի պրօզայով պարապել: Այս նոր պարապմունքին Սաւան տալիս է իր հոգին և մարմինը. նա բանում է առաւօտեան 6-ից մինչև գիշերուայ 2-ը:

Կարապետը՝ ծերութեան պատճառով՝ կորցրել էր իր աչքերի լոյսը, ինչու և թողել էր իր պարապմունքը։ Սաւան կերակրում էր մի ամբողջ ընտանիք։ Այդ աշխատանքը վեր էր նրա ուժերից։ Նա կամաց կամաց սկսում է կորցնել իր առողջութիւնը։ Եւ եթէ փոքր ինչ էլ շարունակուէր այդ կեանքը, խեղճ օրիորդն, երևի, ուժասպառ պիտի լինէր։ Բայց մի բան, վերջապէս, վճռում է Սաւայի ապագան։

Մայրը ամուսնացնում է իր աղջիկը նոյն Աստուածածնի փողոցի ծնունդ Միքայէլի հետ, որ, ինչպէս արդէն ասել եմ, կատարում էր նախիջևանցի մի աղայի մօտ գործակատարի պաշտօն և ստանում 450 րուբլի տարեկան։ Սաւան սկզբում չէր կարող հաշտուել այդ մտքի հետ. դիմադրում էր էլ մօր այդ անարդարութեան դէմ. բայց, վերջապէս, համակերպելով, որ՝ իբրև Աստուածածնի փողոցի ծնունդ՝ նա պէտք է ապրի և մեռնի նոյն իսկ Աստուածածնի փողոցում,—Սաւան սկսում է հաշտուել և, կարծես, ընտելանալ գալոց անցքին։ Այսպէս թէ այնպէս—բայց այդ քայլը հոգեկան ծանր պատերազմ է պահանջում նրանից։ Իր «յիշատակարան»-ի մէջ նա գրում էր՝

«Յունվարի 13. Ես վաղը առաւօտեան պիտի պատասխանեմ մօրս... բայց ի՞նչ... ի՞նչ... Աստուած իմ, ես ինքս չգիտեմ... «—[illegible]», Միտքս ասում է «այո», իսկ սիրտս «ոչ»... Ես չեմ սիրում, ես ատում եմ ահա մի քանի օր է այդ անտաշ, կոպիտ Թաւալեանց Միքայէլին... և ես դատապարտուած եմ, պիտի կապեմ անխզելի կապերով ապագաս նրա ապագայի հետ... Պարտաւորուած... բայց ո՞վ ասաց... ո՞վ կարող է պարտաւորեցնել ինձ... ակամայ պարտաւորեցնել... Մի՞թէ կարելի է ճանի, սեպհական կամքից հակառակ ամուսնանալ քեզ և այդ գնով գնել ազատագրութիւն [illegible]»... Եւ խեղճ օրիորդը համոզվում է, որ կարելի է... Խիղճս ասում է, որ ես դատապարտուած եմ աղօթել նրանց (այսինքն՝ ծնողներին) [illegible], և... ես կազատեմ... Իմ ապագաս խափուած, իմ կեանքս արդէն կորած է, ինձ ոչինչ լաւ, ոչինչ իրջանիկ բան չէ սպասում այլ ևս... Ես կապրեմ կատարելով ընտանեկան կեանքի պահանջները, կապրեմ իբրև կենդանի»... Սաւան հասկանում է, որ ծնողները զոհ են պահանջում... Եւ այդ զոհը լինելու է նա... Նա կ՚տայ Միքայէլին իր

«սառն դիակը... կարող է, ինչպէս կամենում է, վարուել նրա հետ», իսկ իր «սիրտը» նա կաշխատի «սպանել»... Սպանելով իր մէջ ամէն մի «կենդանութիւն»՝ նա կ՚գնայ Միքայէլին ու այդպէս էլ կապրի նրա հետ: Նախկին ուրախ, անհոգ և երջանիկ Սառան կ՚մեռնի, կ՚թաղուի և կ՚մնայ նրա ստուերը, ուրուականը միայն:

Դոստոևսկու «Преступленіе и наказаніе» ռոմանի մէջ կայ երկու այդպիսի համանման զոհեր: Վերցնենք այն, որ աւելի մօտ է մերին: Ավդոտյա Ռոմանովնան, Ռասկոլնիկովի քոյրը, զոհում է իր անձը՝ մօր ու եղբօր կեանքը աղքատութիւնից հանելու: Երկար տարակուսանքից յետոյ՝ նա «համաձայնում է» Պետր Պետրովիչ Լուժինի կինը դառնալ. բայց նախ քան այդ վճռելը՝ նա գիշերը, երբ ամէն ինչ քնած էր և ամէն տեղ տիրում խորին լռութիւն, «երկար ու տաք աղօթում էր ծնկաչոք»... Հիւանդ էր երիտասարդ Ռասկոլնիկովը, տանջվում հոգեկան տգեղութիւնից, բայց էլի կարողացաւ հասկանալ, թէ դա անբնական, եթէ ուզում էք՝ անբարոյականացնող զոհաբերութիւն է իր քրոջ կողմից: «Այո, ես հասկանում եմ,—մտածում էր նա,—թէ ինչու էր երկար աղօթում, հասկանում եմ, թէ ինչու է նա ընդունում Լուժինի առաջարկութիւնը, որին բնաւ չի սիրում և կարելի է հենց ատում է էլ... Նա ծախում է իր ազատութիւնը, իր անձն՝ եղբօր ու մօր համար. Նա կամենում է այդպիսով ապահովացնել պառաւ մօր կեանքը, իսկ իր երիտասարդ եղբօր առաջ բացել գեղեցիկ ապագայ... Ո՛չ. ոչ զոհաբերութիւն եմ ուզում ես, Դունեչկա, ոչ էլ զոհաբերութիւն պահանջում... Քանի կենդանի եմ ես—այդ բանը գլուխ գալ չի կարող... Не бывать тому, пока я живъ, не бывать, не бывать» [1]):

Եւ ամէն մէկը մեզանից պէտք է վարուի այդպէս, երբ տեսնում է, որ իր ազատութիւնը գնելու է ուրիշի անմեղ արիւնով:

Բռնի, պարտաւորուած ամուսնութիւնը ամենևին այլանդակում է Սառային: Նրա նիհարած երեսը կորցրել էր իր թարմութիւնը, առաջուայ առողջ կարմրութիւնը. Նրա՝ մի ժամանակ սուր, այրող փայլով պսպղուն՝ աչքերը ներս էին ընկել կոպերի մէջ և

1) *Ѳ. Достоевскій:* «Преступленіе и наказаніе».

Սառայի ամբողջ երեսին տալիս էին մի հիւանդ արտայայտութիւն… Միքայէլը զրկուել էր իր պաշտօնից. նոր պաշտօն էլ չկար. բայց ընտանիքը քաղցած էր, հաց էր ուզում։ Եւ խեղճ Սառան ընտանիքի բոլոր ծանրութիւնները իր մէջքին է գնում։ Նա իր ձեռքերի աշխատանքով պահում էր ամուսնուն և փոքրիկ Անիկին։

Անիկը Սառայի միակ երեխան էր, մի լղար, հիւանդ ու համարեա կիսամեռ արարած։ Այդ երեխան էր, որ կապում էր Սառային իր տան և ամուսնու հետ։ «Հաւատացի՛ր,—ասում է նա իր ամուսնուն մի օր՝ ընտանեկան խռովութիւնների ժամանակ,—հաւատացի՛ր, որ ես վաղուց կըթողնէի քեզ, եթէ… եթէ… չունենայի երեխայ… այո, Անիկս է, որ կապում է ինձ քեզ հետ… Ես մայր եմ. ես պարտական եմ և մնալ քեզ մօտ և տալ քեզ մի և նոյն ժամանակ, տալ իմ սրտի բոլոր ուժերով։ Իսկ այդ… օ՜հ, շատ ծանր է… շատ ծանր»… Բայց, ահա, Անիկը մեռնում է… Երկու՝ բոլորովին տարբեր, իրար հակառակ բնաւորութիւնները, կարծես, օտարանում են, բաժանվում են իրարից։

Սառան շարունակում էր ապրել իր փոքրիկ տնակում, իսկ Միքայէլը մի քանի շրջմոլիկ ընկերների հետ բանտարկուած էր. նրանք գողացել էին մի խեղճ հայ կառապանի ձին և բռնուել։ Սառան մենակ աշխատում էր, մենակ էլ ապրում։ Անտանելի էր—մանաւանդ կանացի թոյլ կազմուածքի համար—այն թշուառութիւնն ու աղքատութիւնը, որին ենթարկվում էր Սառան։ 20 կոպէկի համար նա ստիպուած էր ամբողջ օրը անցկացնել քարածուխի պահեստներում բանելով։ Ֆիզիկական այդ ծանր աշխատանքը, վերջապէս, յաղթեց, յաղթեց անողորմ կերպով, և անբախտ արարածն անկողին գլորուեց։ Բժիշկ Արշակ Մուրադեանցն էր հոգում Սառայի հիւանդութիւնը, այն Մուրադեանցը, որին մի ժամանակ սիրում էր Սառան, սիրում էր հէնց այժմ էլ, բայց… փոխադարձը չէր ստացել… Հիւանդութիւնը երկար չտևեց։ Առանց այն էլ վարակուած թոքերը չկարողացան այլ ևս ապրել… Թոքախտը մի կողմից, ոգեվարքը միւս կողմից խեղդում էին հիւանդին… Սուրբ հաղորդութիւնը ընդունելուց Սառան փոքր ինչ հանգստացաւ և ուշքի եկաւ։

«—Արշա՛կ… շշնջաց նա հազիւ լսելի ձայնով, Արշակ… մօտեցիր ինձ…

«Մուրադեանցը ծունկ չոքեց նրա անկողնի առաջ:

«Մեռնող Սաքոն առաւ նրա ձեռը, սեղմեց կարողացածի չափ, մօտեցրեց շրթունքներին և ջերմ համբուրեց:

«Նա չէր թողնում բժշկի ձեռը:

«Մուրադեանցի աչքերից կաթ կաթ ընկնում էր արտասուքը:

«— Արշա՛կ... ես... ես... մեռնում եմ երջանիկ... այս մի քանի րոպէն վարձատրեց ինձ իմ ամբողջ թշուառ կեանքիս փոխարէն... Արշա՛կ» . . .

Հիւանդը լռեց յաւիտեան: Եւ նա մեռաւ, 'ի հարկէ, ու-եր-ջանիկ: Ոգեվարքի մէջ պառկած հիւանդի վերջին խոստումն արբեցած բանականութեան մի ճիչ էր: Նա սէր էր որոնում այս աշխարհում. նա սիրում էր արդէն, և չէր ստացել փոխարէնը... Իսկ այժմ նրան թւեց, որ փոխարէնը գտաւ, վարձատրուեց... բայց դա միմիայն... թւե՜ց...

Է՛հ, էլի լաւ է գոնէ այդպէս մեռնել, կարծեցեալ երջանկութեան և բախտաւորութեան ժպիտը շրթունքի վրայ, քան թէ շարունակել կռուելու կեանքի ահեղ զրկանքների հետ սառն մահուտագնապի մէջ անգամ... Սաքոն խօխապէ երջանիկ մեռնել չէր կարող: Մի մարդ, որ՝ ապրելու փոխարէն՝ միշտ ստիպուած էր մանեկէնի պէս մեքենայաբար կատարել ուրիշի կամքը, որ միշտ խաբուած է եղել իր յոյսերի մէջ, որի իդէալը խորտակուել է 'ի վերջոյ՝ դիպչելով կեանքի դառն իրականութեան գոռոզ ժայռերին, այդպիսի մի մարդ, համաձայնեք, չէր կարող երջանիկ մեռնել... Բայց որքա՜ն շատ, հնարաւորութիւն կար Սաքոյի կեանքում բախտաւոր լինելու... Ո՞վ էր մեղաւորը... մի՞թէ ինքը Սաքոն: Պատասխանենք այդ դիւրագրգիռ (щекотливый) հարցին հանգուցեալի խօսքերով:

«Ես ինչո՞վ եմ մեղաւոր,— արդարանում էր Սաքոն մի ժամանակ կեանքի առաջ,— որ ինձ հանեցին Աստուածածնի փողոցից և տեղաւորեցին Կովկասեան ուսումնարանում. մի՞թէ ես խնդրում էի, որ ինձ բարէ-գործա-րէ-ն անեն. իրենք բազմապատկեցին իմ անձնական պահանջմունքներս և իրենք էլ նորից, երբ արդէն շատ ուշ է, առաջարկում են ինձ Աստուածածնի փողոցը, իմ առաջուայ, զրկանքներով լի կեանքը»... «Ճշմարիտ ասած, որ ինքս անձամբ չէի

խնդրում նոր կեանք... (կարդում ենք նրա յիշատակարանում)... ընդհակառակը... ինձ գրքերը մղեցին դէպի այդ նոր կեանքը, գրքերը զարգացրին իմ մտաւոր ույժերս, բազմապատկեցին պահանջներս, տուին նոր տեսակէտ կեանքի և նրա նշանակութեան, կնոջ կոչման, պարտականութեան և իրաւունքների վրայ... այդ ուրիշները մի անգամ հեռուից երևան հանեցին իմ աչքերիս առաջ այդ փայլուն, նոր կեանքը, երևան հանեցին իբրև Աւետեաց աշխարհը Իսրայէլի զաւակների առաջ, հանեցին և իսկոյն Թաքցրին ինձանից այդ կեանքը. չտուին իրաւունք մօտենալու նրան, ապրելու այդ կեանքով... այո... չտուին... նրանք ութը տարի շարունակ զարգացրին իմ մտաւոր ու հոգեկան ույժերս, այնպէս որ անջատեցին, բաժանեցին ինձ իմ ծնողներիցս, հարկադրեցին սառչել նրանցից, պատրաստեցին իրենց փակ ուսումնարանում իբրև մի ծաղիկ ինձ նոր կեանքի և... և չտուին և չէին կարող տալ ինձ անցագիրը, որ տալիս է իրաւունք և միջոց անվախ մտնելու այդ կեանքի շրջանը..... Նրանք հասկացրին ինձ կեանքի նշանակութիւնը, տուին մի անգամ հոտոտելու այդ ծաղիկը և ահա խլում են նրան ինձանից, խլում են ուժով... և ես... ես անզօր, անպաշտպան, կրկին մնում եմ Աստուածածնի փողոցում... Բայց իմացէք, իմ բարեգործներ, որ այժմս խորթ է ինձ այդ փողոցը, նրա բնակիչները, նրա առօրեայ կեանքը... Ես սառել եմ դէպի ամեն բան, որ սեպհական է Աստուածածնի փողոցին, նրա կեանքի արտայայտութիւնն է»... «Ի՞նչ հիման վերայ դպրոցը ինձ իր ձեռքում խաղալիկ դարձրից և պատրաստեց ինձ նոր կեանքի համար, որից ես զուրկ պէտք է մնայի, մի՞թէ ունէին այդ իրաւունքը և մի՞թէ այդ բարեգործութիւն է, որ նրանք արեցին ինձ... ոչ... և կրկին ոչ... լաւ է թողնէին ինձ մեծանալ իմ հարազատ՝ մանկութիւնից ծանօթ՝ շրջանում, թող չյայտնէին ինձ, որ կայ ուրիշ, աւելի լաւ շրջաններ... Ես չէի լինիլ այդպէս... ես ժամանակով կըդառնայի մայր, կունենայի զաւակներ, և ամեն ինչ կ'գնար իր կարգով... Իսկ այժմ»...

Այժմ... երկար կռուելով կատաղի հոսանքների դէմ՝ նա——դիակ դարձած—գլորուել է սառն գերեզման։ Նա, որ կարող էր լինել լաւ մայր, լաւ ամուսին, — նախապաշարմունքների ենթարկուելով՝ անմեղ զոհ է դառնում, զոհ չար դրութիւններին... Բայց

ով... ով, հարցնում եմ ձեզ, բարեգործներ, ով տուեց ձեզ «իրաւունք դառնացնել մատաղ սիրտի գեղափթիթ կեանքը, և այդ կեանքը կործանել ծաղիկ հասակում, իր գեղեցիկ յոյսերով»... ո՞վ տուեց ձեզ իրաւունք «կործանել» խեղճ աղջկայ «պաշտած կուռքը, աստուածը և շատ նրան մի ուրիշը»...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ.

(*Շարունակելի*):

ՁԵՌԱԳԻՐ

(ԺԱԿ ՆՈՐՄԱՆԻ ՎԷՊԻԿԸ).

Մի անգամ՝ ամբողջ Փարիզին լաւ ծանօթ՝ տաղանդաւոր Jeune première Իւլիա Դեշանը, թատրոնից տուն վերադառնալիս հաստատ վճռում է կատարել մի ծայրահեղ և անմիտ քայլ։

Թատրոնի վերատեսուչը՝ պարոն Բերգասսիէր, ոչ թէ չարամիտ, այլ անարդար մի մարդ, զրկել է նրան «դերից», մի հիանալի դերից, ուրպէս զի տայ այդ դերը և ում—աննշան ու անձիրք դերասանուհի Լորիանին, որ ոչինչ չունի, բացի իր շքեղութեամբ փայլող շորերից և կանացի գեղեցկութիւնից. . .

Գեղեցիկ կին... Եւ նա, Իւլիան, նա էլ գեղեցիկ էր նոյնպէս և մինչև անգամ աւելի՝ նա հրապուրիչ էր... Բայց բանը ահա ինչումն է։ Թէպէտև նա քսան և չորս տարեկան էր, և այդ տարիներից երկուսը անց էր կացրել երաժշտանոցում, և հինգ տարի է արդէն ինչպէս բեմի վրայ էր, այսու ամենայնիւ նա պահպանել էր և այսուհետև էլ կամենում էր պահպանել իր «կուսութիւնը»։ Նա հաստատ վճռել էր ապրել միմիայն իր արուեստով և նրա իսկ համար, ցնորուելով, թէ մի օր էլ կամուսնանայ մի լաւ մարդու հետ, որը կ՚սիրի նրան, նա կունենայ երեխաներ, որոնք չեն ծակիլ նրա աչքերը... Բարի՜, ազնի՜ւ ցնորքներ. . .

Նա ամէն կերպ աշխատում էր հաւատարիմ մնալ իր համոզմունքներին։ Նա՝ առանց ափսոսալու՝ մերժում էր իրան անթիւ ու անհամար պաշտողների ու երկրպագուների առաջարկութիւնները։

Դեռ մի քանի ամիս է անցել միմիայն, ինչպէս մի ռուս կոմս, նոյնքան հարուստ, որքան և հրապուրիչ, զանազան ճանապարհներով հասկացնում էր օրիորդ Դէշանինին, որ պաշտում է նրան, և եթէ նա համաձայնէր թողնել բեմը, կոմսը պատրաստ էր ամեն ինչ անել նրա համար... Իւլեան մնաց անողոքելի։

Սակայն այդ անգամ կատարեալ յուսահատութիւն է տիրել խեղճ օրիորդին։ Դուրս գալով փողոց՝ նա աշխատում էր զսպել իր արտասուքը. բայց հազիւ նա ոտ է դնում այն տան սանդուխքի վրայ, ուր ինքն էր կենում, այլ ևս չի կարողանում զսպել իրան և սկսում է հեկեկալ։ Երբ որ անցնում է դառն վշտի առաջին ծանր հարուածը, նա սկսում է արագ-արագ մինումէջ անել սանդուխքի աստիճանները և յուզուած՝ թաշկինակը իր արտասուալից աչքերին սեղմելով՝ անկապ նախադասութիւններ է շշնջում.

— Ոչ, բաւական է, բաւական... Այո, ես էլ ուրիշների պէս կապրեմ... Ի՞նչ արած, եթէ առանց դրան անկարելի՛ է... Ախ այդ Լորիանը... Ո՛չ, ո՛չ։ Այժմ ամեն ինչ վերջացած է... Այդքանն էլ բաւական է ինձ...

Հասնելով իր բնակարանին՝ նա սեղմում է էլեքտրական զանգի կոճակը։ Պառաւ աղախինը բացում է դուռը։

— Շո՛ւտ, շո՛ւտ տեղաւորիր իրեղէններս, Ժիւստինէ,— շտապ արտասանում է նա՝ մտնելով իր սենեակը։

Ապշած աղախինը հետևում է նրան։

— Դու չհասկացա՞ր... իրեղէններս... այս րոպէիս... Ես գնում եմ, երկու ժամից յետոյ ես գնալու եմ։

— Երկու ժամից յետո՞յ... Իսկ թատրո՞նը։

— Թատրո՞նը. իմ ոտն այսուհետև չէ լինելու այնտեղ։ Ես արհամարհում եմ թատրոնը... Դէ՛հ, շտապի՛ր, շտապի՛ր... Տեղաւորի՛ր բոլոր իրեղէններս, բոլորը, ես ամեն ինչ տանում եմ հետս։

— Օրիորդ, դուք խելագարուել էք... կամ թէ... ծաղրում էք ինձ...

— Ես ծաղրո՞ւմ եմ... Ահա կ'տեսնես — ճիշտ է խօսքս թէ հանաք...

Եւ այս ասելով՝ նա մի սաստիկ շարժումով բաց է անում իր շկափը և յետոյ կամօդը։ Մէկը միւսի ետևից հանելով իր իրե-

ղէնները՝ ինչ որ ընկնում էր ձեռքի տակ՝ Իւլիան սկսում է անխնայաբար շպրտել սենեակի մէջտեղը:

— Ահա այդպէ՛ս, այդպէ՛ս... և շո՛ւտ, շո՛ւտ...

Պատուար ուսերը վեր քաշելով՝ կատարում է իր օրիորդի հրամանը: Հարևան սենեակից նա դուրս է բերում երկու հին չէմօդան, որոնք դերասանուհու անբաժան ուղեկիցներն էին, ուր որ էլ նա գնար, և ամբողջապէս նախշուած էին բազմաժի տոմսակներով:

— Ահա դրանց մէջ կ՚փաթաթես ոտնամանները,—ասաց Իւլիան, հանելով պահարանից լրագիրների, բրօշիւրաների ու ձեռագիրների մի մեծ կապոց և գցեց աղախնուն, որը, մրթմրթալով, փաթաթում էր օրիորդի կիսակօշիկներն և տեղաւորում չէմօդանի մէջ:

Լուսամուտի մօտ կանգնած էր մի փոքրիկ գրասեղան: Իւլիան նստում է սեղանի առաջ և շտապով գրում հետևեալ նամակը.

«Յարգելի կոմս,

Ահա վեց ամիս է արդէն, ինչպէս դուք յայտնել էք թէ սիրում էք ինձ: Ես կամենում եմ հաւատալ դրան: Այսօր երեկոյեան ժամը ութին ես ձեզ կ՚սպասեմ Լիօնի կայարանում: Մենք կ՚գնանք միասին... ուր որ կ՚կամենաք: Ես հրաժարվում եմ բեմից: Տուգանքս, յոյս ունիմ, կ՚վճարէք, ինչպէս խոստացել էիք:

«Ցտեսութիւն. «Իւլիա»:

Այդ նշանակում էր հրաժարուել կուսութիւ՛նը պահպանելու համար կռուից. այդ նշանակում էր, գուցէ ընդմիշտ, մոռանալ, սևացնել կարիերան, ապագայ կեանքը, խորտակել բոլոր գեղեցիկ ցնորքներն. այդ նշանակում էր յանձնուել խայտառակ և արկածալի կեանքի ալիքներին... Բայց ախ՜ ի՞նչ արած... Վերջին անարգարութիւնը կատարելապէս սպանել էր Իւլիային. նա այժմ պատրաստ էր ամեն ինչ անել:

— Այդքանն էլ բաւական է ինձ, բաւական է,—կրկնում էր նա՝ ատամները պինդ սեղմելով:

Գրելով հասցէն՝ նա նամակը տալիս է Ժիւստինէին:

— Այս րոպէիս տո՛ւր թղթատարին:

Բարի պառաւը մեքենայաբար կարդում է հասցէն, և ամէն ինչ հասկանում։ Դա հարուածում է նրան։

— Օրիորդ... ղաւակս... բացականչում է նա։

— Կատարիր, ինչ որ քեզ հրամայում եմ։

Հէնց այդ րոպէին լսւում է զանգի ձայնը։

— Կասես, որ տանը չեմ, հասկանո՞ւմ ես։ Ոչ մէկին չընդունես, ոչ մէկին։

Ժիւստինէն բացում է դուռը։

— Ինձ շատ անհրաժեշտ է տեսնել օրիորդ Դէշանին,— խընդրում է նոր եկող տղամարդը։

— Դժբախտաբար, օրիորդը տանը չի։

— Սուտ է, ես ինքս տեսայ, ինչպէս նա հէնց նոր տուն վերադարձաւ։

— Բայց, պարոն. . .

— Յանձնեցէք նրան իմ այցետոմսը. նա կընդունի ինձ։

Ժիւստինէն այցետոմսը տարաւ յանձնելու օրիորդին։

— Պիեր Դիւրա՞ն... Կարծեմ, որ այդ անունը ինձ ծանօթ լինի, բայց ես ամենևին չեմ կարողանում մտաբերել... Ասա, որ ես տանը չեմ։

Նախասենեակում աղմուկ և հիւրի մէջ վէճը նորոգվում է։ Վերջապէս այդ ձանձրացնում է Իւլիային, և նա ինքը նախասենեակ է գնում։

— Մեծապատիւ պարոն, ձեր կամակորութիւնը բոլորովին անհասկանալի է։ Ի՞նչ էք կամենում ինձնից։

Նրա առաջ կանգնած էր բարձրահասակ մի երիտասարդ, աղքատ, բայց վայելուչ կերպով հագնուած, պարկեշտ և մինչև անգամ ամօթխած դէմքի արտայայտութեամբ և վառվռուն աչքերով։

— Ներողութիւն, օրիորդ, — մրթմրթաց նա, — ես մի քանի անգամ արդէն այցելել եմ ձեզ և այդ անգամ. . .

— Այդ անգամ դուռս էիք կամենում կոտրել, հա՞։

— Աստուա՜ծ իմ։ Ներեցէք, օրիորդ... Ես ապրում եմ Փարիզի միւս ծայրում... Ես ամբողջ օրը զբաղուած եմ. . .

— Դէ լաւ, բայց ինձնի՛ց դուք ի՞նչ էք կամենում։

— Դուք տեսա՞լ էք իմ այցետոմսը։

— Այո։

— Ուրեմն դուք պիտի յիշէք... ձեռագիրս, պիեսս չորս ակտով, որ ես թողել եմ ձեր ծառային ձեզ յանձնելու... մի ամիս դրանից առաջ...

Ուլեան աշխատում է մտաբերել։ Արդարև նա ստացել էր այդ ձեռագիրը հեղինակի փոքրիկ նամակի հետ, բայց, զբաղուած լինելով իր գործերով, հոգսերով ու անբաւականութիւններով, նա դեռ ևս չէր կարողացել ծանօթանալ այդ պիեսայի հետ։

— Այո... այո, ես յիշում եմ։ Բայց միթէ ժամանակ ունի՞նք մենք կարդալու այն ամենը, ինչ որ ուղարկում են մեզ։ Եւ յետոյ, ինչո՞ւ է պէտք այդ ամենը։ Ի՞նչ հարկաւորութիւն կայ սովորելու, աշխատելու, իզուր մսխելու կեանքի ոյժերը... Ո՞վ պէտք է շնորհակալ լինի...

Նա խօսում էր՝ արծարծելով իր յամառ միտքը և համարեա թէ մոռանալով անծանօթ մարդու ներկայութիւնը։

— Եւ այդ ասում է ձեր նման մի դերասանուհի՜։

— Դերասանուհի՞...—և կծու ժպտաց օրիորդը։

— Ինչ և լինէ, օրիորդ, բայց եթէ դուք դեռ ևս չէք կարդացել իմ պիեսան, արդեօք, կարո՞ղ եմ ես յուսալ, որ դուք մօտ ապագայում կ'կարդաք նրան։

— Ե՞ս, ո՛չ, մի՛ յուսաք։

— Ուրեմն՝ եթէ դուք խորտակում էք բոլոր յոյսերս, բարեհաճեցէք վերադարձնել ինձ իմ ձեռագիրը։

— Ձեր ձեռագի՞րը։ Ես ամենևին չգիտեմ, թէ ուր է նա։ Այսուամենայնիւ եկէք որոնենք միասին։

Երիտասարդը հետևում է Ուլեային։ Վերջինը, ցոյց տալով անկարգութեամբ թափուած իրեղէնները, թղթերը և չէմօդանը, ասում է՝

— Տեսնում էք, ես գնում եմ... Ես թողնում եմ Փարիզը... առժամանակ... Ձեր ձեռագիրը այստեղ պիտի լինի։ Ի՞նչ ձևի է, ի՞նչ գոյնի նրա արտաքին տեսքը, — հարցնում է Ուլեան հեգնօրէն։—Մե՞ծ է, փո՞քր, կարմի՞ր, կանա՞նչ, կապո՞յտ։ Դէ հ, ասացէք։

Երիտասարդը շարունակում է մնալ շփոթուած ու ամօթխած։

— Նա մեծ է, կապոյտ փաթթոցի մէջ։

Իւլիան փնտրում է և չէ գտնում։ Վերջապէս չէմօդանի տակը նա նկատում է տրորուած, ճմլած մի կապոյտ թուղթ, որի մէջ մի ինչ որ բան էր փաթաթած։ Անկասկած—դա ձեռագիրն է։ Նա կարմրում է։ Այդ գրութեան մէջ ձեռագիրը վերադարձնե՜լ... Աւելի վատ։ Սակայն... էլ ինչո՞ւ ամաչել. .

Նա արագութեամբ վերցնում է փաթթոցը չէմօդանի տակից և բաց է անում։ Նրա միջից երկու փոքրիկ կլասկօշիկ խուլ ձայնով գլորվում են պարկետի վրայ։ Նա փաթթոցը մեկնում է երիտասարդին՝ անհոգութեամբ ասելով.

— Դա՞ է հէնց մեր որոնածը։

Արդարև այդ նրա ձեռագիրն է։

Երիտասարդը շփոթվում է։ Մի առ ժամանակ նա անշարժ կանգնել էր. արտասուքի կաթիլները փայլում էին նրա աչքերին։ Յետոյ նրա մէջ կատարվում է մի զարմանալի փոփոխութիւն։ Նա արագութեամբ և համարեա թէ կոպիտ կերպով խլում է իր ձեռագիրը, իբր մի թանկագին գանձ, որը կարող են գողանալ նրանից, և՝ հազիւ զսպելով իրան՝ արտասանում է խուլ զայրացած ձայնով՝

— Այո, օրիորդ, այդ իմ ձեռագիրն է, մի ձեռագիր, որի մէջ ես ամփոփել եմ բոլոր իմ հոգին, որի վրայ աշխատել եմ քանի՜ անքուն գիշերներ... Դրանով էի ապրում ես, դրա՛ն սիրում և դրա՛ն փայփայում... Եւ ինչո՞ւ համար, ինչո՞ւ։ Արդեօք—նրա համար, որ մի գեղեցիկ օր, իմ մտքի այդ պտուղը, հոգուս արդասիքը թափառական կատակերգուհու կօշիկներ փաթաթելու համար ծառայէր։

Իւլիան ցնցվում է այդ խօսքերից։

— Այո, թափառական կատակերգուհու... Հէնց այդ անունին էք արժանի դուք, մի դերասանուհի, որ ամենևին չի քաշում իր արուեստի հոգսը, որը չգիտէ պատուել, գնահատել ոչ իւր, ոչ էլ ուրիշի աշխատանքը։ Իմ գրուածքը գուցէ վա՞տ է, թո՞ղ։ Բայց ստեղծելով նրան՝ ես ձեր վրայ էի մտածում, ձեր մեծութեանը արժանի դերի մասին էի երազում... Դուք պարտաւոր էիք կարդալ այդ ձեռագիրը, գիտցուք թէ նրա համար միայն, որ հէնց առաջին երեսը կարդալով մի կողմ շպրտէիք նրան... Ինչ և իցէ, դուք պիտի ազատէիք ինձ մի այդպիսի վիրաւորանքից՝ յանուն ձեր կարիերայի, ձեր անցեալի, ձեր արուեստի. . .

Իւլիան՝ սաստիկ զուարթացած՝ լսում էր այդ անպատուած, կատաղած երիտասարդին և զգում էր, թէ նա ճշմարիտ է խօսում: Նա արդէն պատրաստ է ներողութիւն խնդրել նրանից, արդարանալ նրա առաջ.—ախր չէ՛ որ նա ինքն էլ ամենքից շատ պաշտում, յարգում էր աշխատանքը... Բայց այստեղ նա յիշում է իր անցեալի վիրաւորանքներն և մի տեսակ նեարդային ծիծաղով—ձեռքերը կրծքին խաչաձեւած—այդպէս է խօսում՝

— Արուե՞ստ... Եւ դուք դեռ ևս շարունակո՞ւմ էք հաւատալ արուեստի գոյութեանը: Դուք միամիտ էք, անչափ միամիտ: Իմացէ՛ք ուրեմն, որ այժմ այլ ևս արուեստ չկայ: Կայ միմիայն արհեստ, անարդարութիւն, պլօտէկցիա... Իմ անցեա՜լը, իմ կարիե՜րան... Ինձ ճնշում է այդ անցեալը, ես հոգնել եմ այդ կարիերայից... Եւ ես բախտաւորութիւն չեմ զգալու, մինչև որ չձգեմ, չհեռանամ բեմից, որովհետև վիրաւորանքից, անբաւականութիւնից և բամբասանքից զատ ուրիշ ոչինչ չգտայ ես նրա մէջ... Այո՛, ես մտածում եմ միայն այն օրուայ մասին, երբ կոչնչանամ, երբ ընդ միշտ կ՚վերջանայ, կ՚դադարի ամեն մի կռիւ...

— Բայց ո՞վ չի ստիպուած կռուելու,—եռանդով պատասխանում է երիտասարդը,—անդադար, անընդհատ կռուելու այն խոչընդոտների հետ, որոնք միշտ կանգնած են լինում կեանքի ճանապարհին: Ախր դրանումն է հէնց դժուարին կեանքը... Նայեցէ՛ք ինձ: Արդէն տասը տարի է, ինչպէս ես կռւում եմ... Ես աղքատ եմ, շատ աղքատ... Ես ունիմ կին, մի փոքրիկ աղջիկ, որոնք ապրել են ուզում: Ես ամբողջ օրը զբաղուած եմ, որ կարողանամ ձեռք բերել մեր օրեկան հացը: Միմիայն երեկոները ես կարող եմ կենդանանալ, մտածել, աշխատել ահա այդ տեսակ ձեռագիրների վրայ... Եւ ահա—հէնց այն ժամանակ ես ոգևորվում եմ ու ցնորում աջողութեան մասին, ինձ թանկագին արարածների բարեկեցութեան մասին, որոնց ես այնքա՜ն սիրում եմ և որոնք խաղաղութեամբ քնած են հարևան սենեակում: Դուք տեսնում էք, որ ե՛ս էլ ունիմ իմ վշտերս ու ցաւերս: Բայց, այսու ամենայնիւ, ես առաջ եմ գնում արիւնաշաղախ ոտներով, դէպի երկինք բարձրացրած ճակատս... և նպատակիս կ՚հասնեմ՝ ես հա—ատ ունիմ:

Իւլիան խորը յուզուած, վրդովված է: Մի՞թէ այն ամենը, ինչ

որ ասում էր երիտասարդը, մի՞թէ մի և նոյնը քանի քանի՜ անգամ չէր կրկնել նա ինքն իրան։ Այո, աջողութիւն... որին կարծես մօտենում ես ահա, և որը իսկապէս հեռանում է քեզնից... Բայց երբ որ կ՚հասնես նրան, կ՚տիրապետես, հռչակաւոր դերասանուհի կ՚դառնաս, այն ժամանակ, այն ժամանակ ապահովուած է անկախ կեանքը, ապահովուած է ազնիւ և լաւ կեանք վարելու կարելիութիւնը... ապահովուած է բախտը։ Այո, այդ հնարաւոր բան է, բայց միմիայն արիութեան և հաւատքի շնորհիւ...

Մինչդեռ երիտասարդը մի քիչ կորանալով,—արտասանում է սառն և անտարբերութեամբ՝

–– Ներեցէք ինձ, օրիորդ։ Ես սաստիկ յափշտակուեցի։ Ներեցէք և մնաք բարով...

Իւլեայի բարի բնաւորութեան ազնիւ յատկութիւնները նորից զարթնեցին, և նա ասում է՝

— Ոչ, այդ ես, ես ձեզ վիրաւորեցի։ Դուք արդար էք խօսում. ես պարտաւոր էի կարդալ ձեր ձեռագիրը։ Բայց որովհետև ես այդ չարեցի, արդիօք, դուք ինքներդ չէ՞ք կարդալ, որ ես լսեմ... համաձա՞յն էք։

Նա առաջարկում է երիտասարդին աթոռ, և մի քանի ժամանակից յետոյ Պիեր Դիւրանը արդէն կարդում էր իր պիեսան։

Դա մի դրամա էր չորս գործողութեամբ. նրա մէջ կային մի քանի թերութիւններ, նկատվում էր անփորձութիւն, բայց ընդհանրապէս ահագին տպաւորութիւն էր թողնում։ Հեղինակը կարդում էր նրան շատ հասարակ, բայց խորը համոզուած ձայնով։

Իւլեան՝ լուռ, ոչ մի անգամ չընդհատելով ընթերցանութիւնը՝ լսում էր երիտասարդին մի այնպիսի ուշադրութեամբ, որը բոլորովին կլանել էր նրան։ Երբ երիտասարդը վերջացնում է, Իւլեան, տեղից բարձրանալով, մեկնում է նրան իր ձեռքը.

— Դուք իրաւունք ունէք հաւատալու ձեր ուժերին,—ասում է նա.—ձեր պիեսան հիանալի է... Գլխաւոր դերը ես ինձ վրայ եմ վերցնում... և այդ անգամ նրան ինձնից չեն խլել...

Իսկ երբ երիտասարդը, հեռանալով, սկսում է ներողութիւն խնդրել և յայտնել իր շնորհակալութիւնը, Իւլեան պատասխանում է՝

— Շնորհակալ մի եղէք ինձնից։ Ոչ թէ դուք, այլ ես իմ ձեզ պարտաւոր և աւելի շատ, քան թէ դուք կարող էք երևակայել։

Պիեր Դիւրանը հեռանում է։ Իւլիան՝ քիշելով իր գրած նամակը կոմսին՝ ցնցվում է։

— Նամա՞կս... Դու ուղարկեցի՞ր նամակս, — հարցնում է նա անհանգիստ սրտով իր պառաւից։

Խեղճ Ժիւստինէն՝ աչքերը գետին դարձրած՝ վախկոտ ձայնով պատասխանում է՝

— Աստուած իմ... Օրիորդ... Ես կարծում էի... Ինձ թւում էր... Առէ՛ք, ահա ձեր նամակը։ Ես չունեմ այնքան ույժ, հոգու զօրութիւն, որ ուղարկեմ ձեր նամակը։

Իւլիան մի վարկեանում ոչնչացնում է նամակը։

— Հաւաքիր իրեղէնները, ամէն ինչ դիր իր տեղը և դրկիր ինձ, Ժիւստինէ. ես մնում եմ. . .

Ա. ԼԱԶԱՐԵԱՆՑ.

ԻՆՉ Է ԿՏԱԿԵԼ ԻՐ ԱԶԳԻՆ Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԸ.

На всѣ мои стихи я гляжу довольно равнодушно, какъ на старыя проказы съ Каверинымъ и съ театральнымъ маіоромъ и проч.

А. Пушкинъ.

I.

«Намъ кажется, что для критики, для литературы, для самаго общества гораздо важнѣе вопросъ о томъ, на что употребляется, въ чемъ выражается талантъ художника, нежели то, какія размѣры и свойства имѣетъ онъ въ самомъ себѣ, въ отвлечніи, въ возможности»[1],—

—Մենք աւելի յարմար բան չգտանք, որով կարելի լինէր սկսել Պուշկինի գրականական գործունէութեանը նուիրած՝ մեր յօդուածը, քան կրիտիկոս-հրապարակախօս Դօբրօլիւբօվի այդ գեղեցիկ խօսքերն։ Ախր մե՛ղ ինչ, որ այս ինչ և կամ այն ինչ բանաստեղծը, քերթողը յոյսեր է տալիս ժամանակով երևելի քերթող, մեծ բանաստեղծ լինել. — քննելով նրան, նրա գործունէութիւնը՝ մենք պէտք է աչքի առաջ ունենանք միմիայն այն, ինչ որ արդէն ստացել ենք նրանից. և հէնց այդ էլ միմիայն կարող է մեզ համար դրական և բացասական որ և է նշանակութիւն ունենալ։ Զանազան գուշակութիւններ ապագայի վերաբերմամբ՝ այդ դէպքում՝ բոլո-

---

[1]) *Н. А. Добролюбовъ*: «Сочиненія». СПБ., 1885 г., т. II, стр. 479

վէն աւելորդ խաղեր են։ Ասել թէ «վաղահաս մահը թոյլ չտուեց Պուշկինին Շէքսպիրի, Դանտէի, Միլտօնի հետ մի աստիճանի վրայ կանգնելու»[1])—մի և նոյն է—եթէ ոչինչ չասել։

Մինչդեռ այդպէս չէ վերաբերուել ռուս կրիտիկան և ռուս հասարակութիւնը դէպի Պուշկին։ Նրանք երկրպագել են, երկրպագում են անգամ այժմ էլ, ոչ թէ այն Պուշկինի, որի մասին մենք պէտք է գաղափար կազմենք բանաստեղծի կեանքից և նրա գրականական գործունէութիւնից դուրս բերած տպաւորութեան վրայ հիմնուելով, այլ այդ կրիտիկան, այդ հասարակութիւնը ստեղծել են մի ուրիշ Պուշկին՝ իրանց ֆանտազիայի ծնունդը, և դրա առաջ են խունկ ծխել ու շարունակում են ծխել մինչև այժմ։

Ո՞ր մէկը ռուս գրականական և կամ հասարակական գործիչներից արժանացել է այն փառքին ու պատուին, որին արժանացաւ Պուշկինը 1880 թուականին։ Այդ ժամանակ, յունիս ամսին էր, Մոսկուայում կատարվում էր Պուշկինի արձանի բացման հանդէսը։ Էլ մարդ չէր մնացել Ռուսաստանի մէջ—ամէն ոք շտապել էր մասնակցելու այդ հանդիսին։ Իրաւ որ հիանալի էր այդ հանդէսը, որ ուղիղ երեք օր տևեց, և հարիւր հազարներ կլանեց ռուբլիներից։

Սակայն ի՞նչ է արել Պուշկինը, ի՞նչ տուել Ռուսաստանին, որն, աւելի քան շնորհակալ վերաբերուելով դէպ՝ իր բանաստեղծը, դերադասել է նրան իր բոլոր գործիչներից։ Ասում են՝ Պուշկինը երևելի բանաստեղծներից երևելին է, թէ նա հանճար է. նա գրականութիւն է ստեղծել, լուսաւորութիւն, ազգայնութիւն է կտակել իր հայրենիքին...[2]) է՛հ,

Говорятъ, говорятъ, говорятъ...
Да и мало-ль о чемъ, господа, говорятъ!..[3])

Ասողները ասում են, լսողներն էլ՝ առանց որ և է լուրջ հաշիւ պահանջելու՝ հաւատում իրանց լսածին։

Առաջ բերելով ռուս մի քանի լուրջ քննադատների եզրակացութիւնները Պուշկինի մասին՝ մենք ցոյց կ՚տանք թէ ո՞րը գրան-

---

[1]) *А. В. Дружининъ*: «Сочиненія». т. VII, стр. 82.

[2]) «Пушкинъ—это народность и просвѣщеніе»,—ասել է Ի. Ա. Ակսակովը։

[3]) Послѣ Пушкина. Сборникъ стихотвореній русскихъ поэтовъ. М. 1890 г., стр. 388.

ցից, մեր կարծիքով ուղիղ է, որը — սխալ, ու միևնոյն ժամանակ կ՚յայտնենք մեր իսկ եզրակացութիւնը։— Ոչ մի բանաստեղծ, ոչ մի քերթող այն աստիճան անարդար կարծիքների չի ենթարկուել ռուս կրիտիկայի կողմից — ինչպէս Պուշկինը։ Ճանաչելով ռուս կրիտիկայի լըջութիւնը, ազնւութիւնը՝ մարդ ուղղակի զարմանում է նրա արած այդ կոշտ սխալներին, ու չգիտէ — ի՛նչպէս բացատրել այդ ամէնը։

II.

Պիսարեւի «Пушкинъ и Бѣлинскій»[1]) հռչակաւոր յօդուածը շատ աղմուկ և contra պատողութիւններ է յարուցել իր ժամանակին։ Դրանով, ինչպէս ենթադրում էին այն ժամանակ մի քանիսները, նա իր անունը բոլորովին կոտրել էր։ Հաւատացած բան էր միթէ, որ մի երիտասարդ քննադատ վստահանար ձեռք բարձրացնել Պուշկինի հռչակի դէմ. չէ՛ որ, այդպէս վարուելով, նա ոտնակոխ էր անում այն ամէնն, ինչ որ ռուսի նուիրականն էր. նրա սրբութիւնը, նրա կուռքը։ Հէնց այժմ էլ, երբ ռուսը ինչքա՜ն առաջ է գնացել իր զարգացմամբ, հէնց այժմ էլ, տեսում ենք, կան քննադատներ ռուս գրականութեան մէջ, և յարգելի, անուն հռչակած քննադատներ, որոնք չեն կարողանում ներել Պիսարեւի «այլանդակ ծայրահեղութիւնը»։

Իր մանրամասնութիւնների մէջ այդ յօդուածը, իրաւ է, ծայրահեղութիւններ պարունակում է, — Պիսարեւի սուր, երիտասարդ, եթէ ուզում էք, աւելի քան համարձակ — խելքի հետևանքները սիրալիր ընդունելութիւն գտել են այդտեղ, — բայց եթէ մի կողմ թողնենք մանրամասնութիւններն և գտնենք յօդուածի ընդհանուր մտքին, պէտք է խոստովանենք, որ շատ արդարութիւններ կ՚գտնենք նրա մէջ։ Դէ ի՛նչ անենք հիմա, որ այդ արդարութիւնը դառն արդարութիւն է։

Մեր կարծիքով՝ երեք — ընդհանուր — եզրակացութիւն կարելի է դուրս բերել Պիսարեւի ընդարձակ (մօտ 120 քառածալ երես)

---

1) *Д. И. Писаревъ*: «Сочиненія», СПБ., 1894 г., т. V.

յօդուածից. Պիսարեվը 1) հերքում է Պուշկինի պատմական նշանակութիւնը. 2) պնդում, թէ նրա պօէզիան անպէտք և անօգուտ մի բան է ժամանակակից սերունդի համար, որովհետև չի կարող պատասխանել նրա հանապազօրդ ամենատարրական պահանջներին. 3) ծաղրելով ծաղրում է նրանց, որոնք, Պուշկինին համամարդկային պօէտ ճանաչելով, տեղաւորում են նրան Եւրոպայի առաջնակարգ պօէտների հետ մի աստիճանի վրայ:

Զրնդունելով կրիտիկոսի առաջին կէտը՝ մենք երկու ձեռքով ստորագրվում ենք նրա միւս երկու կէտերի տակ:

Դեռ 1824 թուականին բանաստեղծ և քննադատ Վենեվիտինովը ծաղրում է Պօլէվօյին, որ, կարդալով «Евгеній Онѣгинъ»-ի առաջին գլուխը, Պուշկինին Բայրոնի հետ էր համեմատում: Ո՞վ է ասում,—կարդում ենք, 'ի միջի այլոց, այդ քննադատի մօտ,—թէ Պուշկինը զուրկ է տաղանդից. ո՞վ չի հրճուել նրա ստանաւորներից: Եւ, վերջապէս, ո՞վ կարող է հերքել, թէ նա տուել է մեր գրականութեանը մի քանի գեղեցիկ գրուածքներ: Բայց ախր ինչո՞ւ համեմատել նրան Բայրոնի հետ, որ ոչ միայն Անգլիային, այլ ամբողջ Եւրոպային պատկանելով, իր վառ հոգու մէջ պարունակել է ամբողջ մի դարի ձգտումներն ու յուզմունքները:

Անցան տասնեակ տարիներ, և 1865 թուականին Պիսարեվը համարեա նոյնպէս՝ միմիայն աւելի համարձակ և վստահ դրչով զինուրուած՝ ծաղրում է Բելինսկուն, որը նոյնպէս փորձել էր համեմատութիւններ մտցնել Շէքսպիրի, Գեօթէի, Բայրոնի, Շիլլերի և Պուշկինի գրականական գործունէութիւնների մէջ[1]): «Եւ իրաւ,——բացականչում է Պիսարեվը,—ի՞նչ բան է Պուշկինը և ի՞նչ այն մարդիկ, որոնց հետ Բելինսկին համեմատում է նրան: Դրանցից մէկը—խոր սրտագէտ է, միւսը—անվեհեր և խրոխտ տիտան, երրորդը—ներքին աշխարհի տէր և Օլիմպոսը, չորրորդը—մարդկութեան դրէ-քեան: Ինչպէս տեսնում էք՝ դրանք ամենքն էլ մեծ, անուանի մարդիկ են, գրականական տուղեր, և ամեն մի տուղը իր սեպհական ֆիզիօնօմիան ունի: Իսկ Պուշկինն ի՞նչ է: Պուշկինը գեղարուեստ է[2]): Այդ

---

1) *В. Г. Бѣлинскій*: «Сочиненія», СПБ., 1896 г. изд. Павленкова, т. III, стр. 469.

2) *Այսպէս էր յատկացնում Բէլինսկին Պուշկինի գրականական գործունէութիւնը:*

ինչ րէկօմէնդացիա է... Իսկ Շէքսպի՞րը—մի՞թէ գեղարուեստ չի, իսկ Բա՞յրընը, Գեօ՞թէն, Շի՞լլերը—չէ՞ որ դրանք էլ գեղարուեստներ են. բայց այդ—դրանցից ամեն մէկը, մի և նոյն ժամանակ, որոշ բնաւորութեան տէր և խելքի բոլորովին ինքնուրոյն ուղղութեամբ մարդ է։ Գեղարուեստական հմտութիւնը դրանցից ամեն մէկի համար միմիայն միջոց է պարզ և գրաւիչ ձևերով արտայայտելու այն, ինչ որ նրանց հերոսների, անձնաւորութիւնների ներքին միտքը, բովանդակութիւնն է կազմում, նրանց կեանքն ու զօրութիւնը»[1])։

Մենք կասենք աւելի. Պուշկինը ոչ թէ Շէքսպիրի, Գեօթէի, Բայրընի ընկերակիցը չի, այլ նա, առհասարակ, ոչ մի լուրջ նշանակութիւն չի կարող ունենալ օտարազգու մօտ։

Համամարդկային պօէտ լինելու համար մարդ պէտք է ներշնչուած լինի համամարդկային իդէալներով, այնպիսի իդէալներով, որոնք, ժամանակից առաջ ծնուելով, առաջ են տանում իրանց դարը դէպի լուսաւորութիւն, մտքի և հոգու բազմակողմանի զարգացում, դէպի գաղափարական բարին և գաղափարական գեղեցիկը։ Ի՞նչ համամարդկային իդէաներ է մեզ կտակել Պուշկինի մուսան, որոնք կարող են հետաքրքիր լինել հաւասարապէս և՛ գերմանացուն, և՛ ֆրանսիացուն, և՛ ռուսին, և՛ անգլիացուն։

Не дорого цѣню я громкія права,—
բացականչում է նա 1835 Թ.-ին[2]),—
Отъ коихъ не одна кружится голова.
Я не ропщу о томъ, что отказали боги
Мнѣ въ сладкой участи оспаривать налоги,
Или мѣшать царямъ другъ съ другомъ воевать;
И мало горя мнѣ—свободно-ли печать
Морочить олуховъ, иль чуткая цензура
Въ журнальныхъ замыслахъ стѣсняетъ балагура,—
Все это, видите-ль, слова, слова, слова!
Иныя, лучшія мнѣ дороги права,
Иная, лучшая потребна мнѣ свобода...
Зависѣть отъ властей, зависѣть отъ народа—

---

1) *Д. Писаревъ:* «Пушкинъ и Бѣлинскій», Сочиненія т. V, стр. 77.

2) *Իսկ վախճանուել է Պուշկինը, չմոռանանք,* 1837 *Թ.-ին։*

Не все ли намъ равно? Богъ съ ними!.. Никому
Отчета не давать; себѣ лишь самому
Служить и угождать; для власти, для ливреи
Не гнуть ни совѣсти, ни помысловъ, ни шеи;
По прихоти своей скитаться здѣсь и тамъ,
Дивясь божественнымъ природы красотамъ,
И предъ созданьями искусствъ и вдохновенья
Безмолвно утопать въ восторгахъ умиленья—
Вотъ счастье! вотъ права!..

Դրա՜նք են, տղերք, ռուս բանաստեղծի համամարդկային գաղափարները։

«Русская Библіотека»-ն հրատարակել է պ. Ս. Իւժակովի «Любовь и Счастье въ произведеніяхъ А. С. Пушкина» բրօշիւրան, որ քաղուածք է նոյն պարոնի «Любовь и счастье въ произведеніяхъ русской поэзіи» (տե՛ս «Сѣверный Вѣстникъ», 1887 г. №№ 2 և 4) յօդուածից։ Այդ բրօշիւրան համարեա ոչինչ չի պարունակում իր մէջ, բացի մի երկար շարք շողոքորթութիւններից Պուշկինի հասցէին։ «Պուշկինի պօէզիան ոչ այլ ինչ է, եթէ մարդկային և մարդասէր սիրոյ ճշմարիտ շկօլա»[1]),— այդ խօսքերի մէջ է ամփոփած բրօշիւրայի գլխաւոր և հիմնական միտքը։ Եւ գիտէ՞ք—ի՛նչ հիմունքների, փաստերի վրայ յենուելով է անում պ. Իւժակովը իր եզրակացութիւնը. «Кавказскій плѣнникъ», «Бахчисарайскій фонтанъ», «Цигане», et cetera, թոյլ, անհամ, համարեա երեխայական գրուածքների քննադատութեամբ պարապելն է բացում հրապարակախօս-կրիտիկոսի աչքերը։ Բրօշիւրայի խոշոր պակասութիւնը,—մի պակասութիւն, որից ամբողջ բրօշիւրան կորցնում է իր նշանակութիւնը,—այն է, որ հեղինակը՝ դեռ յօդուածը չսկսած՝ իր յօդուածի համար արդէն որոշ նախագիծ է կազմել և Պուշկինի գրուածքների այս և այն տողը, այս և այն քաղուածքը յարմարեցրել է իր նախագծին։

Հանճար լինելու համար հարկաւոր է այնպիսի բան ստեղծել, որ երբէք չհինանայ, որ միշտ կարողանայ ոգևորել և ազդել մեզ վրայ

[1]) *С. Южаковъ*: «Любовь и счастье въ произведеніяхъ А. С. Пушкина». Одесса. 1895 г., стр. 43.

այնպէս, ինչպէս, օրինակ, տիրում և ազդում են մեզ վրայ Շէքսպիրի դրամաները, Շիլլերի բանաստեղծութիւնները, Բայրընի պօէմաներն։—Ի՞նչ է տուել մեզ Պուշկին, որ, դարեր անցնելով, կարողանայ պահպանել իր կենդանութիւնը և ազդեցութիւնը։ Նրա chef d'oeuvre-ը «Евгеній Онѣгинъ» և «Борисъ Годуновъ» գրուածքներն են. միթէ դրա՞նք են համամարդկային գաղափարներով ներշնչուած՝ այն գրուածքներն, որոնք երբէք չեն հինանում ու չեն կորցնում իրանց կշիռը, արժէքը և ոյժը։

«Русланъ и Людмила»-ի, «Кавказскій плѣнникъ»-ի (և այլն) երգիչը արժանի է իր հայրենակիցների շնորհակալութեան,—ասում է Վինեվիտինովը,—որովհետև նա զարդարել է ռուս գրականութիւնը մի քանի գեղեցկութիւններով,—բայց ես չեմ տեսնում նրա շարադրութիւնների մէջ այնպիսի գրուածքներ, որոնք, ինչպէս Բայրընինները, կարող են պատիւ բերել իրանց դարին»։

Բանը նրանումն է, որ Եւրոպական գրականութեան հօսանքը չէր խանգարուիլ, այդ գրականութիւնը ոչինչ չէր կորցնիլ,—ինչպէս այժմ է, այնպէս էլ կ'լինէր,—եթէ, ասենք, Պուշկինը ամենևին չծնուէր։ Նրա չծնուելը, մենք ուզում ենք ասել, այդ գրականութեան զարգացման համար կանցնէր բոլորովին աննկատելի։ Մինչդեռ եթէ չծնուէր Շէքսպիր կամ Բայրըն, Գեօթէ և կամ Շիլլեր—եւրոպական գրականութիւնը անուրանալի հարուած կ'կրէր, և նրա ֆիզիօնօմիան այն չէր լինիլ, ինչ որ այժմ է։

Դրանք են այն պարզ դրութիւնները, որոնք երբէք թոյլ չեն տալ Պուշկինին՝ համամարդկային պօէտի,—ի՞նչ պօէտ—հանճարի,—անուն վայելելու նպատակով՝ մրցել Դանտէի, Շէքսպիրի, Միլտօնի, Բայրընի, Գեօթէի, և այլ հանճարների հետ։

Հենց ինչպէս [illegible] բանաստեղծ էլ Պուշկինը այժմ այլ ևս չունի այն կենդանի նշանակութիւնը, որի մասին գոռում են մի քանիսներն։ Աւելի քան երեւոյթ է կրթել ժամանակակից սերունդը, ժամանակակից երիտասարդութիւնը Պուշկինի գրուածքների վրայ։ «Պուշկինի պօէզիան,—կարդում ենք պ. Ա. Սկաբիչեվսկու մօտ,—չի կարող ուղղակի կրթողական ազդեցութիւն ունենալ մեր սերունդի վրայ»[1])։—Շատ տարիներ առաջ՝ Բէլինսկի՛ն բոլորովին

1) *А. Скабичевскій*: «Сочиненія», СПБ., 1890 г., т. I, стр. 208.

հակառակն էր քարոզում։ «Ոչ ոք ռուս բանաստեղծներից,—ասում էր նա,—այնքան խրատունք չունի կրթելու երիտասարդ, հասակ առած, անգամ ծեր մարդկանց, ինչպէս Պուշկին»[1]). «կարդալով նրա գրուածքները՝ մենք կրթում ենք մեր մէջ մարդ սէրը»[2])։ Թէպէտև նոյն Բելինսկին՝ հէնց նոյն իսկ յօդուածում՝ մի և նոյն ժամանակ ընդունում էր, թէ «Պուշկինը պատկանում է գեղարուեստի այն շրջանին, որի ժամանակը արդէն անցել, վերացել է Եւրոպայից, և որն՝ անգամ մեր մէջ՝ այլ ևս չի կարող առաջ բերել ոչ մի մեծ պօէտ»[3])։

Գրականութիւնը իր ժամանակի, իր հասարակութեան հայելին է. որքան բարձր է կանգնած վերջինը իր մտաւոր, բարոյական զարգացմամբ, այնքան էլ բարձր, հետաքրքիր կ'լինեն գրականութեան պտուղները։ Գրականութիւնը ցոլացնում է իր մէջ այն ժողովրդի և կամ այն առանձին հասարակութիւնների հոգևոր կեանքը, որից կազմուել, գոյացել է ինքն։ Բանաստեղծը, գեղարուեստն ոչ այլ ինչ է, եթէ այն անհատների թարգմանը, բացատրողը, որոնք շրջապատում են նրան.

Мы только голосъ твой,—*ասում է ռուս երիտասարդ բանաստեղծը իր ժողովրդին,—*

и если ты больна,
И наша пѣснь больна!.. Въ ней вопль твоихъ страданій,
Видѣнья твоего болѣзненнаго сна,
Кровь тяжкихъ ранъ твоихъ, тоска твоихъ желаній...[4])

և ահա ինչու «որքան ուժեղ է գեղարուեստի խելքն, որքան աւելի կենդրոնացած նրա կամքն, այնքան էլ նշանաւոր կ'լինի նրա ստեղծագործութեան արդասիքը»[5]), որովհետև այն ժամանակ նա աւելի գիտակցօրէն, բազմակողմանի կ'վերաբերուի դէպի այն հասարակական հարցերն ու երևոյթները, որոնք ծառայում են և կամ ծառայելու են նրան իբրև նիւթ, աւելի խորը կըմբռնի նրանց իմաստը։

---

1) *Бѣлинскій*: id., стр. 492. 2) ibid., 490. 3) ibid., 494.
4) *С. Я. Надсонъ*: «Стихотворенія», изд. 13-е, стр. 29²/₃.
5) *В. Гольцевъ*: «О прекрасномъ въ искусствѣ», «Рус. Мыс.», 1889 г., IX, стр. 69.

Մեր ժամանակը գործնական ժամանակ է. նա անտես է առնում այն ամենն, ինչ որ աչքի առաջ չունի ռէալական կեանքը, իրականութիւնը, ինչ որ խուսափում է «օրուայ հարցեր»-ից: Նա աւելորդ պարապմունք է համարում այն պարապմունքը, որ չի տալիս շօշափելի օգուտ: Նա ատելով ատում է այն պօէզիան, որ աննպատակ նկարագրում է

И въ полѣ каждую былинку,
И въ небѣ каждую звѣзду...

«Գեղարուեստը գեղարուեստի համար» թէօրիայի դրօշակը մօտ ապագայում խորտակուելու է մոռացութեան անդունդը: Իսկ այդ կ՛լինի այն ժամանակ, երբ մարդիկ կատարելապէս կ՛հասկանան, թէ գրականութեան կոչումը ոչ թէ «աչքախուփ» խաղալն է, այլ թէ նա բարոյական պարտաւորութիւններ ունի կատարելու այն հասարակութիւնների հոգեւոր զարգացման ընթացքում, որոնց ծառայում է ինքն:

Поэзія теперь—поэзія скорбей,
Поэзія борьбы, и мысли, и свободы;
Поэзія въ стѣнахъ кипучихъ городовъ,
Поэзія въ трудѣ за лампою ночною...[1])

Պուշկինը այն բանաստեղծներից է, որոնք՝ առանց հաշիւ տալու՝ կրկնում են «գեղարուեստը գեղարուեստի համար». իր գրուածքների ճնշող մեծամասնութիւնը նա գրել է անձնական հաճոյքի համար: Դա փաստ է, որի վրայ մատնացոյց է անում ինքը բանաստեղծը: Նրա իդէալն էր, ինչպէս ինքն է ասում,

Никому отчета не давать,
Себѣ лишь самому служить и угождать...

Նա միշտ մենակութիւն է փափագել, կեանքից, հասարակութիւնից կտրուած, հեռացած:

Душевныхъ нашихъ мукъ
Не стоитъ міръ; оставимъ заблужденья!
Сокроемъ жизнь подъ сѣнь уединенья!..

---

1) *С. Надсонъ*: id., стр. 226.

հասարակութիւն ասած բանը նա ամենևին չի ընդունում։

Подите прочь—какое дѣло
Поэту мирному до васъ,—

բարկացած նա դիմում է դէպի հասարակութիւնը։ Այդ հասարակութիւնը նա անուանում է «народъ непросвѣщенный», «тупая чернь», «безсмысленный народъ, поденщикъ, рабъ нужды, заботъ», «червь земли, не сынъ небесъ»... Եւ երբ այդ հասարակութիւնը, այդ «ամբոխը», ոչինչ օգուտ չտեսնելով «ծառեր ու անտառներ գովաբանող» նրա գեղեցիկ երգերից, պարզ հարցնում է թէ՝

Зачѣмъ такъ звучно онъ поетъ?..
Къ какой онъ цѣли насъ ведетъ?..
Чему насъ учитъ?..
Какая польза намъ отъ ней?

Բանաստեղծը, «երկնքի որդին», պատասխանում է՝

Въ развратѣ каменѣйте смѣло...
Для вашей глупости и злобы
Имѣли вы до сей поры
Бичи, темницы, топоры...

«Երևելի պօէտներն,—ասում է պ. Իվ. Իվանովը,—շատ անպատուութիւններ են կրել իրանց ընթերցողներից, և շատ անգամ ակամայ արդարացնում ես նրանց, երբ որ նրանք, ատելութիւն, նախատինք թափելով «ամբոխի» գլխին, ցնորում են առանձնանալ և իրանց սեպհական ստեղծագործութեամբ ու սեպհական կրիտիկայով ապրել։ Ի՞նչ հիացումով, օրինակ, հասարակութիւնը ողջունում էր Պուշկինի ռոմանտիկական հնարուածքները։ Առասպելական պատմութիւններ քաջերի, ասպետների, օտար բնութեան դիւթիչ գեղեցկութիւնների, կրքերի բացառիկ բղխման մասին, — այդ ամենը բանաստեղծին մեծ անուն է տուել և նրան ընդհանուրի սիրելին դարձրել։ Բայց հէնց բանաստեղծը դարձաւ դէպ' իր հարազատ, հասարակ իրականութիւնը և հետաքրքրուեց միջակ մարդով և օրուայ մանրունքներով,—նրա վրայ ամեն կողմից թափեցին՝ քերթողի պատիւը խայթող՝ անթիւ նետեր.—ասում

էին, թէ նրա տաղանդի ոյժը ընկել է, նրան խորհուրդ էին տալիս ձեռք վերցնել պօէտիկական գործունէութիւնից,—և դա այն ժամանակ, երբ այդ գործունէութիւնը պատրաստվում էր բացառապէս իրական գործունէութեանը նուիրելու իրան, երբ ճշմարիտ Պուշկինը իսկապէս դեռ նոր էր ծնվում»[1])։

Դրանով պ. Իվանովը ուզում է արդարացնել Պուշկինի վարմունքը դէպի ընթերցող հասարակութիւնը, դէպի «ամբոխը», ինչպէս ինքը Պուշկինն է ասում։ Անշուշտ, իր երկրպագութիւնը ռուս առաջին բանաստեղծին պ. Իվանովը ծայրահեղութեան է հասցրել։ Ամէն մի արդարացում այդ հարցի մէջ, մեր կարծիքով, անտեղի է և աւելորդ ջանք, քանի որ Պուշկինի վարմունքն ոչ թէ պատահական վարմունք է, այլ խորը համոզմունքի հետևանք։ Դրան ապացոյց նոյն իսկ Պուշկինի շարադրութիւնները։ Մենք երկար քրքրել ենք Պուշկինի գրուածքներն և մի քանի տող ենք միայն գտել, որտեղ նա ասում է, իբր թէ յարգում է ընթերցողի կարծիքը։ Առաջ ենք բերում միմիայն հետևեալ նախադասութիւնը. «Ատել կրիտիկան,—ասում է նա իր [illegible] նկատողութիւններից մէկի մէջ,—մի և նոյն է եթէ ատել հասարակութիւնը, իսկ դրանից Աստուած ինձ հեռու պահի»[2])։ Բայց ինչ նշանակութիւն մեզ համար կարող է ունենալ այդ նախադասութիւնը, քանի որ հէնց նոյն թուականին, երբ այդ տողերն են գրուած (1830 թ.), Պուշկինը ստեղծել է իր «Поэту» սօնէտը, որտեղ այդ համարձակ և այլանդակ խորհուրդներն է տալիս պօէտին.

Поэтъ, не дорожи любовью народной!..
Услышишь судъ глупца и смѣхъ толпы холодной;
Но ты останься твердъ, спокоенъ и угрюмъ.
Ты—царь: живи одинъ...
Ты самъ—свой высшій судъ
Всѣхъ строже оцѣнить умѣешь ты свой трудъ.

Բացի այդ—պ. Իվանովի նկատողութեան մէջ մի փոքրական սխալ էլ կայ։ Նա, ինչպէս տեսանք, ասում է, թէ Պուշկինը այն

---

1) *Ив. Ивановъ*: «О будущности художественнаго творчества». «Артистъ», 1983 г.,—ноябрь, 138—139.

2) *А. Пушкинъ*: «Сочиненія». изд. Анскаго, т. V, стр. 118 («Критич. замѣтки»).

պատճառով էր ատում հասարակութիւնը, նրան «ամբոխ» անուանելով, որովհետև վերջինը չէր հասկանում, հալածում էր նրա՝ ռէալական կեանքից վերցրած՝ գրուածքներն: Այդ ինչ գրուածքների մասին է խօսում յարգելի կրիտիկոսը: Մենք գիտենք, որ այն՝ հարազատ, հասարակ իրականութիւնից վերցրած, միջակ մարդուն և օրուայ մանրունքներին նուիրած՝ գրուածքներն, որոնց վրայ մատնացոյց է անում ինքը պ. Իվանովը, վերաբերում են երեսնական թուականներին, իսկ նրա գլխաւոր վէպիկները (խօսքս պատմական վէպի մասին չի)—«Дубровскій»-ն 1832 թ.-ին է վերաբերում, «Пиковая дама» 1834 թ.-ին, և «Евгеній Онѣгинъ» աւարտած է 1831 թ.-ին. միմիայն «Повѣсти Бѣлкина» վէպիկներն են 1830 թ.-ին գրած.—մինչդեռ Պուշկինի «Чернь» ոտանաւորը, մի ոտանաւոր, որի մէջ, ինչպէս Բելինսկին է ասել[1]), Պուշկինի գեղարուեստական profession de foi-ն է պարունակուած,—այդ ոտանաւորը, ասում ենք, վերաբերում է 1828 թուականին: Ուրեմն իրականութիւնից վերցրած վէպիկներն ո̄ւր, այդ ոտանաւորը ո̄ւր...

Ոչ և կրկին ոչ. Պուշկինը մեր ժամանակից շատ է ետ մնացել, — ուրեմն և չի կարող ժամանակակից սերնդի դաստիարակը լինել: Նա ոչինչ մտաւոր և հոգևոր սնունդ չի կարող տալ իր ընթերցողներին, որովհետև ինքն էլ համարեա ոչինչ չունէր: Զուրկ լուրջ կրթութիւնից, զուրկ խոր զարգացումից—նա ոչ այլ ինչ էր, եթէ рѣзвый любимецъ музъ и грацій[2]), ինչպէս ուղիղ անուանում է նրան Պիսարեվը: Ոչ լուրջ գաղափարներ ունէր, ոչ որոշ հայեացք կեանքի այս և այն երևոյթի վրայ: «Պուշկինը,—ասել է «Эстетическія отношенія къ дѣйствительности» դիսերտացիայի հեղինակը,—ոչ այն բանաստեղծների շարքին է պատկանում, որոնք ունեն որոշ հայեացքներ կեանքի երևոյթների վերաբերմամբ, ինչպէս օրինակ, Բայրոնը, ոչ էլ մտքի բանաստեղծ է, ինչպէս Գեօթէ և Շիլլեր: «Ֆաուստ»-ի, «Վալենշտէյն»-ի, Չայլդ-Հարոլդ»-ի գեղարուեստական ձևը ծնուել է իր մէջ ամփոփելու խոր հայեացք և կարծիքներ կեանքի մասին: Իսկ Պուշկինի գրուածքներում ոչինչ այդպիսի բան չենք գտնիլ. Նրա գեղարուեստականու-

---

1) *Бѣлинскій*: id., стр. 494. 2) *Писаревъ*: id., т. V, стр. 54.

թիւնը, գեղարուեստական ձևը պտուղի և հատիկն է կազմում և շապիկը[1])»: Պուշկինը ապրում էր զուարճանալու համար, զուարճանում էր ապրելու համար:

Давайте пить и веселиться,
Давайте жизнію играть;
Пусть чернь слѣпая суетится:
Не намъ безумной подражать.
Пусть наша вѣтренная младость
Потонетъ въ нѣгѣ и въ винѣ;
Пусть измѣняющая радость
Намъ улыбнется хоть во снѣ.
Когда же юность легкимъ дымомъ
Умчитъ веселость юныхъ дней,
Тогда у старости отымемъ
Все, что отымется у ней.

Բայց կարելի է Պուշկինը ժամանակակից սերնդի համար կարող է կրթողական նշանակութիւն ունենալ իբրև պատմական դէպք, այսինքն՝ իւրան պատմութեանը նուիրող, պատմական անձնաւորութիւններով, դէպքերով զբաղուող պօէտ:

Պ. պրոֆեսոր Կլիւչեվսկի'ն՝ Պուշկինի արձանի բացման հանդիսի ժամանակ՝ Պուշկինին նուիրած իր ճառի մէջ մեծ նշանակութիւն է տալիս պատմութիւնից վերցրած նրա պօէտիկական պատկերներին: Այդ պատկերները, նրա ասելով, պարզում են պատմական զանազան ակտեր և մթնուարներ, անպայման լրացնում նրանց[2]): Պ. պրոֆեսորը, անշուշտ, հանդիսի ոգին ենթարկուելով է այդպէս խօսել: Առհասարակ պէտք է ասել, որ բոլոր ճառերն, որոնք ասուել են Պուշկինի տօնախմբութեանը՝ զանազան գրականական և հասարակական երևոյթներին, շատ զգալի կերպով կրում են իրանց վրայ հանդիսի ոգու կնիքը... Բոլորովին ուրիշ պէս էր նայում այդ բանին Չերնիշևսկի'ն, որի վրայ մենք մի անգամ արդէն մատնացոյց արել ենք: Եւ մեր կարծիքով—նրա հայեացքը աւելի ուղիղն է և հաւանական: Պուշկինը,—ասում է այդ պուբլիցիստը,—մեծ

1) *Чернышевскій*: «Критическія статьи». СПБ., 1895 г., стр. 63.
2) Торжество открытія памятника А. С. Пушкину. М. 1880 г., стр. 29.

փափագ, ցանկութիւն ունէր ռուս պատմական բանաստեղծ լինելու: «Борисъ Годуновъ», «Полтава», «Мѣдный всадникъ», «Арапъ Петра Великаго» և մասամբ «Капитанская дочка» գրուածքները «ստեղծուել են ոչ թէ միայն գեղարուեստական պահանջից դրդուած, այլ և ուզենալով արտայայտել իր սեփական որոշ հայեացքը ռուս պատմութեան երևոյթների վրայ: Բայց այստեղ էլ Պուշկինը իրան հաւատարիմ է մնացել. նա ոչինչ նոր, ինքնուրոյն բան չի ասել, այնպիսի բան, որը նրա սեփականութիւնը լինէր. նրա հայեացքը պատմական բնաւորութիւնների և երևոյթների վերաբերմամբ ոչ այլ ինչ է, եթէ ընդհանուր հասկացողութիւնների անդրադարձում: Կարլը—անզգոյշ, չմտածող հերոս է. Մազեպա՛ն—նենգամիտ դաւաճան,—ուրիշ ոչինչ չի ասուած դրանց մասին «Полтава» պօէմայի մէջ: «Борисъ Годуновъ»-ը Կարամզինի բնաւորութիւնների և հայեացքների կրկնութիւնն է»[1]):

Ուրեմն՝ ինչո՞ւմն է Պուշկինի արժանաւորութիւնը. որտեղի՞ց է բղխում այն ոյժը, որ իր զօրեղ հոսանքին ենթարկել է մի ամբողջ ազգ:—Պուշկինի պատմական նշանակութիւնը անուրանալի է, և դրանում էլ հէնց պէտք է տեսնել նրա գլխաւոր ու միակ արժանաւորութիւնը: Բայց և այդ պատմական նշանակութիւնն էլ այնպէս մեծ չի, ինչպէս դնում են շատերը: Նա հասարակութեան մէջ սէր է ցանել դէպի գրականութիւնը, յարգանք դէպի գրականական խօսքը, կասենք աւելի՝ նա ստիպել է այդ հասարակութիւնը պարապել, հետաքրքրուել գրականութիւնով: Մինչև Պուշկին գրական խօսքը անպատուութիւն էր համարվում. դրանով անպատվում էին, դրանով հայհոյում: Ճիշտ է—Պուշկինն էլ երկար տարիներ խուսափում էր գրականի անունը կրելուց. նրա համար ծանր անպատուութիւն էր լսել հասարակութեան մէջ այս և այն երկրպագուի բերանից «բանաստեղծ Պուշկին» խօսքերը: Իր կեանքի միմիայն վերջին տարիներն արդէն, ոչինչից չամաչելով և չվախենալով, ամէն տեղ՝ լինի դա հասարակական երեկոյթներին, մասնաւոր ընտանիքներում—մի և նոյն է՝ նա համարձակ վկայում էր իր պօէտ լինելը[2]):

---

1) *Чернышевскiй:* id., стр. 6³/₄. 2) *П. В. Анненковъ:* «А. С. Пушкинъ. Матеріалы для его біографіи и оцѣнки произведеній».

Պուշկինից յետոյ գրականը պարծենում էր իր կոչումով: Այդ—մէկ: Մէկ էլ՝ Պուշկինը մշակել է ռուս գրականական լեզուն. ոտանաւորի նրբութիւնը, քնքշութիւնը նա հասցրել է կատարելագործման գագաթնակէտին: Այն գողտրիկ, հիանալի ոճը, որ Պուշկինի ոտանաւորն է փայլեցնում, հիմա էլ զարմացնում է էսթէտիկներին [1]:

Դրանից մէջ պէտք է որոնել Պուշկինի գործունէութեան գլխաւոր և համարեա միակ արժանաւորութիւնը: Ասում ենք «համարեա միակ», որովհետև նա մի քանի մանր-մունր երկրորդական ծառայութիւններ էլ է արել իր հարազատ գրականութեանը:

Ասում են, օրինակ, թէ Պուշկինը՝ մարգարէի պէս՝ միանգամից աշխարհ է եկել և նոր գրականութիւն, նոր լեզու ստեղծել: Այսինքն, դրանով ուզում են ասել, թէ նրա գործունէութիւնը կապ չունի նախորդ գրականների գործունէութեան հետ: Դա, 'ի հարկէ, աբսուրդ է, և այդ կապը ռէլեֆ կերպով կ'պարզուի մեզ, եթէ մենք ուշի ուշով քննենք թէ մէկի և թէ միւսների գործունէութիւնը: Այդ քննութեամբ մենք այստեղ չենք պարապիլ—դա մեզ շատ հեռու կ'տանէր և այնքան էլ օգտաւէտ բան չէր լինիլ մեր ընթերցողին,—այլ կ'բաւականանք միմիայն Բէլինսկի'ի աջող համեմատութիւնը առաջ բերելով: «Պուշկինը կոչուած էր Ռուսաստանի առաջին պօէտ-գեղարուեստը լինելու, տալու. նրան ստեղծագործութիւնը ինչպէս գեղարուեստականութիւն, բայց ոչ միայն ինչպէս զգացմունքների լեզու: 'Ի հարկէ, նա մենակ չէր կարող լուծել այդ խնդիրը» [2]: Դրան մասնակցել են և Պուշկինին նախորդող պօէտները: «Այդ բոլոր պօէտները վերաբերում են Պուշկինին, ինչպէս փոքրիկ և մեծ գետերը—ծովին, որը նրանց իսկ ջրով է լիքն: Պուշկինի պօէզիան հէնց այդ ծովն էր» [3]:

Ասում են, ռուս ռէալական վէպի հիմքը Պուշկինն է դրել.——դա, ի հարկէ, մասամբ ճիշտ է: Բայց ցաւը նրանումն է, որ շատերն էլ ուզում են հաւատացնել, թէ Պուշկինից են ծնել և՛ Գո-

---

1) Бѣлинскій-ն ասում է՝ «Если бы мы хотѣли охарактеризовать стихъ Пушкина однимъ словомъ, мы сказали бы, что это по превосходству поэтическій, художественный, артистическій стихъ,—и въ этомъ разгадали бы тайну паѳоса всей поэзіи Пушкина (id., стр. 469). 2) *Бѣлинскій*: id., стр. 466. 3) id., 467.

գոլ, և՛ Տուրգենեվ, և՛ Լև Տոլստոյ, և՛ Դոստոեվսկի...[1]): Դա 'ի հարկէ, սխալ է,—և այդ մենք կ'բացատրենք թէ ինչու:

«Առանց Պուշկինի չէր կարող առաջ գնալ և Գոգոլ»,—ասել է Պուշկինի արձանի բացման հանդեսին պ. Տիխոնրավովը (համալսարանի րէկտոր): Մի և նոյնը համարեա ասել է շատ տարիներ յետոյ պ. Բոբորիկինը իր «Судьбы русскаго романа» հասարակական դասախօսութեան մէջ: Առանց Պուշկինի, — կարդում ենք պ. Բոբորիկինի մօտ,—գոյութիւն չէր ունենալ ոչ միայն Գոգոլ, այլ և առհասարակ ռուս ռոմանը:

Ռուս հասարակութեան գիտակցութիւնը վերջին տարիներս զգալի կերպով զարգացել է. Նա այժմ աւելի քննադատօրէն է վերաբերվում դէպի այն, ինչ որ ստանում է իր մտքի մշակներից: Այդ հասարակութիւնը սկսել է կամաց կամաց հասկանալ Պուշկինի ով լինելը.—և անշուշտ, կ'գայ ժամանակ, երբ Պուշկինը կ'դասաւորուի հասարակ մահկանացուների շարքին: Դրանով էլ հէնց կարելի է բացատրել այն, որ Բոբորիկինի գաղափարին՝ ծափահարելու փոխարէն՝ շուացրեց հասարակութիւնը: Եւ հասարակութիւնը չսխալուեց.—օրուայ հերոսին նա վարձատրեց ըստ արժանւոյն:

Մենք չենք հասկանում—ի՛նչ իրաւունքով են այդ պարոնները այդպէս խօսում: Ի՞նչ կապ կայ Պուշկինի գրականական գործունէութեան և, օրինակ, Տուրգենեվի, Դոստոեվսկու, Լև Տոլստոյի և կամ նոյն իսկ Գոգոլի վէպերի ու վէպիկների մէջ: Հա, ընթերցող, ես շտապեցի,—ինչպէս թէ ի՛նչ.—մեծ կապ կայ, մեծ. նրանք ամենքն էլ ռուսերէն են գրել.—այդ մէկ. մէկ էլ՝ Պուշկինը իրականութիւնից վերցրած մի քանի բաներ է գրել, Գոգոլ, Տուրգենեվ, Տոլստոյ, Դօստոեվսկի՛ն էլ իրականութիւնից էին խօսում: Ծիծաղելի է, ծիծաղելի. կարծես գրականին կեանքն ու հասարակութիւնը չի ծնում, այլ պօէտ Թաթոսը և կամ քննադատ Մարկոսը: Մենք հաւատացած ենք, որ ռուս ռէալական ռոմանը—մի և նոյն է—կ'ծագէր, եթէ Պուշկինն իսկի չծնէր էլ. միմիայն, նաչէլէ է, այն զանազանութեամբ, որ նրա լեզուն այնպէս ողորկ, ճկուն չէր լինիլ,

[1]) *Н. Шелгуновъ*: «Очерки русской жизни», XIV.

ինչպէս այժմ, թէպէտև այդ էլ կասկածելի է, որովհետև, ինչ լեզուի մշակման է վերաբերում, Տուրգենևը Պուշկինից պակաս բան չի արել։—Ռուս կրիտիկոսներից մի քանիսները սովորութիւն ունեն անդադար կրկնելու. թէ Գոգոլը ինքն էր ասում, որ ամեն բանով Պուշկինին է պարտական, թէ Տուրգենևն էլ Պուշկինին իրան ուսուցիչ էր ճանաչում[1]), *և այլն... Դէ լաւ, ինչ անենք, որ ասում էին։ Շատ կարելի է, Տուրգենևը փոքրիկ ժամանակը հիանում էր Պուշկինի գրուածքներով, ուրախութեամբ անգիր անում, շատ կարելի է—նմանում էլ էր նրանց,— բայց մի՞թէ, եթէ* «Отцы и дѣти» *ռոմանի հեղինակը չճանաչէր Պուշկինին, չէր կարող ռոմանիստ լինել։ Շատ կարելի է—Գոգոլը մեծ ուշադրութեամբ լսում էր Պուշկինի խորհուրդները, հետևում նրանց, կարելի է հէնց* «Мертвыя души» *վէպի իդէան նա Պուշկինից է ստացել,—բայց միթէ Գոգոլը՝ առանց Պուշկինի՝ չէ՞ր լինիլ ռոմանիստ։ Կեանքն ու անձնական յատկութիւններն են ռոմանիստ ստեղծել և՛ Գոգոլին, և՛ Տուրգենևին, բայց ոչ թէ Պուշկինը։ «Նոր գրականութիւնը հիմնել է ոչ Պուշկինը, այլ Գոգոլ։ Պուշկինից ծնել են մեր «սիրելի» լիրիկները, իսկ Գոգոլի ազդեցութեան ներքոյ առաջ են եկել Տուրգենև, Պիսեմսկի, Նեկրասով, Օստրովսկի, Դոստոեվսկի. բացի այդ՝ Գոգոլի գրուածքները նպաստել են և մեր ռէալական կրիտիկայի զարգանալուն»*[2])*։ Այդ բոլորից յետոյ էլ պարզ է, անշուշտ, այն սխալը, որի մէջ Ապ. Գրիգորիեւն է ընկել, ասելով, թէ «ոչ միայն գեղարուեստական, այլ և մեր հասարակական և բարոյական բոլոր համակրութիւնների աշխարհումն էլ Պուշկինն է մեր ֆիզիօնոմիայի առաջին և բազմակողմանի ներկայացուցիչը»*[3])*։*

Թափառելով զանազան ուղղութիւնների անտառներում, զուրկ որոշ ապաստանից, որոշ ուղղութիւնից՝ Պուշկինը մի ժամանակ Անակրէօնի գրուածքներով է յափշտակվում, յետոյ Բայրընը, Շենիե՛ն են գրաւում նրա ուշադրութիւնը։ Նա կարդում է դրանց գրուածքները, թարգմանում, նմանում նրանց, և այլն։ Դեռ լաւ չհասկանալով մէկի և թէ միւսի ստեղծագործութեան էութիւնը,—

---

1) *Տես, ի միջի այլոց, պ. Իվանովի յիշած յօդուածը։*

2) *Писаревъ*: т. V, стр. 114.

3) *А. Григорьевъ*: «Сочнненія», т. I, стр. 240.

—նամանաւանդ Բայրընինը—նա գրեթէ ամենևին չհասկացաւ,—նա թողնում է նրանց և Կարամզինի ու պատմական զանազան մեմուարների ու ակտերի վրայ է ուզում կենդրոնացնել իր ուշադրութիւնը. այդ իսկ ժամանակ էլ նա ուսումնասիրում է (գոնէ ինքը բանաստեղծը այդպէս էր ասում) Շէքսպիրի գրուածքներն.—այդ պարապմունքների հետևանքն էլ «Борисъ Годуновъ» դրաման եղաւ ու մի քանի անգոյն վէպիկներ և բանաստեղծութիւններ: Բայց այդտեղ էլ նա չի կարողանում բաւականութիւն գտնել. նա դառնում է դէպ' իր մայրենի կեանքի իրականութիւնը և դրան է ուզում նուիրել իր ոյժերն: «Евгеній Онѣгинъ» վէպի հատուածներից մէկի մէջ նա ասում է թէ այժմ

Иныя нужны мнѣ картины:
Люблю песчанный косогоръ,
Передъ избушкой двѣ рябины,
Калитку, сломанный заборъ...
Теперь мила мнѣ балалайка
Да пьяный топотъ трепака
Передъ порогомъ кабака...

Մեզ համար կարևորն է ոչ թէ косогоръ, калитка, балалайка, кабакъ խօսքերն, այլ բանաստեղծի բարի ցանկութիւնը պօէտիկական ստեղծագործութիւնը ձուլելու հարազատ իրականութեան հետ, չփոխադրելու զանազան դէմօններին, Չայլդ-Հարօլդներին ռուս հողի վրայ, այլ բաւականանալու հէզ պրօզայով և ռուս կեանքի խայտաբղէտ աղէօվ[1]):—Բայց այդ ասպարէզում էլ Պուշկինը շատ բան չի արել. նա գրել է մի քանի մանր վէպիկներ և պատկերներ և «Евгеній Онѣгинъ» վէպը, թէպէտև վերջինի առաջին գլուխները շատ որոշ կերպով կրում են իրանց վրայ Բայրընի ազդեցութիւնը:—1837 թուականին մահը վերջ է դնում նրա ապրելուն և գործելուն:

Մեր յօդուածի սկզբին մենք առաջ բերեցինք Դրուժինինի խօսքերն, որտեղ այդ պարոնը ասում է, թէ «վաղահաս մահը արգելեց Պուշկինին Շէքսպիրի, Դանտէի, Միլտոնի հետ մի աստիճանի

---

1) *Ив. Ивановъ*: id., стр. 140.

վրայ կանգնելու»։ Մենակ Դրուժինինը չի, — շատերն են այդպէս կարծում։ Օրինակ, Վ. Նիկօլսկի'ն պնդում է՝ թէ որ մահը վրայ չհասնէր, Պուշկինը շատ առաջ կ'գնար, առաջադիմական մեծ քայլեր կանէր[1]): Մենք կարծում ենք, որ Պուշկինը ոչ շատ առաջ կարող էր գնալ, ոչ էլ հաւասարուել Շէքսպիրին և կամ Դանտէին։ Եւ այդպէս կարծելուն լուրջ պատճառներ ունենք։ Թէ ինչու Պուշկինը Շէքսպիրի, Դանտէի «թայը չի», այդ մասին մենք արդէն խօսել ենք[2]),—այժմ մի քանի խօսք էլ կասենք պարզելու, թէ ինչու Պուշկինը, առհասարակ, շատ առաջ գնալ էլ չէր կարող։

Առաջադիմելու համար մարդ պէտք է լուրջ օրեր անց կացնի, գլուխ կոտրի այն բանի վրայ, ինչում ուզում է առաջադիմել,—իսկ դրա համար անհրաժեշտ է նախապատրաստութիւն։ Այդ նախապատրաստութիւնից զուրկ էր Պուշկինը։ Նա ոչ լուրջ ուսում էր ստացել, ոչ էլ լուրջ կրթութիւն[3])։ Դրան ապացոյց պօէտի նոյն իսկ կեանքը։ Նայելով այդ անմիտ, երբեմն էլ անպատեհ ալէկոծութիւններով լի կեանքին՝ ով կասէր, որ Պուշկինը կրթուած, ուսում առած մարդ էր։ Իր երիտասարդութիւնը նա անց է կացրել համարեա անբարոյական ընկերների շրջաններում. գինին, խաղաթուղթը, «սիրուն սեռը» նրան անդադար քաշում էին դէպի անկման անդունդը. նա ենթարկուել էր կեանքի կեղտոտ ձգտումներին։ Չկար նրա համար ուրիշ սրբութիւն քան

Никому
Отчета не давать,—себѣ лишь самому
Служить и угождать...

կեանքը նրա համար ուրիշ նշանակութիւն չունէր, բայց եթէ пить, веселиться, жизнію играть... Եւ այդ բոլորը անուրանալի կործանիչ ազդեցութիւն ունէր բանաստեղծի վրայ։ Նրա՝ համարեա երկաթէ՝ էներգիայի մեծ մասը մսխւում էր զանազան չարութիւնների վրայ։ Բնութիւնից Պուշկինը առատ պարգև էր ստացել՝ և՛ տաղանդ, և՛ գրելու շնորհք, և՛ երկաթէ էներգիա,—բայց նա չկարողացաւ օգտուել այդ ամենից։ Նա չհասկացաւ իր կոչման մեծ

---

1) *Вл. Никольскій*: «Идеалы Пушкина», СПБ., 1887 г., стр. 54.

2) *Տես մեր յօդուածը, էջ* 76—79։ 3) *Добролюбовъ*: id., т. I, стр. 428.

նշանակութիւնը. փոխանակ լցնելու իր նուազ ուսումը ինքնակրթութեամբ՝ իր բոլոր ույժերը հայրենիքին ծառայեցնելու նպատակով, նա երկար տարիներ անօգուտ, եթէ ուզում էք, մասամբ էլ փառակար, կեանք վարեց:

И я въ законъ себѣ вмѣняя
Страстей единый произволъ,
Съ толпою чувства раздѣляя,
Я музу рѣзвую привелъ
На шумъ пировъ и буйныхъ споровъ,
Грозы полуночныхъ дозоровъ;
И къ нимъ въ безумные пиры
Она несла свои дары,
И какъ вакханочка рѣзвилась,
За чашей пѣла для гостей,
И молодежь минувшихъ дней
За нею буйно волочилась,
А я гордился межъ друзей
Подругой вѣтренной моей.

Ճիշտ է, իր կեանքի վերջին տարիները նա սկսում է հասկանալ իր նիստուկացի անմտութիւնը, ուզում է մի օգտաւէտ բանով քաւել իր մեղքերն: Այդ պատճառով նա մտածում է մի թերթ հրատարակել, որի պրոգրամն կազմած էր շատ բազմակողմանի և հետաքրքրական: Հասարակութեան պիտոյքներին ծառայելու ցանկութիւն,—այդ էր ծրագրից դուրս բերած ընդհանուր տպաւորութիւնը: Անգամ «գրականութիւն» բաժինը հարուստ չէր բէլետրիստիկայով: «Лучшія статьи изъ журналовъ», «Критика иностранныхъ книгъ», «Историч. матеріалы», «Текучая литература», «Feuilleton», «Théatre», «Библіографія»,—դրանք էին այդ բաժնի մասերը: Ներկայացնելով իր ծրագիրը թագաւոր կայսրին՝ նա, 'ի միջի այլոց, ասում էր՝ «եթէ թագաւոր կայսրին հարկաւոր լինի գրիչս գործ դնելու քաղաքական յօդուածներ գրելու վրայ, ես կաշխատեմ ամենայն ճշտութեամբ և մեծ ջանքով կատարել Նորին Մեծութեան կամքը»[1])... Մի և նոյն պրօէկտի մէջ էլ Պուշկինը

---

1) *А. Пушкинъ*, id., т. V, стр. 177 («Проэктъ изданія журнала и газеты»).

գրում էր՝ «Համարձակում եմ թոյլտուութիւն խնդրել պարապելու մեր պետական արխիւներում և գրադարաններում...... Պետրոս Մեծի պատմութիւնը գրելու նպատակով»[1]։

Բայց այդ ծրագիրը, ինչպէս և միւս դրա նման ծրագիրներ, ծրագիր էլ հէնց մնաց։ Պուշկինը չկարողացաւ հասնել իր նպատակին. նրա «лѣнь»-ը, նրա «уединенье»-ն, նրա «вдохновенное умиленье»-ն արգելք հանդիսացան այդ բոլորին։

Շատ յարմար կ՚լինէր վերջացնել Պուշկինին նուիրած մեր յօդուածը նրա իսկ չորստողանի ոտանաւորով, որ «Моя эпитафія»—իմ դամբանագիրը—խորագիրն է կրում.

Здѣсь Пушкинъ погребенъ: онъ съ музой молодою,
Съ любовью, лѣностью провелъ веселый вѣкъ;
Не дѣлалъ добраго—однако-жъ былъ душою,
Ей Богу, добрый человѣкъ.

III.

Մեզ մնում է երկու խօսք էլ ասելու։

Ի՞նչ է մեր յօդուածի նպատակը. արդեօք Պուշկինի փառքը նսեմացնելու համա՞ր ենք գրել մենք այս մի քանի էջերն. ամենևին ոչ։ Գրելով՝ մենք աչքի առաջ ենք ունեցել ոչ թէ Պուշկինին և նրա փառքը (Աստուած էդ փառքի հետ), այլ մեր ընթերցող հասարակութիւնը, մեր մամուլը։ Մենք ուզեցել ենք բացել մեր հասարակութեան աչքերը, որ նա այնքան էլ չյափշտակուի Պուշկինի գրուածքներով.—Պուշկինը նրանց ոչինչ չի տալ, եթէ տայ էլ—շատ քիչ կ՚տայ, աննշան կ՚լինի այդ տուածը և կանցնի իզուր։ Կան աւելի հետաքրքիր քերթողներ, անտարակոյս օգտաւէտ, և նրանցով պէտք է պարապել, նրանց պէտք է նուիրել մեր ազատ ժամերն։ Իսկ մեր պօէտներին և թարգմանիչներին մենք բարի խորհուրդ կ՚տայինք այնքան էլ չյանձնուել Պուշկինին։ Թարգմանելու այնքան լաւ բաներ կան, այնքան լաւ բաներ, որոնց օգտաւէտ լինելն օրուայ լուսի պէս պարզ է,—որ Պուշկինի վրայ ժամեր կորցնելն

1) Ibid.

աւելի քան անարդարութիւն է։ Մինչև անգամ, եթէ ուզում էք, վնասից զատ Պուշկինը մեզ գրեթէ ոչինչ չի կարող տալ։ Եւ այդ վնասը մեր գրականութեան մէջ արդէն սկսում է ծիլեր արձակել։ Մեր բանաստեղծները՝ նրա գրուածքներից յափշտակուած՝ աշխատում են նմանել նրան, հետևել նրա օրինակին։ Բեմ են դուրս գալիս «լուսին», «անտառ» երգող զանազան ոտանաւորներ. «գեղարուեստը գեղարուեստի համար» թէօրիայի դրօշակի տակ սկսում են խմբուել մեր երիտասարդ բանաստեղծները։ Հասարակական կեանքը, հասարակական կեանքի առօրեայ պիտոյքները մի կողմ են նետուած. անձնական զգացմունքը ամէն բանից բարձր է դրվում։ Գամառ-Քաթիպայի, Շահազիզեանի փայփայած իդէանները մոռացվում են։—

—Խոստովանեցէք ինքներդ, հայ բանաստեղծներ, որ եթէ ձեր մուսան այդ ճանապարհով շարունակի իր առաջադիմելը, էլ ի՞նչ է մնում հայ ընթերցողին անել, եթէ ոչ «յուսահատ փակել ականջները և մտնել իր տուն»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՆՈՒՆԻ.

ՄԱՐԴ ԹԷ՞ ԱՆԱՍՈՒՆ

(ՄԱՐՍԷԼ ՊՐԵՎՕ՝ «LETTRES DE FEMMES»).

«Я думаю, что женщина—человѣкъ, что ничто человѣческое ей не чуждо и что великій грѣхъ лежитъ на душахъ тѣхъ вывороченныхъ на изнанку Донъ-Жуановъ, которые обманными медовыми рѣчами загоняютъ женщину въ клѣтку любви».

Ник. Михайловскій: «Письма о разныхъ разностяхъ, XII»

Ո՞ր բանաստեղծը, ո՞ր քերթողը չի խօսել սիրոյ աշխարհից: Շէքսպիրն ասել է՝

По всей землѣ не встрѣтите поэта,
Дерзнувшаго приняться за перо,
Не омокнувъ его сперва въ прекрасныхъ
Слезахъ любви.

Փողոցային բէլէտրիստներից սկսած մինչև բարձր գրականութեան կուլի-ֆէներն և մարդկային սրտի անկիւնները քաջ գիտուններն— —սէրը զբաղեցրել է ամենքին: Եւ դա հասկանալի է:

Այն զգացմունքը, որ մենք սէր ենք կանչում—իր պէսպէս ձևերով—այնքան հարազատ է մարդուն, որ չէ կարելի, գրելով այդ մարդու հոգեկան աշխարհը, լռելեայն անցնել այն անկիւնը, որտեղ այդ բարդ զգացմունքն է ապրում: Շատերն էլ անգամ ասում են, թէ սէրը մարդու կեանքը, բախտն է, նրա ամբողջ գոյութիւնը:

Խայտաճամուկ է սիրոյ համաշխարհական գրականութեան հրապարակը: Ի՞նչ տեսակ զգեստով ասես ծածկել են նրա մերկութիւնը:

Լուսապսակ, ցն'խ... այդ խոշոր հակադրութիւններն այդտեղ ստիպուել են կենալ միասին։ Ռօմանտիզմ, իդէալիզմ, րէալիզմ, նատուրալիզմ, և այլն, և այլն, ամեն մէկը այդ «իզմ»-երից ունի իր «ուղհական» բացատրութիւնը։

Սիրոյ քննութեամբ պարապել են ոչ թէ միայն պօէզիայում— —զուտ բէլէտրիստիկական ոգի ունեցող յանգաւոր ու պրոզա գրուածքներում, բայց և գիտու—բնեան մարդիկ, մասնագէտներն։ Եւ բնաբանը, և բնազանից փիլիսոփան արդէն շտապել են պատասխանելու այն հետաքրքիր հարցին թէ՝ ինչ է «սէր»։ Ես մտադիր չեմ զբաղուել այժմ այդ հարցի լիակատար լուծումով։ Իմ թեթև նկատողութեան մէջ այդ մեծ գործը անտեղի է։ Ես այստեղ կ'շօշափեմ միայն ընտրած քերթողիս հայեացքը և, 'ի հարկէ, այն ամենն, ինչ որ անմիջական կապ ունի այդ հայեացքի հետ։ Սիրոյ հարցը ինձ շատ է հետաքրքրում, և նրա լուծման վրայ ես վաղուց է, որ աշխատում եմ։ Ժամանակին, յուսով եմ, կ'տամ ընթերցող հասարակութեանը ոչ թէ թեթև նկատողութիւն այդ անտարակոյս կարևոր ու մեծ հարցի մասին, այլ կարողացածիս չափ լուրջ հիմնական մի յօդուած։

Ժամանակակից բէլէտրիստիկան կնոջ սիրոյ վրայ երկու ծամծռմած հայեացակէտ ունի։ Մէկը չափազանց նատուրալիստիկական է, իսկ միւսը չափազանց իդէալական։ Եւ այդ երկու չափազանցութիւններն անգադար հանդիպում են. . .

Կնոջ սէրը մարդուն տալիս է ողամարդի կերպարանք, բարձրացնում է նրա բնութիւնը, բացում նրա առաջ աշխարհի գեղեցկութիւնները, մարդկային կեանքի չարն ու բարին։ Այդ դեռ քիչ է. նա մեղմացնում է սրտեր և թեթևացնում կրօնի գործը, որովհետև

«Божественный законъ
Основанъ весь на милосердіи, кто же
Любовь отъ милосердія отдѣлитъ?»

Այդպէս են խօսում կնոջ սիրոյ վրայ կապոյտ բարձրութիւնից նայողներն. և հէնց դրանց մասին է, երևի, ասել արգոյ պուբլիցիստը Ռէնգարդի «Женщина предъ судомъ уголовнымъ и судомъ

исторiи» յօդուածը քննութեան ենթարկելու ժամանակ [1])—«Я думаю, что... великiй грѣхъ лежитъ на душахъ тѣхъ..., которые обманными медовыми рѣчами загоняютъ женщину въ клѣтку любви»...

«Այն ամենն, ինչ որ կատարվում է հեշտական սէրից դուրս—մոլորութիւն է և խլխւլխտ», — այդ եզրակացութեան է հասել Անտլ. Ֆրանսի վէպերից մէկի [2]) հերոսը, և այդ խօսքերն ամփոփում են իրանց մէջ նատուրալիստների կարծիքը ժամանակակից կնոջ սիրոյ մասին: Բալզակ, Զօլա, Մօպասան, Բուրժէ, և այլն, ֆիզիկական միութիւնից զատ ուրիշ ոչինչ չեն տեսնում դրանք երկու սեռի յարաբերութիւնների մէջ: Ժամանակակից կինը, դրանից աւելով, սեռական զուարճութիւններին է նուիրում իր ամբողջ կեանքը: Ռ. Դումիկ, քննելով Պ. Բուրժէի գրուածքներն, ասում է, թէ «նրա կանանց բնաւորութեան յատկանիշ գիծը անյագ հեշտասիրութիւնն է» [3]): Սէրը նատուրալիստների համար անփառունակ և անարժան մի զգացմունք է, որ տիրել է մարդուն: Սէրը, լինի դա խաբուած, մերժուած և կամ յաղթանակը տարած—մի և նոյն է, ծանր տանջանքների ու չարչարանքների ճշմարիտ աղբիւր է. այդ աղբիւրի վճայից-մաքուր ջրի տակը թոյնն է բուն դրել, որ խորտակում է ծաղուտ անցորդի յոյսերը, տաշում նրա կեանքը, երբեմն էլ կտրում այդ աւերակ կեանքի մաշուած թելը,—այդպէս է հասկանում մարդկային սրտի այդ բարդ զգացմունքը խոստովանի գրող Մատիլդա Սերաո իր թեթև և լուրջ վէպիկների մէջ:

Любовь туманитъ очи,
Пьетъ кровь изъ сердца, душу жжетъ... Она—
Она недугъ ужасный всѣхъ недуговъ [4]).

Համարեա այդպէս էլ հէնց հասկանում են և նատուրալիստները: Բուրժէն, օրինակ, իր roman d'analyse-ում, հոգեբանական պէսպէս արշաւանքների ենթարկելով սէրը, այն հաստատ համոզմունքին է գալիս, թէ այդ զգացմունքն իր մէջ ամփոփում է մի անանական

[1]) *Ник. Михайловскiй.* «Письма о разныхъ разностяхъ, XII». [2]) «Le Lys rouge». [3]) René Doumic- «Ecrinains d'aujourd'hui». [4]) А. Ѳ. Ѳедотовъ. «Въ Шельонскомъ замкѣ, трагедiя».

փուչը, որ թունաւորում, խորտակում է ամեն մի սիրային պատարանք։ Այդ պատճառով Բուրժէն ձգտում է թագաւորել անել սէրը և խլել նրանից այն, ինչ որ ռոմանտիզմն է տեսնում նրա մէջ։ Ազնիւ կնոջ սէրը նրա roman d'analyse-ում ոչ թէ մաքրում է անբարոյական երիտասարդին, այլ ընդհակառակն, ինքն էլ շեղվում է իր ճանապարհից, անբարոյականում[1])։ Մաքուր, միամիտ երիտասարդի սէրը ոչ թէ կարողանում է ազատել անբարոյականութեան անդունդքից ազնիւ կնոջ սիրտը, այլ ինքն էլ անդունդը է խորտակվում, որ յետոյ անբարոյականացնի ուրիշներին էլ[2])։

Այդ աստիճան ստոր է նատուրալիստների հայեացքը երկսեռի յարաբերութիւնների վրայ։ Մենք տեսնում ենք, որ կինը այդտեղ զուրկ է հոգեկան զարգացումից, նա «անյագ հեշտասիրութեամբ» լարուած մի անասուն է, որ ոչ հոգեկան պահանջմունքներ ունի, ոչ էլ հոգեկան կերպարանք։ Տղամարդի հետ նա կարող է միանալ միայն սեռական կապով. ուրիշ կապերի մասին նա հասկացողութիւն էլ չունի։ «Այն ամենն, ինչ որ կատարվում է հեշտական սէրից դուրս—մոլորութիւն է և խլեզիա»...

Անմխիթար է այդ հայեացքը, իմ ընթերցող, և սիրտ կտցահարող, անմխիթար այն պատճառով, որ, այսպէս նայելով կնոջ վրայ, մենք մարդկութեան ճնշող կէսը հաւասարացնում ենք անասուններին։ Բայց ի՞նչ արած, որ այդ հայեացքը՝ եթէ ոչ իր ամբողջութեամբ գոնէ իր մասնաւոր կէտերում՝ իրաւացի է և արդար։ Ժամանակակից մարդու — կինմարդի և տղամարդի մի և նոյն է— մէջ հեշտասիրութիւնը այնպիսի մեծ տեղ է բռնել, որ շուտով բոլորովին կ'ճնշէ նրա բնութեանը յատուկ ուրիշ—անհամեմատ բարձր, անհամեմատ նուիրական — ցանկութիւններին։ Այժմ մենք, ամեն ինչ արհամարհելով, ամեն բոպէ, ամեն տեղ «սեռական զուարճութիւն» ենք որոնում։ Մինչդեռ արժանի՞ է միթէ մեր կուռքը, որին այնպիսի ջերմեռանդութեամբ երկրպագում ենք, այն անփոխարինելի զոհերին, որ դնում ենք և դեռ դնելու ենք նրա ոտների տակ։

Եւ վերջապէս—ի՞նչ է նշանակում «սեռական զուարճութիւն»․ կա՞յ, արդեօք, այդպիսի մի զուարճութիւն... ~~Անկեղծ չեն խօսում~~

---

1) «Crime d'amour». 2) «Cruelle énigme», «Monsonges».

Ուրեմն — ի՞նչ միտք ունի սեռական սէրը։

Սեռական սէրը, եթէ այդպիսի սիրոյ գոյութիւնը ընդունենք, պէտք է ունենայ միմիայն մի նպատակ. այն է՝ բազմացնել մարդկութիւնը. . .

Ես համաձայնում եմ իմ կնոջ հետ սեռական յարաբերութիւններ կապել, որովհետև ես փափագ, ցանկութիւն ունիմ տալու հասարակութեանը նոր անդամներ, և ինձ ուրախացնելու, երջանկացնելու են ոչ թէ այդ յարաբերութիւններից դուրս բերած ЯКОБЫ-զուարճութիւնները, այլ այն միտքը, թէ դրանով — ո՞վ գիտէ — գուցէ մի նոր, պիտանի կեանքի հիմքն եմ դնում։

Ժաննա'ն, Մոպասանի «Une Vie» վէպի հերոսուհին, տեսնելով, որ անարդար խաբուել է իր ամուսնուց, կտրում է իր կապը նրա հետ։ Անցնում է մի քանի ժամանակ։ Այդ կնոջ մէջ մի նոր զաւակ ունենալու ցանկութիւն է զարթնում։ Սակայն ի՞նչ անել. ամուսնուց նա հեռացել է, ուրիշին յանձնուելն էլ անբարոյականութիւն է։ Նա դիմում է իր աբբատին, խորհուրդ հարցնելով նրանից։ Աբբատը խոստանում է խօսել նրա ամուսնու հետ։ Վերջինը ուրախութեամբ տալիս է իր համաձայնութիւնը։ Մարդ ու կին մի օրով հաշտվում են... Ժաննան մի քանի ժամանակից զգում է, որ արդէն յղի է. . .

Այդպէս եմ արդարացնում ես սեռական սէրի գոյութիւնը, և ուրիշ պէս հասկանալ կամ բացատրել նրա նշանակութիւնը ես չեմ կարող... Եւ գիտութեան վերջին խօսքը հէնց դա է։

Եւ միայն այն ժամանակ, երբ որ հասարակութիւնը իր «սեռական պահանջ»-ի վրայ կ'նայի այդպիսի աչքերով, կարող ենք յուսալ, թէ, վերջապէս, կինը մեզ համար ժամանակով կ'լինի ո՛չ հրեշտակ և կամ դև, ո՛չ աստուած, ո՛չ էլ անասուն, այլ **մարդ**։ Եւ միայն այն ժամանակ մենք կարող ենք **սիրել կին առանց արբածի, աւելի առաջ ունենալով ոչ թէ նրա կանացիութիւնը, այլ նրա մարդ լինելը**։

Եւ կինն էլ իր կողմից այդ ժամանակ կ'դառնայ տղամարդին հետեւեալ գեղեցիկ խօսքերով՝ «Ես քեզ սիրում եմ։ Ես այժմ կարող եմ այդ ասել՝ չկարմրելով։ Իմ սրտի մէջ չկայ ոչինչ կանացի ցանկութիւն։ Ո՜, եթէ ես այժմ տղամարդ լինէի, երդւում եմ երէ-նոյն այժմեան տեղը, մի և նոյն է, կ'սիրէի այնպէս, ինչպէս սիրում եմ այժմ...... Սիգուրդ, ոչ թէ իբրև կին, այլ իբրև զինակիր ես կ'հետեւեմ քեզ. ես կողւարեմ քեզ մեծ գործերի, որ քո անունը անցնի աշխարհից աշխարհ։ Պատերազմում ես կանգնած կ'լինեմ քո կողքին, փոթորկի ժամանակ ինձ կ'գտնես զինուորներիդ շարքին, և եթէ մի օր քո քաջութիւնները հնչեն ժողովրդի երգերում, անունիդ հետ կ'կրկնեն և իմ անունը» [1]). . .

Ընթերցողիս առաջ դրած են երկու ծայրայեղութիւններ. նատուրալիստի հերոսուհին մի կողմից և Իբսէնի Յիօրդիսը [2]) միւս կողմից։ Ի՞նչպէս անցնել մէկից դէպի միւսը։ Դա համարեա թէ անկարելի է։

Պէտք է կեանքը ստեղծի մի նոր կանացի տիպար, որի միջնորդութեամբ ժամանակը կ'լուծի այդ հարցը։ Եւ այն ժամանակ գուցէ այդ անհաշտ թշնամիները մի կերպ հաշտուեն. . .

Ֆրանսիական ժամանակակից երիտասարդ րօմանիստներից մի քանիսները, կարծես, հէնց այդ նոր—միջակ—տիպարի իրագործման վրայ են աշխատում։

Դրանք ձգտում են վերականգնել, մեծ փոփոխութիւնների ենթարկելով, այն ամենն, ինչ որ խորտակել են նրանց հայրերը— —«թօշնած» նատուրալիստները։ Դրանց հերոսուհիները գիտեն, թէ ինչ ասել է անձնուրաց սէր, ունին հոգեկան պահանջներ, բայց և մի և նոյն ժամանակ որոնում են և սեռական զուարճութիւն։ Գեղեցիկ օրինակ՝ Մարսէլ Պրեվօյի «Lettres de femmes»—«Կանանց նամակներ»-ն։

---

1) *Ибсенъ:* «Сѣверные богатыри».

2) Յիօրդիսը «Сѣверн. богатыр.» պիէսայի հերոսուհին է։

Այդ «Նամակներ»-ն հեղինակին վարձատրել են աջողութեան դափնիով: Իր «Նամակներ»-ի ինքնուրոյն ձևով, ոճի քաղցրութեամբ, սիւժէտների հասարակական և հոգեբանական հետաքրքրութեամբ հեղինակը դարձրել է իր վրայ ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը: Մինչդեռ հինգ-վեց տարի դրանից առաջ անգամ Փարիզում ոչ ոք չէր յիշում նրա անունը: Այժմ այդ անունը յայտնի է ամբողջ ընթերցող Եւրոպային: Նրա «Les demi-vierges» (լոյս է տեսել, մօտաւորապէս, 1894 թ.) այնպիսի աղմուկ է քցում գրականական կուսակցութիւնների մէջ, որ անկարելի էր ուշադրութիւն չդարձնել Պրեվօյի վրայ:

Մարսէլ Պրեվօն «Lettres de femmes»-ում իր ուղղութեամբ ոչ թէ շարունակում է նրան նախորդած գրականական սիւների, Բալզակի, Զօլայի, Մօպասանի, և այլն, գործը, այլ նրանց միակողմանիութիւնը ենթարկում է զգալի սրբագրութիւնների: Սէրը՝ նրա կարծիքով՝ կարող է լինել և զուտ հեշտական և լուրջ սէր, այն, որին մենք սովորաբար ասում ենք հոգեկան զգացմունք: Այդ պարզ երևում է նոյնպէս նրա «Confession d'Amant» վէպից, որտեղ հեշտական յափշտակումը մի կողմից և լուրջ զգացմունքը միւս կողմից կատարում են իրանց դերերը: «Նամակներ»-ի կանայք՝ բացի մարմնական ցանկութիւններից՝ ունեն և հոգեկան պահանջներ:

Շատերը չեն ուզում ճանաչել երիտասարդ ռոմանիստի այդ բարի յատկութիւնը: Շատերը՝ մինչև այժմ՝ համոզուած են, որ Մարսէլ Պրեվօն ընդունակ է ստեղծել միմիայն հերոսուհիներ à la Զօլա, Մօպասան, Բուրժէ, այսինքն՝ հերոսուհիներ, որոնք ապրում են միայն մարմնական աշխարհի պտուղներով: Բայց երբ սր լոյս տեսաւ նրա «Les demi-vierges» վէպը, քանի-քանի՜ քարեր թափեցին հեղինակի գլխին. նրան հայհոյում էին, նրան անպատվում քննադատական նկատողութիւնների մէջ. ասում էին, թէ նրա վէպը խայտառակ պասկվիլ է ամբողջ Փարիզի հասցէին, և թէ այդ վէպի մէջ առաջ բերած կանայք անձնաւորութիւնները [illegible] անձնաւորութիւններ են: Մինչդեռ «Les demi-vierges» ֆրանսիական «beau monde»-ի կեանքի հանճարեղ վերարտադրութիւն է:

1893 թ.-ին «Русскія Вѣдомости» լրագրի մէջ պ. Իվանով'ը իր «Замѣтки читателя» տեսութիւններում, խօսելով Մ. Պրեվօյի մա-

սին, ասում է, թէ նրա «կանայք անպայման զուրկ են իդէալներից, և ոչ իդէալներ գիտեն, ոչ էլ որ և է ցանկութիւն, բացի ֆիզիկական զուարճութիւններից», և յետոյ աւելացնում էլ է, թէ «դա Պրեվօյի խոր համոզմունքն է»: Նա պնդում է, թէ րօմանիստը (այսինքն՝ Պրեվօն) չի հաւատում, որ կինը ընդունակ է սեպհականացնել իրան լուրջ հայեացք ընտանիքի և կամ առհասարակ կեանքի վրայ»: Անցնում է մօտ երկու տարի, և պ. Իվանովի կարծիքը «Նամակներ»-ի կանանց մասին փոքր ինչ մեղմանում է: 1895 թ.-ին իր «Вырождающееся общество» յօդուածի մէջ [1]), քննելով «Les demi-vierges» վէպը, նա աւելորդ չի գտնում՝ նախաբանում՝ մի քանի խօսք ասել և «Lettres de femmes» («Письма женщинъ») գրքոյկի մասին: Նրանք (այսինքն՝ «Նամակներ»-ի կանայք),— —ասում է պ. Իվանովը այդտեղ,—պահպանել են կանացիութեան ինստինկտը և ակամայ արհամարհանք են տածում դէպի անասնական զուարճութիւններ»:

Ֆրանսիացի կրիտիկոս Ժ. Պելլիսէ (George Pellisier) իր «XIX-դ դարու ֆրանսիական գրականութիւնը» մի շարք յօդուածներից մէկը Մ. Պրեվօյին է նուիրել: Դա էլ, ինչպէս առաջ ռուս կրիտիկոսը, չի կարողացել հասկանալ «Lettres de femmes»-ի կանանց: «Շատ պէսպէս կանայք ենք տեսնում Պրեվօյի գրքի մէջ, — ասում է նա «Նամակներ»-ի մասին, — դքսուհիներից սկսած մինչև համեստ քաղաքացուհին, նա չի մոռացել նոյնպէս և աղախիններին (տես Dévoument), և՛ Sacré Couer-ի գիշերօթիկ օրիորդ-սաներին, և՛ ամուսնացած ու այրիացած կանանց, ու այդ պէսպէս, մի շարք անձնաւորութիւնների մէջ դուք չէք գտնիլ ոչ մի ազնիւ կին» [2]):

Ուշադրութեամբ կարդացէք, ընթերցող, Մ. Պրեվօյի «Նամակներ»-ն, և դրանց մի մասը կ'բացի ձեր առաջ ինչպէս ռուս, նոյնպէս և ֆրանսիացի քննադատների [illegible] սխալ ու անհիմն լինելը:

'Ի հարկէ, այդտեղ էլ կան թեթևամիտ կանայք, որոնք «խոհեմ կերպով վճռում են, թէ իրանց կեանքը տալու են ափիցերին, այն էլ անպատճառ հեծելազօր ափիցերին», կան և սանտիմենտալ կանայք, որոնք՝ «կարդալով որ և է գրքի մէջ թէ ինչպէս երկու սի-

[1]) «Артистъ», 1895 г., № 45, стр. 165.
[2]) *Ж. Пеллисье*: «Французская литература XIX вѣка».

րահար համբուրվում են, սկսում են մտածել իրանց սիրոյ մասին և լաչ ու լաչ...

Բայց և մի և նոյն ժամանակ կան և այնպիսի կանայք, որոնք իրանց հասակ առած և համարեա թէ ծերացած բարեկամներին խորհուրդ են տալիս չամուսնանալ ջահիլ, թարմ օրիորդների հետ, որովհետև «ամենալաւ տղամարդը չի կարող տալ իր կին-ամուսնուն ինչ որ ինքը չունի. իսկ դուք չունէք այն, ինչ որ ձեր ամուսնուն է պէտք.—դուք զուրկ էք երիտասարդ, նորահաս սէրից... Շատ շուտ կ'ձանձրացնի ձեզ ձեր ամուսինը. դուք իրար հետ կ'խօսէք զանազան լեզուներով. Նրա երիտասարդութիւնը միշտ կ'չփոթի ձեր հանգստութիւնը, թէպէտև նա լուռ ու մունջ ապրի և ձեզնից ոչինչ չպահանջի: Դուք կ'սկսէք խորշել նրանից»: Իսկ այդ բոլոր թիւրիմացութիւնները հեռացնելու համար «անհրաժեշտ է, երբ որ ամուսնանում ես, մեծ ուշադրութեամբ զննես այն անձնաւորութիւնը, որի հետ կապելու ես ապագայ կեանքդ, բայց նախ և առաջ պէտք է զննես ու փորձես և սեպհական անձդ»... Ահա ձեզ խելացի ու բարի կին, որ սեպհականացրել է իրան լուրջ հայեացք ընտանիքի վերաբերմամբ, և դրան կանչում են տիկին դէ-Գոմոնէ:

'Ի դէպս. յիշենք տիկ. Դիւֆրէնին. անասնական ցանկութիւնը դրա մէջ յաղթվում է առողջ դատողութեամբ: Տիկ. Դիւֆրէնը, յափշտակուելով Ժակի փաղաքշանքներից, որոնք աւելի և աւելի էին վառում նրա մէջ հեշտասիրութեան կայծերը, թէպէտև, իրաւ է, գայթակղվում է, սակայն յետոյ՝ առանձնութեան մէջ քննելով իր վարք ու բարքը, վճռում է, թէ պէտք է Ժակին մոռանալ անպատճառ, որպէս զի այդ անօրէն կապը չխորտակի իր Լուի ամուսնու բախտը:

Բայց ահա ձեզ և Լուիզա-դէ-Մարի: Նայեցէք նրա աչքերին և աշխատեցէք հասկանալ նրա սիրտը: Նա դեռ մանուկ հասակի մէջ սիրում էր երիտասարդ դէ-Վօբէրին և ցնորում նրա ամուսինը դառնալ: Սակայն մի գեղեցիկ երեկոյ նա յափշտակվում է և... մեղանչում նրա հետ: Այն ժամանակ նա մեծ դառնութեամբ վճռում է, թէ այլ ևս չի կարող դէ-Վօբէրի ամուսինը լինել, որովհետև «նրա ցանկութիւնն էր՝ տալ իր տղամարդին թարմ և մաքուր սիրտ... Իսկ այժմ նա կարող է տալ միայն ճնշուած մար-

մին և ճնշուած հոգի ։ Եւ Լուիզա-դէ-Մարին հեռանում է մենաստան... Միթէ զո՞ւրկ է այդ կինը առողջ խղճալից և միթէ անձնուրա՞ց սէր չէ նրա սէրը... «Ես ջերմեռանդ կաղօթեմ Աստուծուն,— —գրում է իր սիրելիին նոյն հերոսուհին արդէն մենաստանից,— որ նա ների մեր մեղքը և տայ ձեզ մաքուր, թարմ սիրտ ունեցող ամուսին, այնպիսի ամուսին, որ մի ժամանակ ես էի ցնորում ձեզ տալ... Ես չեմ դադարել ձեզ սիրելուց, և ոչ մի բանում ո՛չ կըշտամբում եմ ձեզ, ո՛չ էլ մեղադրում։ Երբ որ դուք՝ ձեր կնոջ կողքին նստած և ձեր երեխաներով շրջապատուած՝ կ՚յիշէք ինձ, ես չեմ ուզում, որ նրանք տանջեն ձեզ»... Մի՞թէ mademoiselle Լուիզա-դէ-Մարի՛ի այդ ցանկութիւնը «ֆիզիկական ցանկութիւն» է։ Չէ՛ որ ազնիւ բայց և անբախտ կնոջ անբախտ սրտի ամենածածուկ աղբիւրներից են դուրս թափել այդ խօսքերն։

Այդ մի քանի օրինակները «Lettres de femmes» գրքից, յուսով եմ, գոնէ մասամբ վկայում են պ. Իվանովի և Պելլեւէի կարծիքների անհիմն լինելն և մի և նոյն ժամանակ գոնէ մասամբ պարզում Մ. Պրեվօյի գրականական ֆիզիօնոմիայի մի կողմը։ Ընթերցող, յուսով եմ, տեսաւ, որ «Lettres de femmes»-ի կանանց մի մասը՝ բացի մարմնական ցանկութիւններից՝ ունեն և հոգեկան պահանջներ։ Եւ հէնց այդ յատկութիւնն էր, որ գրաւեց իմ ուշադրութիւնը և զբաղեցրեց ինձ երիտասարդ ռոմանիստի «Նամակներ»-ով։

Սակայն բացի հասարակական նշանակութիւն ունեցող արժողութիւնից այդ «Նամակներ»-ն ինձ համար մի արժողութիւն էլ ունեն։ Այդ արժողութիւնը հեղինակի գրելու ձևն է։ Կարճ է, հասարակ նամակը, բայց մի և նոյն ժամանակ ոչինչ բաց չէ թողած,—լրացած է, կատարեալ։ Հեղինակը կարողանում է մի նախադասութեան մէջ հաւաքել մի քանի մտքեր, մի թեթև նամակով քարոզել մի լուրջ իդէա։ Դա Զօլայի երկար ռոմանը չէ, որտեղ զարհուրանքները զարհուրանքների վրայ են շարած, ուրտեղ ցեխը հաւաքած է ցեխի վրայ առանց կարևոր նպատակի, առանց օգտի։

Պէտք է ասել, որ ֆրանսիական վէպիկի մէջ մտել է մի նոր հոսանք. այդ վէպերից մի քանիսները՝ համեմատաբար ուրիշ վէպերի հետ՝ զանազանվում են իրանց ինքնուրոյն կարճութեամբ (сжатость)։ Այդ, 'ի միջի այլոց, նկատել է և Ժիւլ լէ-Մետր'ը իր՝ Մօ-

պատանի մասին գրած՝ յօդուածում[1]): Ֆրանսիական գրականութեան ժամանակակից ռոմանիստներից մի քանիսները աշխատում են իզուր չերկարացնել, չընդարձակել իրանց վէպը, ինչպէս, օրինակ, ռուս վիպասաններն, այլ—ընդհակառակը—կրճատել նրան, որքան կարելի է: Ու այդ բանը նրանց աջողում է:

Եւ խոստովանում եմ, ֆրանսիացու կարճ վէպը իր գրականական արժանաւորութիւններով անհամեմատ բարձր է նրա երկար վէպերից: Օրինակ ձեզ՝ Մօպասանը. նրա անունը այժմ կրկնվում է ոչ թէ միայն Ֆրանսիայում, այլ ամբողջ ընթերցող աշխարհում, և, անշուշտ, շնորհիւ նրա նովելլաների: Նրա մեծ վէպերն, եթէ չյիշենք «Pierre et Jean», զուրկ են գրականական հետաքրքրութիւնից. նրանց հոգեբանական և հասարակական հետաքրքրութիւնը ես, 'ի հարկէ, չեմ ուրանում: Իսկ նրա «Bel Ami» վէպը անտանելի երկարացրած է. մեզ ծանօթ թեթև, հասարակ, բայց և խորիմաստ, համակրելի Մօպասանը այդտեղ սկսում է ձանձրացնել մեզ, անգամ խլում մեր համբերութիւնը:

'Ի վերջոյ՝ չեմ կարող չցանկալ, որ ժամանակակից ռոմանն առհասարակ ընդունի [illegible] այնպիսի ձև, ինչպիսին ֆրանսիական [illegible] վէպն է ընդունել: Բանը նրանումը չի, որ խօսել շատ, գրել երկար, փաստերը, հոգեբանական հետազօտութիւնները շարել իրար վրայ... ո՛չ, ռոմանիստ: Թող խօսքդ լինի կարճ և մի և նոյն ժամանակ լրացած ու աջողակ (МѢТКІЙ), և, հաւատացէ՛ք, լուրջ ընթերցողը անչափ բաւական կ՚մնայ քեզնից:

ԱՐՏԱՇԷՍ.

1896 Թ., յուլիս:

---

1) Տես. Сочиненія Гюи де-Мопасана, изд. В. И. Л., т. XII.

ԽՂՃԱՑԷՔ...

(ՏԻԿԻՆ ԴԻՒՖՐԷՆԻ ՆԱՄԱԿԸ Պ. ԺԱԿ ԴԷ-ԼԱԼՕԲԻՆ)

(*Մարսէլ Պրէվօ՚յից*).

Աստուած իմ, ինչքա՜ն ես դժուարանում էի գրել ձեզ, պարոն Ժակ. ինչքա՜ն նամակներ սկսած և ոչնչացրած եմ սրանից առաջ, որը երևի նոյնպէս չի աւարտուելու: Ես այնքան շուարում եմ ձեր հայեացքից, Ժակ... Երբ որ դուք նայում էք ինձ վրայ ձեր սիրուն մեծ-մեծ աչքերով՝ ես չեմ հասկանում, թէ ի՛նչ եմ խօսում. բոլոր մտքերս, կարծես, անհետանում են իմ գլխից: Այո՛, ինձ համար մեծ բախտաւորութիւն է ձեզ մօտ նստել-կանգնել, երկար քաղցր խօսակցութիւններ կապել ձեր հետ, այսու ամենայնիւ ես ուզում եմ փախչել, հեռանալ մի փոքրիկ անկիւն, որտեղից դուք չկարողանայիք տեսնել ինձ: Բայց խնդրում եմ ձեզ, Ժակ, կարդալով այս նամակս, մի ծաղրէք ինձ: Դուք հասկանում էք, որ ես շատ եմ մտածել դրա վրայ. իմ մարդու, իմ խեղճ Լուիի համար, ինձ համար էլ մի մեծ անբախտութիւն էր, որ դուք իրար հանդիպեցիք Կալէ՚ում: Այնտեղ ոչ ոք չկար, բայցի նրանից, որի հետ դուք կարող էիք խօսակցել... Եւ դուք՝ ստիպուած՝ բարեկամացաք: Իսկ յետոյ, երբ որ դուք բաժանուեցիք, և ամեն մէկը ձեզնից դարձաւ դէպ՝ իր առաջուայ կեանքը, այն ժամանակ միայն, ո՜, Ժակ, հասկացաք, թէ դուք ա՛յն հասարակութեան չէք պատկանում, որի հարազատ որդին էր Լուին, թէ ձեր երկուսի նիւթական դրութիւնները իրարուց բոլորովին տարբերվում են: Ո՜հ, ես

լաւ եմ հասկանում, որ ես յիմար, դատարկ մի կին եմ, այսու ամենայնիւ ես կարողացայ և նկատել, որ դուք՝ առաջին անգամ մեզ մօտ ճաշելիս՝ չափազանց զարմացաք մեր հասարակ կեանքին: Մինչդեռ մենք այնքան հոգսեր էինք դրել ճաշին լաւ կերպարանք տալու: Մի ամբողջ շաբաթ հէնց այս ճաշն էր մեր խօսակցութեան միակ առարկան: Դժբախտաբար՝ մենք չէինք կարող, 'ի հարկէ, փոխել և մեր բնակարանը, մեր կարասիքը, մեր աղախինը... Լուիի ծառայութեան վարձատրութիւնը այնքա՜ն չնչին է: Ես շատ տանջանքների ենթարկուեցի այն օրը, հաւատացնում եմ ձեզ: Ինձ թւում էր, որ մեզնից բաժանուելուց, դուք անպատճառ կ՚ծաղրէք և՛ մեզ, և՛ մեր ճաշը, և՛ մեր բնակարանը: Լուիին էլ այդպէս էր կարծում: Սակայն մենք չէինք վստահանում միմեանց խոստովանել մեր ենթադրութիւնը, և մեզ տխո՜ւր էր, անտանելի՜ տխուր: Մենք մտածում էինք՝ նա ձանձրացաւ, նեղացաւ մեզնից. մենք նրա համար շատ փոքրիկ, հասարակ մարդիկ ենք. չէ՞ որ անուանի պատգամաւորների հետ է նա միշտ նստել-վերկացել: Նա այլ ևս չի գալ մեր տունը: Բայց ձեր այցելութիւնները սկսեցին կրկնուել և մինչև անգամ շուտ-շուտ: Մենք երկուքս էլ շատ ուրախ էինք, մանաւանդ Լուիին: Սկզբից, գիտէք, պարոն Ժակ, ես անտանելի կերպով շուարում էի ձեր ներկայութիւնից: Բայց յետոյ, ես կամաց-կամաց ընտելացայ, և ձեր այցելութիւնները ինձ մեծ ուրախութիւն էին պատճառում... Ես չէի կարող հասկանալ, թէ ինչպէս դուք, որ հասարակութեան մէջ մեծ դիրք ունէք, դուք, որ, անշուշտ, այնքա՜ն սիրուն, կրթուած, խելօք կանանց էք տեսել, ինչպէս դուք յօժարում էք ձեր ժամերը սպանել ինձ նման յիմար, գեղեցկից զուրկ մի կնոջ կողքին... Եւ երբ որ դուք, յիշո՞ւմ էք, Ժակ, մի օր, ձեռքս սեղմելով, ինձ քաղցր, նազելի խօսքեր էիք ասում՝ թէ ես շատ սիրուն եմ, թէ ինձ վրայ էք միայն դուք մտածում, թէ դուք ինձ սիրում էք,—ուղիղն ասած՝ ինձ թւում էր, որ ես երազում եմ... Եւ այնքա՜ն քաղցր էր իմ երազը, որ ես անչափ ուրախ, բաւական կ՚լինէի, թէ որ երբէք չզարթնէի: Դուք այնպէ՜ս սիրասուն կերպով խօսում էիք հետս. դուք ասում էիք, թէ յարգում էք ինձ, թէ ես ազնիւ կին եմ, թէ դուք երբէք չէք մոլորեցնիլ, մեղքի մէջ չէք քցիլ ինձ, և թէ ինչպէ՞ս կարող էք դուք այդպէս վարուել քանի

որ անչափ յարգում էք Լուիին։ Դուք ինձ սիրելու, ինձ պաշտելու իրաւունք էիք միայն աղերսում ինձնից։ Միթէ ես կարո՞ղ էի մերժել... Ես կարծում էի, որ կարելի է սիրել ու մի և նոյն ժամանակ խոհեմ ու խելացի կին մնալ... Եւ կամաց-կամաց, երբէք չստիպելով, դուք հասաք ձեր նպատակին... դուք ինձ գայթակղեցիք... Ա՜խ, Ժակ, դուք լաւ էք ճանաչում կանանց. ձեր ձեռքում ես մի ուրիշ մարդ եմ դառնում, և իմ կամքը վերանում է ինձնից։ Բայց հէնց որ դուք հեռանում էք, ես անչափ տանջվում եմ խղճիս խայթերից... Միթէ իրաւունք ունի՞մ այսուհետև ազնիւ կին անուանուելու։ Ո՛չ, 'ի հարկէ, ոչ. ես այնքա՜ն ինձ մեղաւոր եմ համարում... սակայն ես դեռ չեմ ընկել վերջին յանցանքի, վերջին մեղքի մէջ, որից յետոյ ես չէի համարձակուիլ անգամ նայել Լուիի երեսին։ Եւ ես աղաչում եմ ձեզ, Ժակ, խղճացէ՛ք ինձ, մի՛ արէք ինձ ծաղրի ու խայտառակութեան առարկայ։ Դուք այլ ևս, լսո՞ւմ էք, չպէտք է այցելէք ինձ։ Ես չափազանց սիրում եմ ձեզ։ Ես զգում եմ, որ՝ ձեզ տեսնելիս՝ էլ ույժ, կամք չեմ ունենալ չյանձնուելու ձեզ։ Իսկ դա շատ և շատ վատ բան է։ Իմ խեղճ Լուին այնքա՜ն սիրում է ինձ, նա այնքա՜ն յարգում է և ձեզ։ Ի՞նչ եմ ես ձեզ պէս մարդու համար.—մի հաճոյք, մի կամահաճութիւն, և ուրիշ ոչինչ։ Մինչդեռ ես Լուիի համար ամեն ինչ եմ. չէ՛ որ նա միայն ինձ է սիրում։ Եթէ նա ոչինչ էլ չիմանար մեր յարաբերութիւնների մասին, մի և նոյն է. այն թախանձիչ միտքը, թէ ես խաբում եմ նրան—կարող է ինձ գերեզման տանել։ Իսկ եթէ նա գաղտնիքը մի կերպ բացի, ո՜, այն ժամանակ նա անպատճառ կ'մեռնի,—և մե՛նք, Ժակ, կ'լինինք նրան սպանողները։

Եւ յետոյ, լսեցէք ինձ, Ժակ, այս րոպէին դուք ինձ հաւանում էք, ես հաւատում եմ, բայց երբ որ ես լիովին ձեզ կ'պատկանեմ, այն ժամանակ, հաւատացէք, շատ շուտ կ'սառչի ձեր սէրը, և դուք ինձ կ'մոռանաք. իսկ դա, անկասկած, ինձ մեծ ցաւ ու տանջանք պիտի պատճառէ։ Beau monde-ի սիրուն կանայք, որոնց դուք սիրում էք, ձեզ հետաքրքրում են, որովհետև նրանք փափկասուն են, որովհետև նրանք խօսում են և գիտեն շատ այնպիսի բաներ, որ ինձ երբէք չեն սովորեցրել... Ես մի յիմար կին եմ, որ միայն մի բան գիտէ՝—սիրել ձեզ...

Գիտէ՞ք, Ժակ, անքուն գիշերները—ձեր խնդրանքի վրայ մտածելիս—ես ինքս ինձ ասում եմ՝ «Ժակը չէ սիրում ինձ. ես նրա խնդրանքին աւելի եմ հակառակում քան թէ ուրիշ կանայք, որոնց հետ նա սիրային խաղեր է կապում, այդ պատճառով էլ նա հետաքրքրվում է ինձնով. բայց երբ որ նա կ'առնէ ինձ, երբ որ ես նրան կ'պատկանեմ, նա կ'հանգստանայ և կ'սառչի։ Նա ինձ սիրում է՝ իր ինքնասիրութիւնից դրդած։ Եւ հէնց այդ միտքն էլ ինձ ոյժ է տալիս հակառակելու ձեր կամքին և գրելու ձեզ այս նամակս...

Ժա՛կ, եթէ դուք ցանկանում էք ինձ ձեր ինքնասիրութիւնից դրդած, ուրեմն իմացէ՛ք, որ կարող էք բաւական լինել. միթէ ես այժմ ձե՞զ չեմ պատկանում։ Չէ՞ որ ես աղաչում եմ խղճալ ինձ, չէ՞ որ իմ պատիւը ձեր ձեռքումն է... Խղճացէ՛ք ինձ, Ժակ, խղճացէ՛ք և ամուսնուս։ Կ'գտնուեն ուրիշ կանայք, որոնք կ'սիրեն ձեզ. դուք միշտ կարող էք բախտաւոր լինել։ Իսկ Լուիի և իմ միակ փոքրիկ բախտը մեր սէրն է։ Մտածեցէ՛ք, թէ ինչ մեծ անգթութիւն է խորտակել այդ բախտը, և կատարէ՛ք աղաչանքս։ Դուք կ'կատարէ՛ք, ես հաւատացած եմ, որովհետև դուք բարի էք և ազնիւ։ Ես միայն մի բանից եմ վախենում, որ... դուք... 'ի սէր Աստուծոյ մի ծիծաղէք... որ դուք ձեր սրտի խորքում դուցէ սիրում էք ինձ, և, որ, կարելի է, ձեզ որ և է ցաւ պատճառի ինձ հետ չտեսնելն... Ո՜, մի՛ նեղանաք, մի՛ բարկանաք վրաս, իմ սիրելի բարեկամ։ Մի միտք, թէ դուք պէտք է տանջուէք ինձ համար, ինձ յուսահատութեան մէջ է քցում. բայց ես կարող եմ միայն ներումն աղերսել ձեզնից... Աղաչում եմ, մի՛ վատ խօսքով մի՛ յիշէք ձեր ընկերուհուն. Նա ձեզ շատ է սիրում, նա շատ էր ուզում ձեզ պատկանելու, և նա երկա՜ր, երկա՜ր ժամանակ կ'շարունակի մտածել ձեր մասին. դուք նրան կ'մոռանաք, իսկ նա դեռ կ'յիշի ձեզ..

ՕՐ. ԿԱՏԱՐԻՆԷ ՆԵՐՍԷՍԵԱՆՑ.

ՄԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱՅԻ ՄԷՋ.[1]

(Ի. Իվանովից).

1887 թուականին կրիտիկական աշխարհը հարստացաւ մի նոր աշխատութիւնով: «Le critique scientifique»-ի երիտասարդ հեղինակը իր կարճատեւ գործունէութեամբ զգալի օգուտ է բերել գեղարուեստական կրիտիկայի զարգացմանը՝ ինչպէս Ֆրանսիայում, նոյնպէս և բոլոր եւրոպական ազգերի մօտ:

Հեննեկէնի նպատակն էր մի շարք սրբագրութիւններ (поправка) մտցնել ժամանակակից գեղարուեստական կրիտիկայի մէջ: Պատանի հեղինակը, պէտք է ասել, ունեցել է այլ և այլ ուղղութիւնների հետեւող անթիւ նախորդներ: Ֆրանսիական գրականութիւնը ամենից հարուստ է կրիտիկական աշխատութիւններով, և այն էլ ոչ թէ պատահական, կտոր-կտոր, րոպէական չարիքից և կամ անձ-

[1]) Բնագրի մէջ այդ յօդուածը «Эстопсихологiя» խորագիրն է կրում: Պ. Թարգմանիչը փոխել է այդ խորագիրը: Հէնց շատ լաւ բան է արել, որովհետեւ նոյն իսկ «эстопсихологiя» խօսքը կարդալիս՝ հայ ընթերցողը կ'խրտնէր, և, երեւի, յօդուածը կ'մնար չկարդացուած: Թարգմանիչը ռուս կրիտիկոսի յօդուածն ենթարկել է մի քանի փոփոխութիւնների. Նա մի քանի տեղ կրճատութիւններ է արել, մի քանի տեղ թարգմանելու փոխարէն փոխադրել է, մի երկու բան էլ ինքն է աւելացրել.—այդ ամենը նա արել է յօդուածը հայ ընթերցողի համար հետաքրքիր անելու նպատակով: 'Ի հարկէ, այլ է ռուս ընթերցողի պահանջը և այլ հայ ընթերցողի: Ինչ որ մէկի համար հետաքրքրական է—միւսը կարող է չհասկանալ անգամ:—Բայց պէտք է ասել, որ բնագրի ոգին պ. Թարգմանիչը պահպանել է:

նական քմահաճութիւնից ծագած աշխատութիւններով,—ոչ. նա հարուստ է որոշ շկօլայի և խիստ-սահմանափակ ուղղութեանը պատկանող աշխատութիւններով...

Ժամանակակից կրիտիկական մտքի կատարեալ ներկայացուցիչը Տէնն է։ Զուտ էսթետիկները վաղուց թաղուել, մոռացուել են, Սէն-Բեօվի գեղեցիկ էտիւդները, նրա մի ժամանակ հռչակաւոր «Lundis», հասարակ ընթերցանութեան նիւթ են այժմ դարձել, սակայն Տէնը դեռ թագաւորում է, և դեռ յայն է ու հեռու նրա թագաւորութեան սահմանները։ Նրա «Անգլիական գրականութեան պատմութիւնից» յետոյ, թւում էր, թէ կրիտիկան հասել է իր զարգացման բարձրութեանը՝ ամեն ինչ քննութեան էր ենթարկուած կրիտիկոսի զարմանալի և բազմակողմանի հանճարով։ Բերթողի անձնաւորթիւնը, նրա գրուածքներն այսուհետև հեշտ բացատրվում էին շրջանի (среда), բնութեան, ցեղի (раса, race) և ժամանակի ազդեցութիւններով։ Երջօրէն ուսումնասիրում էին ժամանակակից աթմոսֆերան, և միայն արտաքին հետազօտութիւններից և հոգեբանական կշռադատութիւններից յետոյ արտասանվում էր դատավճիռը։

Տէնի առաջնորդող գաղափարը յայտնի է ամենքին։ Հեղինակը և գեղարուեստական գրուածքը, նրա ասելով, որոշ ույժերի և ազդեցութիւնների արգասիք են և հետևանք, այսինքն՝ էպիֆենոմեններ են փաստերից։ Այստեղից էլ — պարզ է, թէ տաղանդը և հանճարը միմիայն երկրորդական դեր են խաղում; իսկ առաջնական դերը պատկանում է շրջանին, ժողովրդին, եթէ կամենում էք, ամբոխին,—հերոսը միայն նրա գործարանն է (органъ)... Եւ հանճարները ոչ թէ առաջնորդներ են, այլ միմիայն ներկայացուցիչներ։ Տէնը իւրացնում է այդ գաղափարը և Ֆրանսիական լեզուի ու գեղեցիկ ոճի շնորհիւ ղեկավարող տեղ է բռնում ժամանակակից գեղարուեստական կրիտիկայի մէջ։

Հեննեկէնը չի էլ մտածում հերքել իր հռչակաւոր հայրենակցի այդ դերը՝—նա խոնարհեցնում է իր գլուխը նրա հմտութիւնների և տաղանդի առաջ, բայց մի և նոյն ժամանակ նա ամենևին համաձայն չի Տէնի կրիտիկական հայեացքի սկզբունքների հետ։

Հեննեկէնը իր գրքի ամբողջ մի մասը նուիրում է Տէնի կրիտիկական սկզբունքների հերքումին։ Այդ հատուածը հեղինակը գրել

է սահուն ու շատ պարզ լեզուով, ապացուցանելով և դրականա-կան մեծ հմտութիւն: Տէնի երեք սկզբունքներից իւրաքանչիւրը——ազգային ժառանգականութեան, հասարակական շրջանի և երկրի ու բնութեան արտաքին պայմանների ազդեցութիւնները—Հէննեկէնը ենթարկել է մանրամասն քննութեան և իւրաքանչիւր դէպքում կրիտիկոսը, ըստ էութեան, այնպիսի եզրակացութիւնների է գալիս, որոնք վերջնականապէս ոչնչացնում են Տէնի ենթադրութիւնները:

Սկսենք ժառանգականութիւնից: Հէննեկէնը ասում է, թէ ժա-ռանգականութիւնը բնաւին գոյութիւն չունի այնպիսի անպայման ձեւով, որ կարելի լինէր յենուել նրա վրայ, ինչպէս՝ դրական եզրա-կացութիւններ անելու համար՝ մի հիմունքի վրայ... Եւ իրաւ, կա՞յ, արդեօք, աշխարհի երեսին գոնէ մի ազգ, որ կրականութիւն և գե-ղարուեստականութիւն ստեղծելով, մի և նոյն ժամանակ պահպանած լինի բոլոր մաքրութեամբ իր յատկութիւնների և իր ազգագրական (этнографическій) կազմուածքի միակերպութիւնը: Բոլոր ազգերը՝ հիներից սկսած՝ կրում են իրանց վրայ խառն բնաւորութեան ոգին և էլեմենտների այդ խառնուրդը որ և է մէկ ազգի մէջ այն աստի-ճան կենդանի է ու կայուն, որ մինչև այժմ, օրինակ, Մարսելի և Լիլլի բնակիչների մօտ կան այն բոլոր խտրութիւնները, որոնք կա-րող են գոյութիւն ունենալ երկու բոլորովին զանազան ազգերի մէջ: Պիեմոնտ քաղաքի բնակիչների սառն, հեգնական տիպը չունի ոչինչ ընդհանուր բան ուրախ և շարժուն նէապօլիտանցու հետ. Հոլա-նդային գերմանացին ոչ միայն նման չի պրուսացուն, այլ մինչև ան-գամ թշնամի է նրան, թշնամի է իր բնութեամբ և իր բնազդու-մով: Այժմ—ո՞ր տիպը, ասում է Հէննեկէն, պէտք ընդունենք իբրև ազգային (національный): Ո՞վ աւելի իրաւունք ունի բուն ֆրան-սիացի համարուել՝ պրովանսալցի Դօդէն, բրետանցի Ռէնանը, թէ նորմանցի Ֆլօբէրը: Բոլոր երեք հեղինակներն էլ ֆրանսիական գրա-կանութեան մէջ առաջնակարգ գրողներ են համարվում. այն ինչ նրանց հայրենիքները՝ և պատմական և ազգագրական տեսակէտից՝ կազմում են զանազան թագաւորութիւնն: Մի և նոյն զանազանու-թիւնները կարելի է անել և ուրիշ քաղաքակրթուած երկիրների ու նրանց հեղինակների և գեղարուեստագէտների վերաբերմամբ: Մի-թէ, եզրափակում է Հէննեկէնը, այդ ամենից յետոյ կարելի՞ է ասել,

թէ հեղինակը անգլիական կամ ֆրանսիական և կամ գերմանական որոշ տիպարի արգասիք է։ Անհերքելի է, որ տաղանդը և կամ հանճարը ինքն ըստ ինքեան խիստ սահմանափակուած ազգայնութիւններից դուրս մի տիպար է։ Այս թէ այն ազգի մէջ գեղարուեստական տաղանդի երևալը դեռ ոչինչ մեզ չի ասում նրա տաղանդի, յատկութիւնների և գործունէութեան գաղափարների ու բովանդակութեան մասին։ Յաճախ պատահում է, որ քերթողը կամ գեղարուեստագէտը արժանանում է ամենաբարձր ժողովրդականութեան ոչ թէ իր հայրենիքում, այլ մի ուրիշ ազգութեան մօտ։ Օրինակ՝ Էդգար Պօէի գրուածքները մինչև այժմ չեն կարդացւում Ամերիկայում. Բայրընի գինը աւելի է ճանաչւում մայր-ցամաքի (материкъ) վրայ, քան թէ Անգլիայում. Շէքսպիրի գրուածքները աւելի ուսումնասիրւում են Գերմանիայում և հէնց այստեղ էլ նրան համաշխարհային բանաստեղծ հռչակեցին դեռ այն ժամանակ, երբ Անգլիայում նրան հազիւ զանազանում էին մի որ և է Դժօնսօնից կամ Գրինից—և ոչ միայն համաշխարհային, այլ և անպայման ազգային-գերմանական բանաստեղծ։ Իսկ Հէյնէն, ընդհակառակն, մինչև այժմ ընդունուած չի Գերմանիայում։ Այդ բոլոր օրինակները ապացուցանում են, թէ չկայ ազգային ժառանգականութիւն և թէ գեղարուեստական տաղանդները բոլորովին արգասիք չեն որոշ ազգային տիպարի։ Ուրեմն—միանգամայն սխալ է կրիտիկայի այն մեթօդը, որ նախ և առաջ ուսումնասիրում է ազգի ընդհանուր բնաւորութիւնը ու ապա դրանով բացատրում պօէտի ստեղծական ընդունակութիւնները և նրա անձնաւորութիւնը։ Հէնց նոյն էլ անում է Տէնը իր «Անգլիական գրականութեան պատմութեան» մէջ։ Հէննեկէնի այդ բոլոր եզրակացութիւնները շատ հետաքրքրական են,—սակայն նրանք ուղղուած են Տէնի կրիտիկայի ամենաթոյլ կէտի դէմ։

Բոլորովին ուրիշ բան է—Տէնի երկրորդ սկզբունքը, այն է՝ հասարակական շրջանի, ժամանակակից որոշ պայմանների ազդեցութիւնները։ Որքան աւելի զարգացած է մի ազգ, այնքան աւելի դժուար է որոշել նրա նախնական-ազգային գծերը, և քաղաքակրթութեան զարգացման հետ, այսպէս թէ այնպէս, ոչնչւում է ազգերի հոգեկան նմանութիւնը։ Նոյնը անկարելի է ասել հասարակութեան և նրա կեանքի որոշ դարաշրջանների վերաբերմամբ։ Շատ

ազգերի մօտ՝ այդ դարագլուխները նմանութեամբ կարող են մօտենալ իրար, անգամ էլ նմանել, օրինակ, XVIII դարը արեւմտեան Եւրոպայում. սակայն այդ դարագլուխները միշտ կ՚պահպանեն իրանց որոշ պատմական կերպարանքը... Դժուար է, օրինակ, որոշել (опредѣлить) գերմանացուն առհասարակ,—սակայն ամեն մարդ կարող է բաւականաչափ նկարագրել 1848 թուականի գերմանացուն... Նոյնպէս և ռուս մարդուն կարելի է տալ անվերջ և վիճելի որոշումներ, սակայն վաթսունական և կամ քառասնական թուականների ռուսը ամեն մարդու համար կատարեալպէս կօնկրէտ և դրական մի տիպ է։ Պարզ է, որ հ——ր——կ——ն——ը բոլորովին այն չի, ինչ որ ռուսը։ Եւ եթէ կարելի է հերքել ռասայի ազդեցութիւնների լայնութիւնը և անդերծութիւնը, հասարակական ազդեցութիւնների մասին մենք ստիպուած ենք բոլորովին ուրիշ կերպ մտածել։ Այս ենթադրութիւնը չի ընդունում Հեննեկէն։

Ամեն մի օրգանիզմ, կրիտիկոսի կարծիքով, ձգտում է պահպանելու իր կազմակերպութեան գծերը, դիմադրելու արտաքին հանգամանքներին... Եւ որքան աւելի զարգացած է կեանքը,—կարծում է կրիտիկոսը,—այնքան էլ աւելի սուր կերպարանք կ՚ստանայ և այդ դիմադրութիւնը։

Ակներև է, որ Հեննեկէնը հէնց սկզբից խառնել է երկու իրար միանգամայն՝ տարբեր փաստեր—անձնական ազատութիւնը և անձնական ինքնուրոյնութիւնը։ Թէ անձնաւորութիւնը ձգտում է դէպի ազատութիւն և կուլտուրայի զարգացման հետ դառնում է աւելի ազատ—դա մի անկասկած փաստ է։ Սակայն դառնո՞ւմ է, արդեօք, այդ անձնաւորութիւնը աւելի ինքնուրոյն—դա շատ վիճելի հարց է։ Հեննեկէնը մեծ նշանակութիւն է տալիս քերթողների և գեղարուեստների փառքին ու ժողովրդականութեանը, հետաքրքրվում է անգամ նրանց հրատարակած աշխատութիւնների քանակութեամբ, նրանց պատկերների շուկայական գնով։ Եւ նա արդար է՝ այդ ամենը քերթողի ժողովրդականութիւնն է ապացուցանում։ Բայց ի՞նչ բան է ինքը ժողովրդականութիւնը։ Չէ՞ որ նա հեղինակի ուղղութեան ու տաղանդի համապատասխան լինելն է ապացուցանում հասարակութեան պահանջներին ու համակրութիւններին։ Չէ՞ որ նա հեղինակի և նրան յարգողների մտաւոր ազգականութիւնն է ցոյց տա-

լիս։ Եթէ դա այդպէս է—հեղինակը, ուրեմն, չի ներկայանում իր անձնաւորութեամբ այնպիսի մի ինքնուրոյն տիպ, ինչպէս ուզում է կարծել Հեննեկէնը, այսինքն, յայտնի շրջանում հեղինակը մի բացառական հոգևոր արգասիք չի, որ նրան կարելի լինէր բնաւին ազատել այդ շրջանի ազդեցութիւններից։ Ընդհակառակն՝ չէ՞ որ հեղինակի գլխաւոր արժանաւորութիւնը հէնց նրանումն է, որ նա կենդրոնացնում է իր մէջ, սրբագրում է և բարձրացնում մինչև իդէալական գեղեցկութիւն և ամփոփութիւն այդ բոլոր ազդեցութիւնները։

Հեննեկէնի ապացոյցները այդ դէպքում շատ թոյլ են։ Նա պնդում է, թէ չէ կարելի յենուելով ու և է գրուածքի վրայ, եզրակացութիւններ անել այն հասարակութեան վերաբերմամբ, որտեղ ստեղծուել է այդ գրուածքը։ Եւ իբրև ապացոյց առաջ է բերում ամենքին յայտնի և միշտ կրկնուող մի պատմական փաստ՝ թէ մի և նոյն դարագլուխներում ապրում էին բոլորովին հակառակ բնաւորութիւնների և գրականական ուղղութիւնների տէր մարդիկ։ Օրինակ, Աթէնքում միաժամանակ ապրել են Էվրիպիդէս, Արիստոֆան, Սօկրատէս, մի և նոյն դարագլուխներին են պատկանում Էպիկուրոս և Զենոն, և այլն։ Սակայն ի՞նչ են վկայում այդ պարալէլները։ Մի և նոյնը — ինչ որ, օրինակ, կամենում էր ասել Շէքսպիրը իր դրամաներում, երբ մի և նոյն բեմի վրայ դուրս էր բերում և հերոսին և ծաղրածուին՝—կեանքը միշտ և ամեն տեղ կոնտրաստներից է ստեղծվում։

Հեննեկէնը պիտի աւելի լրջմտութեամբ կանգ առնէր Տէնի հետ ունեցած տարաձայնութիւնների հէնց այս կէտի վրայ։ Կրիտիկոսի այդ բոլոր խօսքերից յետոյ Տէնի քարոզած իդէան կրկին մնում է չհերքուած. . .

Ուրեմն՝ Հեննեկէնի կարծիքով, ուսումնասիրելը—լինի դա պատմական, հասարակական, հոգեբանական—պէտք է ուղղել անձնաւորութեան և ոչ թէ շրջանի (среда) վրայ. և մեծ մարդու հոգեբանութիւնը կ'բացատրէ մեզ նրա ժամանակակից ձգտումներն ու հոգին...

Դուք տեսնում էք, որ Հեննեկէնի պնդումների հետևանքը բոլորովին հակառակ է Տէնի հիմունքներին։ Հեննեկէնը հաւատացնում է, թէ նա աւելի հաստատ ճանապարհով է գնում քան թէ Տէնը, և թէ այդ ճանապարհը 'ի վերջոյ կ'տանի նրան դէպի գիտական

եզրակացութիւններ։ Այդ ճանապարհը տալիս է «մտածող և զգացող մարդկութեան լիակատար տիպարներ»։ Իսկ այդ վերջինը դընում է հաստատ հիմունքի վրայ «ազգերի հոգեբանութիւնը», մի գիտութիւն, որի լոկ անունն է միայն մինչև այժմ մեզ յայտնի։

Հեննեկէնի նկատողութիւնները Տէնի երկրորդ պրինցիպի մասին—այն է՝ բնութեան և երկրի ազդեցութիւնը քերթողի վրայ——մեծ նշանակութիւն չունեն։ Տէնը ինքն արդէն վաղուց է, որ համարեա թէ հրաժարուել է իր այդ ենթադրութիւնից, որը երբեմն նրան ծայրայեղութիւնների էր հասցնում։

Սակայն ինչումն է Հեննիկէնի իդէաների դրական կողմը։ Մենք գիտենք, թէ հարկաւոր է ուսումնասիրել հասարակութիւնը ղեկավարող առանձին անձնաւորութիւնները,— սակայն ինչպէս առաջ տանել այդ գործը։ Ահա հէնց այստեղ Հեննեկէնը ինքնուրոյն է, և նրա գաղափարներն անպայման հետաքրքրական են և թանկագին։

Նրա ուսման ամենաինքնուրոյն, օրիժինալ կէտը՝ էսթէտիկական կրիտիկայի անպայման ընդունելն է։ Հեննեկէնի հիմնակէտը այդպէս է որոշվում՝ «բնաւին չկայ մի այնպիսի էսթէտիկական յատկութիւն, որ չունենար իրան համապատասխան հոգեբանական յատկութիւն»։ Ուստի Հեննեկէնը պահանջում է, որ ամեն մի գրուածք քննուի մանրամասնաբար թէ ներքին և թէ արտաքին յատկութիւնների կողմից. այստեղ ամեն բան կարևոր է՝ սիւժէտի, առանձին երևոյթների, մետաֆորների յատկութիւնը, մինչև անգամ կէտադրութիւնը։ Կրիտիկոսը, այսպէս վարուելով, ուզում է էսթէտիկական կրիտիկայի բոլոր հիմունքները արծարծել հոգեբանական լեզուով։ Որքան շատ հաւաքած կ՚լինեն էսթէտիկական յատկանիշներ, այնքան լիակատար կ՚լինեն մեր կարծիքները հեղինակի ներքին աշխարհի մասին։ Հեղինակի անձնաւորութիւնը կ՚պարզուի իր բոլոր մանրամասնութիւններով։

Բայց դա դեռ քիչ է՝ հէնց այստեղ էլ կ՚պարզուի և նրան (քերթողին) շրջապատող հասարակութեան, աւելի ճիշտ նրա ընթերցողների հոգևոր բնութիւնը։ «Գեղարուեստական գրուածքը,——ասում է Հեննեկէն,—միմիայն նրանց վրայ է ազդեցութիւն գործում, որոնց պատկերը ցոլացնում է իր մէջ»։ Հասկանալի է, որ կրիտիկոսը օրինաւոր է համարում վերագրել գրուածքի յարգող-

ների այն յատկութիւնները, պակասորդութիւնները, ծայրայեղութիւնները և առհասարակ այն բոլոր աչքի ընկնող գծերը, որոնք քերթողի կազմակերպութեան մասերն են կազմում:

Այդ դրութիւնը մնում է չապացուցուած. . .

Այսու ամենայնիւ Հեննեկէնի քննադատութեան այդ մասը, որտեղ կրիտիկոսը ձգտում է կենդրոնացնել հետազօտողի ուշադրութիւնը հեղինակների և գեղարուեստագէտների աշխատութեանց վըրայ, վերին աստիճանի թանկագին է: Բոլորովին նոր են և արդարացի Հեննեկէնի հայեացքները գրուածքների էսթէտիկական յատկութիւնների վերաբերմամբ: Ասենք թէ ի վաղուց յայտնի է «le style c'est l'homme» ճշմարտութիւնը: Այդ մենք լսել ենք դեռ կեղծ կլասիկներից՝ 200 տարի առաջ, սակայն այդ ճշմարտութիւնը նրանց մօտ մի առանձին, ինքնուրոյն դեր էր խաղում: Այժմ Հեննեկէնը ուզում է էսթէտիկան անքակտելի կերպով կապել հոգեբանութեան հետ և մէկը ծառայեցնել միւսին: Մի խօսքով՝ կամենում է ստեղծել մի նոր գիտութիւն—էսթօփսիխոլօգիա. . .

Այդ նոր գիտութիւնը ոչինչ ընդհանուր բան չունի առաջուայ մաքուր էսթէտիկայի հետ: «Սովորական քննական կարծիքների և էստօփսիխոլօգիական եզրակացութիւնների մէջ,—ասում է կրիտիկոսը,—գտնվում է այնպիսի մի անդունդ, որ առհասարակ բաժանում է սովորական, համաքնակութեան մէջ գործածուող որոշումները այն որոշումներից, որոնց տալիս է մեզ երկրաչափութիւնը կամ մի որ և է այլ գիտութիւն: Եզրակացութիւնների իսկականութեանը (ТОЧНОСТЬ) համապատասխանում է և ծաւալը՝—հաստակութեանը յարմարեցրած էստօփսիխոլօգիան կ'միանայ պատմութեան հետ և 'ի վերջոյ կ'տայ մեզ «գիտութիւնների գիտութիւն». Նամանաւանդ ֆիզիօլօգիայի և անթրօպոլօգիայի աստիճանաբար զարգանալն աւելի և աւելի կօգնի էստօփսիխօլօգիայի եզրակացութիւնների ճշտութեանը: Եւ հռչակաւոր հեղինակների ու գեղարուեստների գրուածքները կ'լինեն այդ բոլորի հիմնակէտերը. . .

Այդ մտքերն, 'ի հարկէ, անպայման և «գիտնական» ճշմարտութիւններ չեն: Յենուելով Հեննեկէնի սիրած գաղափարի վրայ—թէ տաղանդը ժառանգական երևոյթ է և անպայման ինքնուրոյն—դեռ ես կարելի է կասկածել՝ կարելի՞ է, արդեօք, «մեծ մարդկանց հոգեբա-

նութիւնից» անցնել դէպի «ժողովրդի հոգեբանութիւնը». և եթէ մենք ուսումնասիրենք քերթողի հոգին, արդեօք, կ'ա՞յ նա մեզ լիակատար և մանրամասն հասկացողութիւններ նրա ընթերցողների հոգու մասին: Սակայն Հէննեկէնը արդար է, ասելով թէ՝ ժամանակակից նատուրալ կրիտիկան ծայրայեղութեան է հասցրած: Տէնի և նրա անշնորհ հետևողների կրիտիկան հետևաբար և կուրօրէն ցածացնում է անհատականը և ինքնուրոյնը (личное и оригинальное) *պատմութեան մէջ մինչև «անհրաժեշտ հետևանքներ»: Պատմական քննադատութիւնը ոչնչացնում էր հերոսներին, զօրախտաները շանթահարում էին քերթողի և նկարչի անձնաւորութիւնը և այդ անձնաւորութիւնը կամենում էին ստրկացնել հեղինակի առարկայի հետազօտութիւններին: Գրականութիւնը պատրաստ էր կորցնել ոգևորելու և ազնուացնելու այն ընդունակութիւնը, որ ստանում է գրուածքը քերթողի կեանքի անձնական տխրութիւնների, ուրախութիւնների և վառ հոգու ազդեցութիւնից, — մի հոգի, որ պէտք է նշմարուի գրուածքի ամեն մի երեսում... Հէնց այդ հոգու պաշտպանն էլ հանդիսացաւ Հէննեկէնը: Դժբախտաբար նա չի կապել իր կրիտիկական միտքը Իբսէնի գրուածքների հետ, որի գրականական գործունէութիւնը շատ և շատ համապատասխանում է կրիտիկոսի արտայայտած կարծիքներին: Նորվեգացի դրամատուրգը կարող էր տալ կրիտիկոսին շատ թանկագին իլլիւստրացիաներ, հաստատել նրա եզրակացութիւնները և ապացուցել Հէննեկէի փայփայած այն գաղափարը թէ՝ գրողներն իրանց հոգևոր հայրենիքը շատ անգամ գտնում են իրանց ծննդավայրից դուրս:*

Այժմ մեզ պարզ է Հէննեկէնի գաղափարների իմաստը և նշանակութիւնը: Նրանք էապէս ուղղում են ժամանակակից կրիտիկայի ենթադրութիւններն և եզրակացութիւնները, մինչև անգամ շատ պատմական և հասարակական հարցեր: Նրանք, կարելի է ասել, վերադարձնում են մարդուն մարդկայինը, պաշտպանելով անձնաւորութեան իրաւունքները թէ՝ կեանքի և թէ՝ ստեղծագործութեան (творчество) *մէջ: Նրանք այն էնտուզիազմն են վերադարձնում գրականութեանը և գեղարուեստականութեանը, որ միշտ թագաւորել է մարդկանց սրտերի ու մտքերի վրայ:*

ՍՏ. ԳՐԻԳՈՐԵԱՆ.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Իվան Տուրգէնէվ՝ «Արձակ բանաստեղծութիւններ»։ Թարգմանեց Ալէքսանդր Ծատուրեան։ Մոսկուա, 1895 թ.։ Գինն է 50 կոպ.։

«Ամէն ինչ կանցնի, ամէն ինչ կանհետանայ, և՛ բարձր պաշտօնը, և՛ իշխանութիւնը, և՛ համապարփակ հանճարը, ամէն ինչ կ՚խորտակուի, մուխի կ՚դառնայ, . .

Все великое земное
Разлетается какъ дымъ...,—

ասում է Տուրգենևը իր «Гамлетъ и Донъ-Кихотъ» *ճառի մէջ,—բայց բարի գործերն երբէք չեն ոչնչանայ. նրանք ամենափայլուն գեղեցկութիւնից էլ երկարակեաց են. «ամէն ինչ կանցնի, ասել է ս. առաքեալը, մենակ սէրն է, որ միշտ կենդանի կ՚մնայ»։*

Այդ միտքը Տուրգենևը կրկնել է մի քանի անգամ. դա Տուրգենևի պօէզիայի «քրիստոնէական իդէալն»[1] *է, որ նա արտայայտել է նոյնպէս Լիզայի անձնաւորութեան* («Дворянское гнѣздо»), «Разсказъ отца—Алексѣя» *վէպիկի վերջին տողերի մէջ, մասամբ էլ* «Отцы и дѣти» *վէպի մի քանի էջերում։*

Նոյն միտքը՝ շատ գեղեցիկ կերպով՝ Տուրգենևը յայտնել է և «Ճնճղուկ» («Воробей») *արձակ բանաստեղծութեան մէջ։ Ճնճղուկի*

---

1) *А. Незеленовъ:* «Тургеневъ въ его произведеніяхъ». СПБ. 1885 г.

ձագուկը վայր է ընկել բնից և պէտք է զոհ գնայ ագահ շան ագահ ախորժակին։ Բայց մայրը օգնութեան է հասնում։ Նա չի վախենում այդ ահագին կենդանուց. նա կ՚պաշտպանի իր զաւակը մինչև արեան վերջին կաթիլը։ Շունը շուարում է փոքրիկ արարածի այդ քաջութիւնից. նա կանգ է առնում... նա սկսում է ետ քաշուել. . .

«Ես շտապեցի ետ կանչել շփոթուած շնիս, — պնդում է որսորդը,—և խորին ակնածութեամբ հեռացայ։

«Այո, մի՛ ծիծաղէք։ Ես այդ րոպէին խորին ակնածութիւն էի զգում դէպի այդ փոքրիկ հերոս թռչունը, դէպի նրա սիրառատ անձնազոհութիւնը։

«Սէրը, մտածում էի ես, աւելի զօրեղ է, քան մահն ու մահուան երկիւղը։—Միայն նա՛, միայն սէ՛րն է, որ պահում ու շարժում է կեանքը»։

Նոյն անձնուրաց սէրը, միայն աւելի բարձր դրդումներից ծագած, սէր դէպի «կարօտեալներն» առհասարակ, մենք տեսնում ենք «Իւ. Պ. Վրեվսկայեայի յիշատակին» նուիրած բանաստեղծութեան մէջ («Памяти Ю. П. Вревской»)։

«Քնքո՜յշ, հեզի՜կ սիրտ... և այդպիսի՜ ոյժ, այդպիսի՜ անձնազոհութիւն,—ասում է հեղինակը այդ կնոջ մասին։—Օգնութեան հասնել կարօտեալներին.. դրանից աւելի նա ուրիշ բախտաւորութիւն չէր զգում... և չզգաց էլ մինչև վերջը։ Ուրիշ ամեն տեսակ բախտաւորութիւն միայն անցաւ նրա մօտով։ Բայց նա այդ բանի հետ վաղուց հաշտուել է—և ողջ էութեամբ բոցավառուած անշէջ հաւատի կրակով, նա իւր անձը նուիրել էր մերձաւորներին ծառայելու գործին»։

Այդպիսի մարդասիրութիւն, գթասրտութիւն և եղբայրսիրութիւն երևում է Տուրգենեվի «արձակ բանաստեղծութիւններ»-ից շատերի մէջ։—«Մուրացկան» («Нищій») ոտանաւորում հեղինակը պատմում է, թէ ինչպէս մի մարդ, ոչինչ չունենալով տալու ողորմութիւն աղերսող աղքատին, պինդ սեղմում է նրա ձեռքը և փոխարէնն էլ ստանում իսկոյն։—Կարդացէք այդ գեղեցիկ ոտանաւորը.

«Ես անցնում էի փողոցով... Ինձ կանգնեցրեց մի ծեր, հալից ընկած մուրացկան։

«Աչքերն արտասուալից, ուռած ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մարմնի վրայ անմաքուր վէրքեր... Օ՜, ինչ այլանդակ կերպով մաշել, կերել էր այդ անբախտ արարածին աղքատութիւնը։

«Նա ինձ պարզել էր իւր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկուած ձեռքը... Նա հառաչում էր, նա խեղդուած ձայնով ողորմութիւն էր աղերսում։

«Գրպաններս սկսեցի տակնուվրայ անել... Բան չգտայ — ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյն իսկ թաշկինակ... Հետս ոչինչ չէի առել...

«Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երերվում ու ցնցվում էր։

«Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջուն, այդ կեղտերով ծածկուած ձեռքը... «Թողութիւն արա, եղբայր. ես ոչինչ չունեմ»։

«Մուրացկանն իւր կարմրատակած աչքերն յառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տուին և նա էլ իւր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները։

«Է՛հ, ի՞նչ արած, եղբայր,—ծամծմեց նա,—դրա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»։

«Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից»։

Բացի այդ ընդհանուր, համամարդկային գաղափարներից՝ «արձակ բանաստեղծութիւնների» մէջ մենք կարող ենք գտնել նոյնպէս նոյն իսկ ռոմանիստ-բանաստեղծի կեանքից վերցրած մի քանի ինքնակենսագրական գծեր։ Նա խօսում է այն անպատուութիւնների մասին, որ մի ժամանակ անշնորհակալ հասարակութիւնը թափում էր նրա գլխին։ Խօսում է իր կեանքի երջանիկ, ուրախ օրերի մասին, երբ երիտասարդ սերնդի համակրութիւնը դէպի ռոմանիստը հասել էր գրեթէ իր գագաթնակէտին («Քար» — «Камень», և այլն)։

«Դուք տեսե՞լ էք,—հարցնում է հեղինակը,—ծովափին ընկած հին, գորշագոյն քար, երբ գարնան արև օրին, ջրի մակընթացութեան ժամանակ, կենդանի ալիքներն ամեն կողմից վրայ վազելով դէպի այդ քարը, նրան ծեծում, նրա հետ խաղում ու գուրգուր-

վում են. տեսել էք, յետոյ ինչպէս յանկարծ նրա մամռապատ գլխին թափվում է դիւրափխրուն, մարգարտաշաղ, փայլուն փրփուրը:

«Քարը մի և նոյն քարն է մնում: Միայն նրա խորշոմած երեսին դուրս են ցոլում վառվառուն գոյներ:

«Այդ գոյները վկայում են այն անցած-գնացած հեռաւոր ժամանակների մասին, երբ հալուած հատաքարը դեռ նոր էր սկսել կարծրանալ և ամբողջապէս վառվում էր հրափայլ գոյներով:

«Այդպէս էլ իմ ծերացած սիրտը քիչ առաջ ամեն կողմից պաշարեցին մատաղ, կանացի սրտեր — և նրանց գուրգուրանքից, նրանց փաղաքշալի շփումից նա նորից բոցավառուեց. Նրա վրայ դուրս ցոլացին վաղուց արդէն մարած, չքացած ներկերը. երևան եկան անցած, շիջած կրակի հետքերը:

«Ալիքներն յետ նահանջեցին... բայց ներկերը դեռ չեն աղօտացել, թէև նրանց չորացնում է խստաշունչ քամին»:

Մենք մատնացոյց արեցինք «արձակ բանաստեղծութիւնների» երկու յատկութիւնների վրայ՝ — համամարդկային երեւոյթներ և ինքնակենսագրական գծեր: Մենք, 'ի հարկէ, նոր բան չենք ասել: Այդ ամենը մեր ընթերցողը կարող է գտնել այս կամ այն քննադատի՝ Տուրգենեվին նուիրած գրքերի կամ յօդուածների մէջ: Մեր միակ նպատակն է հետաքրքիր անել պ. Ծատուրեանի թարգմանած գրքոյկը հայ ընթերցողի համար:

Մենք չենք իմանում, թէ ի՛նչ խօսքերով դիմենք պ. Ծատուրեանին և թէ ի՛նչ խրախուսանքներ տանք նրան նրա արած թարգմանութիւնների համար: — Ինքը Տուրգենեվն էլ շատ լաւ էր հասկանում իր «արձակ բանաստեղծութիւնների» («стихотворенія въ прозѣ») մեծ նշանակութիւնը, ինչու և ասել է նրանց մասին՝ «Пусть читатель не пробѣгаетъ этихъ *стихотвореній въ прозѣ* сподрядъ... Пусть онъ читаетъ ихъ въ раздробь: сегодня одно, завтра—другое,—и которое нибудь изъ нихъ, можетъ быть, заронетъ ему что-нибудь въ душу»... Թո՛ղ ընթերցողն ուշադրութեամբ և լրջօրէն կարդայ այդ բանաստեղծութիւնները, կաւելացնենք մենք, թո՛ղ ամեն մէկը դրանցից բարոյական սերմեր ցանի ընթերցողի սիրտը: — Այդ «արձակ բանաստեղծութիւնները», այդ senilia — բարոյական խորիմաստ զրոյցներ են:

«Բանաստեղծութիւնների» թարգմանութեան մասին մենք ոչինչ չենք ասիլ։ Եթէ գովել, դա կ՚լինի աւելորդ մի բան, որովհետև ով չգիտէ, թէ պ. Ծատուրեանը շատ գեղեցիկ թարգմանութիւններ է անում. այդ լսում ես, համարեա, ամէն կողմից, այդ նոյն էլ պընդում են մեր այս նկատողութեան մէջ բերած պ. Ծատուրեանի «Արձակ բանաստեղծութիւններ» թարգմանութիւնների քաղուածքները։ Յանդիմանելու էլ պ. Ծատուրեանի թարգմանութիւններն ոչ պատճառ, ոչ էլ իրաւունք ունենք, որովհետև ոչ մի անգամ թարգմանիչը չի մեղանչել թարգմանական ճշտութեան և հայերէն լեզուի դէմ։ — Մեզ մնում է միայն ցանկալ, որ պ. Ծատուրեանը աւելի և աւելի յաճախ երևայ գրականական ասպարիզում իր թարգմանութիւններով։ Մենք անհամբեր սպասում ենք նրա «Ռուս բանաստեղծներ» խորագրով թարգմանական աշխատութիւնների լոյս տեսնելը։

ՄԵԼԻՔ.

1896 թ. սեպտեմբեր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.

«Նոր-Փորձ»-ի խմբագրութիւնը իր պարտականութիւնն է համարում դնել ընթերցողի առաջ հետեւեալ հանգամանքները։

«Նոր-Փորձ»-ի առաջին գրքի նիւթը ժողոված պատրաստ էր դեռ անցեալ 96 թ.-ի նոյեմբեր ամսին, և նրա տպագրութիւնը այդքան ետաձգուեց խմբագրութիւնից անկախ պատճառներով։ Այնպէս որ այդ առաջին գրքի սկզբնական բովանդակութիւնը պէտք է ենթարկէինք մի քանի փոփոխութիւնների։ Հայ թերթերում զետեղած մեր Նամակ-յայտարարութեան մէջ մենք խոստացել էինք մօտաւորապէս 8 տպագրական թերթ տալ. այժմ այդքան էլ տալիս ենք, միայն թէ ժողովածուի ներկայ բովանդակութիւնը մի քիչ զանազանվում է այն բովանդակութիւնից, որ մենք յայտարարել էինք։ Մենք չկարողացանք այդ առաջին գրքի մէջ քցել և «Կապանքներ» («Тиски») պիէսի գոնէ մի մասը, ինչպէս խոստացել էինք։ Դրա միակ պատճառը տեղի սղութիւնն էր։ Խմբագրութիւնս պ. Հրատարակչի հետ պայման էր կապել միմիայն 8 տպագրական թերթի վերաբերմամբ։

«Նոր-Փորձ»-ի բաժանորդ գրուողներից այն անձինք, որոնք անբաւական են, որ մենք կրճատել ենք մեր ժողովածուի սկզբնական բովանդակութիւնը և կամենում են ետ ստանալ իրենց փողը, թող բարեհաճեն յայտնել մեզ նամակով, ետ ուղարկելով մի և նոյն ժամանակ «Նոր-Փորձ»-ի առաջին համարը։

Այդ համարում խմբագրութիւնս չկարողացաւ տալ գոնէ մէկ Թարգմանական քննադատութիւն (բացի պ. Իվանովի Թռուցիկ նկա-

տողութիւնից) ոչ թէ այն պատճառով, որ չունէր այդպիսի թարգմանութիւններ, այլ բոլորովին ուրիշ պատճառներից ստիպուած։

Մեր գործին աշխատակցել ցանկացող անձանց խոնարհաբար խնդրում ենք՝ բան ուղարկելիս՝ գլխաւորապէս կրիտիկական գրուածքներ ուղարկեն (ինքնուրոյն թէ թարգմանական—մի և նոյն է). վէպը, եթէ ինքնուրոյն է և 2 տպագրական թերթից (32 մեծադիր էջերից) աւելի չէ, նոյնպէս յարմար է. իսկ թարգմանական վէպերից միմիայն այնպիսիները կընդունուեն, որոնք յայտնի հեղինակների գրուածքներից են և 15—20 էջերից աւելի չեն։

Ձեռագիրները կ՚վերադարձնենք միմիայն այն դէպքում, եթէ հեղինակը այդ մասին մեզ իմաց տայ նամակով և ուղարկի պահանջելի ծանապարհածախսը։

՚Ի վերջոյ—խմբագրութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը պ. բժիշկ Սիմէօն Տէր-Նազարեանցին, որ յանձն առաւ իր վրայ վերցնել «Նոր-Փորձ»-ի տպագրական ծախսերը։ Խմբագրութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը և այն հայ թերթերին, որոնք ձրիաբար տպագրել են իրանց սիւնակների վրայ տեղեկութիւններ «Նոր-Փորձ»-ի հրատարակութեան և բովանդակութեան մասին։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

ԿԱՐԱՄԶԻՆ Ն. Մ. Թշուառ Եղիսաբէթ. վէպիկ. թարգմանեց Դաւիթ Տէր-Դաւթեանց։ Թիֆլիս. 1891 թ., գինն է 10 կոպ.։ Վաճառվում է Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

ԼԵԲԲՈԿ ՋՈՆ. Հարիւր ամենալաւ գրքեր հին և նոր ժամանակի. թարգմ. ռուսերէնից Արշակ Եղիգարեան. Թիֆլիս. 1895 թ., գինն է 8 կոպ.։

ԾԵՐԷԹԷԼԻ Գ. Մարգ-առիւծ. ռուսպելական պօէմա (պատկերազարդ). փոխադրեց Դաւիթ Տէր-Դաւթեանց. Թիֆլիզ. 1895 թ., գինն է 20 կոպ.։ Օտար քաղաքներից պէտք դիմեն այս հասցէով՝ Тифлисъ, Авлабаръ, Винный подъемъ, магазинъ № 30, Іосипу Осипянцу.

БАХЧИСАРАЙЦЕВЪ Г. Краткій повторительный курсъ Географіи Россійской Имперіи. Составленъ по программамъ средне-учебныхъ заведеній и кадетскихъ корпусовъ. Москва. 1895 г., цѣна 20 к. *Ցանկացողները պիտի դիմեն՝* Москва, Кузнецкій мостъ, книж. магазинъ Вольфъ.

ԴԻԿԿԵՆՍ Չ. *Վերադարձած յանցաւորը. Թարգմ. ռուսերէնից Արշակ Եղիազարեանց. Թիֆլիս.* 1896 *Թ., գինն է* 8 *կոպ.։*

ԲԵՕՐՍՕՆ ԲԵՕՐՆՍՏԵՐՆԷ. *Միակնութիւն և բազմակնութիւն, հրաւէր հիւսիսային երիտասարդութեան, Թարգմ. ռուսերէնից Արշակ Եղիազարեան. Մոսկուա,* 1896 *Թ., գինն է* 30 *կոպ.։ Ցանկացողները կարող են ստանալ «Նոր-Փորձ» ի խմբագրութիւնից։*

ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ ա) *Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ։ Վաղարշապատ,* 1896 *Թ., գինն է* 2 *րուբլի։*

» » բ) *Նկարագիր Շամախւոյ թեմի. Թիֆլիս,* 1897 *Թ., գինն է* 1 *րուբլի* 25 *կոպ.։*

«Նոր-Փորձ»-ի երկրորդ գիրքը իր մէջ պարունակելու է, 'ի միջի այլոց, հետևեալ գրուածքները՝ 1) *Ա. Արփիարեան «Սկեսուրը» (գիւղական բարքերից)։* 2) *Ալ. Ծատուրեան Բանաստեղծութիւններ։* 3) *Եր. Մնացական «Բարոյական դուալիզմ» (էմին Տէր-Գրիգորեանի «Դամոկլեան սուր» դրամայի քննութիւնը)։* 4) *Բրանդէս «Զուդերման» (քննական տեսութիւն) Թարգմ. Ալ. Ծատուրեան։* 5) *Յովհաննէս Շահնազարեան «Անմեղ զոհեր» (շարունակութիւն և վերջ)։*

Երրորդ գրքի բովանդակութեան մասին տեղեկութիւնները իր ժամանակին կ'յայտարարենք հայ թերթերով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ.

1897 *Թ.,* IX,

ՄՈՍԿՈՒԱ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ"

(25-դ տարի)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ.

«Մշակ»-ի տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 *րուբլի, տասն և մէկ և տասն ամսուանը՝* 9 *ր., ինն և ութ ամսուանը՝* 8 *ր., եօթ ամսուանը՝* 7 *ր., վեց ամսուանը՝* 6 *ր., հինգ ամսուանը՝* 5 *ր., չորս ամսուանը՝* 4 *ր., երեք ամսուանը՝* 3 *ր., երկու ամսուանը՝* 2 *ր., ամսական՝* 1 *րուբ։*

Գրուել «Մշակ»-ին կարելի է խմբագրատանը։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція «Мшакъ». *Իսկ արտասահմանից* Tiflis, Rédaction «Mschak».

„ԱՐԾԱԳԱՆՔ"

(16-դ տարի)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ.

Բաժանորդագրութիւնը ընդունվում է խմբագրատանը (Վելեամինովսկի փողոց, № 22, *տուն Խանդալամեանի) և «Կենդրոնական Գրավաճառանոցում»։*

Բաժանորդագինն է թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում տարեկան 10 *րուբլի,* 6 *ամսով* 6 *ր.,* 1 *ամսով* 1 *րուբլի։*

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція «Ардзаганкъ», *իսկ արտասահմանից՝* Tiflis. Rédaction du jurnal arménien «Ardzagang».

„ՆՈՐ-ԴԱՐ"

(14-դ տարի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

(Տարուայ ընթացքում լոյս կ'տեսնի առնուազն 220—225 *անգամ).*

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 *րուբլի, վեց ամսուանը* 6 *ր., Թիֆլիսից դուրս ամիսը* 1 *ր.* 50 *կ., հատով դուրսը՝* 7 *կ., Թիֆլիսում՝* 5 *կոպ.։ Եւրոպայի, Թիւրքիայի և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան՝* 40 *ֆրանկ։ Ամերիկացի բաժանորդները վճարում են տարեկան՝* 8 *դոլար։ «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի* 1-*ից միայն։ Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանը այս հասցէով՝* Тифлисъ, въ редакцію ежедневной газеты «Норъ-Даръ», *իսկ արտասահմաից՝* Tiflis (Caucase), Rédaction du jurnal «Nor-Dar».

„ՄՈՒՐՃ"

(9-դ տարի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ.

Տարեկան գինն է 10 *րուբլի։ Ուսուցիչների և ուսանողների համար* 8 *րուբլի։ Վճարել կարելի է նաև մաս-մաս, սկզբում* 5 *(կամ* 4*) ր., մնացեալը լրացնելով մինչև յունիսի վերջը։ Բաժանորդագրութեան համար դիմել խմբագրութեանը՝* Тифлисъ, въ редакцію журнала «Мурчъ», *իսկ արտասահմանից՝* Tiflis, Rédaction de la Revue «Mourtch».

„ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ“

Աղբիւրի տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆրանկ). Տարազինը 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կոպ., Աղբիւրը 25 կ.։ Պրեմիաները ստանում են Աղբիւր-Տարազ միւնոյն հասցէով գրուող բաժանորդները, վճարելով մէկ րուբլի։ Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. «Агбюръ-Таразъ», կամ՝ Tiflis (Caucase) Rédaction de jour. «Agbur-Taraz».

ՀԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ եւ ՊԱՏՄԱԿԱՆ

Բաժանորդագինն է 3 րուբլի։ Իւրաքանչիւր գիրքն առանձին 2 րուբ.։

Հասցէն՝ Москва, Мясницкая, д. Ермаковыхъ, М. Бархударянъ.

Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

				ր. կ.
1.	Հանդէս Գրականական և Պատմական	I	գիրք (սակաւաթիւ) . .	3. —
2.	» » »	II	» » . .	3. —
3.	» » »	III	»	1. 50
4.	» » »	IV	»	1. 50
5.	» » »	V	»	2. —
6.	» » »	VI	»	2. —
7.	» » »	VII	»	2. —
8.	Արեւելեան Աւանդութիւն, Թարգմանութիւն Եւրէնինովից . . .			—.05
9.	Տաճիկ Փաշա, բուլգար միանձնուհու յիշատակարանը, փոխադրեց Գ. ք. Մկրտումեան			—.15
10.	Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց, կենսագր., Եր. Շահազիզի .			—.60
11.	Լորդ Բայրըն, Դօն-Ժուան, երգ առաջին, հեղինակի պատկերով. Թարգմանութիւն Լ. Աբրահամեանի			—.50

Յանկացողները դիմում են հետեւեալ հասցէով. Москва, Мясницкая, д. Ермаковыхъ, М. Бархударянъ.